

# ՄԱՐԶԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆ

السنة الخامسة والأربعون - العدد ٤٣٦ - Vol. XXXXV N° 436

مارزيك  
مجلة رياضية شهرية  
تصدرها جمعية الهومتنمن بيروت  
**marzig**  
SPORTS MAGAZINE



Համահայկական ձմեռային երկրորդ խաղեր



Հ.Ը.Ը.Ը. ի  
շքանշաններու  
բարեփոխուած  
կանոնագրութիւնը



Հ.Ը.Ը.Ը.ական գործն ու խօսքը իրարու միացնող կամուրջը 45 տարեկան

JOIN HOMENTMEN ON ITS FIRST EVER RIVER CRUISE



# HOMENETMEN RIVER CRUISE 2026

Sail away for 7 nights on the legendary Danube River

Embark in Vilshofen, Germany July 13, 2026

Disembark in Budapest, Hungary July 20, 2026

We will be visiting seven cities in four European countries on the famous ship AmaBella, operated by the award-winning river cruise company AmaWaterways.

Daily entertainment and excursions, such as Bus Tours, Bike Tours, Hikes and Special Interest Tours and much more!



Book your All-Inclusive room today  
by scanning the QR Code  
or by visiting [cruise.homenetmen.org](http://cruise.homenetmen.org)

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Մարդ գնահատելու լրջութիւնը **2**

## ԱՆԴՐԱՄԱՐԶ

Հ.Մ.Ը.Մ.ի շքանշաններու բարեկիոխուած կանոնագրութիւնը **4**

## ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Հ.Մ.Ը.Մ.ական մամուլը մինչև «Մարզիկ» և «Մարզիկ» պաշտօնաթերթի հրատարակութիւնը **6**



## ԳԵՄՔԵՐՈՒ ՀԵՏ

Յովհաննէս Թ. Հիմողեան, նորահաս սերունդի հայակերտման իխմնադիր Հ.Մ.Ը.Մ.ականը **10**

## ՊԱՏԳԱՎ

Հ.Մ.Ը.Մ.ականը սովորական միութիւն չէ, դպրոց է **12**

## ՅՈՒՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ականը տկարութիւն, նահանջ, ձախողութիւն եւ անձնատուր ըլլալ չի ճանչնար **13**

**4**

**6**

**7**

**10**

**12**

## ՀԱՍԱՀԱՅԿԱՆ ԽԱՂԵՐ

Համահայկական ձմեռնային երկրորդ խաղերը **17**

## ՄԱՍՆԱՅԻԼԵ

ՄԱՍՆԱՅԻԼ



## ՄԵՐ ԿՈՐՈՒՏԱՆԵՐԸ

**60**



Marzig sports magazine is published by Homenetmen Central Committee

Sevan Building, Rue 77, Sector 4,  
Bourj Hammoud, Beirut, Lebanon.

Tel: 961 1 248043, 961 1 260117

E-mail:marzig@Homenetmen.org  
Homenetmen.org

Խմբագիր: Վիկեն Ավագեան (vicken.avakian@homenetmen.org)

Խմբագրական կազմ: Մեւան Նազարեան, Սիոզի Օհանեան, Շանթ Ժամկոչեան, Ռաֆֆի Սիլահեան, Հուրիմա Պերպերեան, Վարդուկ Ֆրոնզեան եւ Սիոզան Սարգսեան:

Վարչական կազմ: Արօ Մոսիկեան, Սիլվա Սաղթրեան, Հրայր Սեթոյեան, Կարօ Ապաձեան, Տիրան Շահինեան, Հերի Զարարեան, Ցողուն Քէշիշեան:

Էջաղում եւ ընդհանուր ձեւաւորում: Գօգօ Հաւանձեան, Կողքի պատրաստութիւն: Flow / Hrant Unicess, Տպագրութեան պատրաստութիւն: Photogravure Paklayan, Տպագրութիւն: Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան, Պէյրութ, Լիրանան:

Բաժանորդագրութիւն: «Մարզիկ» կը հասնի աշխարհի 25 երկիրներու բաժանորդներու: Տարեկան բաժանորդագրութեան սակ ծջուած է՝ Լիրանան 400,000 լ.ո. Միջին Արեւելեան եւ Երոպական երկիրներ 65 \$, Մ. Նահանջներ եւ Աստրալիա 75 \$: Լիրանանի մէջ թերթին հատավածուի սակն է 100,000 լ.ո.: Ցրում: «Մարզիկ»ի ցրումը Լիրանանի մէջ կը կատարուի յասուկ ցրուչով: Թերթը կարելի է սուանալ նաև «Համազգային»ի գրախանութէն: Լիրանանի դուրս թերթը կը ստացուի «Liban post»ի միջոցով:

«Մարզիկ» կը հրատարակուի Հ.Մ.Ը.Մ.ի Կենտրոնական Վարչութեան կողմէ - Հասցե: «Մեւան» շենք, թիւ 77 փողոց, թիւ 4 հատուած, Պուրճ Համուտ, Պէյրութ, Լիրանան 9611248043, 9611260117 marzig@Homenetmen.org Homenetmen - Հ.Մ.Ը.Մ. www.Homenetmen.org

## ՄԱՐԴ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ԼՐՁՈՒԹԻՒՆԸ

**Կ**ար ժամանակ, երբ ազգովին չափազանց ծլատ էինք մեր գնահատանքին մէջ: Կը դժուարանայինք շնորհակալութեան խօսք մը իսկ ըսել արժանաւորներու՝ անոնց ողջութեան կամ յետմահու: Լաւ դամբանական մը առաւելագոյն դափնեպսակը կը հանդիսանար երախտաւորներուն:

Մարդիկ կը գործէին առանց ակնկալութեան: Մինչեւ մահ իրենց միութեան, համայնքին ու ժողովուրդին հաւատարմօրէն ծառայողները իրենց առաւելագոյն բաւարարութիւնը կը գտնէին հոգեկան գոհացումի մէջ միայն: Իրենց հաւատքի խորացումին մէջ: Իրենց աշխատանքի արդինաւորման մէջ:

Հիմա ժամանակները, բարքերն ու սովորութիւնները փոխուած են: Ծախն ու գնահատանքը փնտռուած բաներ են, շրանշանն ու պարգեւատրումը ընթացիկ երեւոյքներ են:

Են քանի ընթացքը յստակ է եւ ժամանակի անիւր կարելի չէ ես շրջել, կ'արժէ յիշեցնել, որ երէ պարգեւատրումներ պիտի կատարուին, ուշադիր պէտք է ըլլալ, որ պարգեւատրեալներուն ընտրութիւնը պարագայական ու հապճեալ ձեւով չըլլայ, ո՛չ ալ կողմնակի հաշիւներու, շահերու կամ կանխակալ տրամադրութիւններու արդինք ըլլայ:

Արդարեւ, մեր օրերուն շատեր կ'անդրադառնան ինչ-ինչ հաշիւներով կատարուած պարգեւատրումներու, բայց քիչեր միայն բարձրածայն կը խօսին այս սխալին սրբագրութեան մասին, համոզուած ըլլալով որ սխալի կրկնութեան պարագային՝ տուժողը կ'ըլլայ ոչ թէ պարգեւատրող մարմինը, այլ այդ մարմինը ներկայացնող ամբողջ միութիւնը կամ կազմակերպութիւնը:

Կը պատահի նաեւ, որ մարմիններ յաճախ անտեղի աճապարանքի մը մատնուած ըլլալու տպաւորութիւնը կը ձգեն, երբ ինքնասիրութեան եւ փառասիրութեան տրամադրութիւններէ տարուած իրարու ետեւէ մարդ կը պարգեւատրեն, հազիւ քանի մը տարուան ծառայութիւն ունեցողներ շրանշանի կ'արժանացնեն: Մինչ ուրիշներ խնամի-ծանօթ-բարեկամ պարգեւատրելու խաղը կը խաղան...:



Պէտք է ընդունիլ, որ պարգեւատրումները նաև իրենք պէտք է լրջախտի, արդար եւ անշահախնդիր մարդիկ ըլլան, որպէսզի համարութեան ցոյց տան, որ պարգեւատրեալի մը փառք ու պատի ընծայելը լոկ հաճելի վայրկեաններ անցընելու հարց չէ, շնորհակալական խօսքեր կամ երախտագիտական զգացումներ ըսելու նպատակով չէ, եւ ոչ ալ՝ զանոնք սիրաշահելու համար է:

Պարգեւատրումները առիթներ են համարութեան ներկայացնելու վատակաշատ, տիպար եւ օրինակելի մարդու մը ծառայութեան աշխարհը, սերունդը եւ ժամանակաշրջանը: Առիթ են նաեւ անոր միջոցով որոշ աշխուժացում եւ կրով ներշնչելու շրջապատին, իրարմով հարատանալու եւ մարդկային ու հոգեկան կապերը ամրացնելու:

Ի վերջոյ, իրաքանչիւր պարգեւատրեալի ետին կայ, պէտք է ըլլայ, պատկերը խոնարի հերոսի մը, անծանօթ զինուրի մը: Մարդիկ միայն պատերազմի դաշտին վրայ չեն զոհուիր, յաճախ ամբողջ կեանք մը կը զոհեն վսեմ նպատակի մը իրականացնան համար:

Այս պատճառով ալ անարժան կերպով պարգեւատրումները բարիք բերելու տեղ վնաս կը պատճառեն զիրենք պարգեւատրումներուն: Մինչ արժանաւոր պարգեւատրեալ մը կրնայ շարժում ստեղծել իր շուրջ, հետևողութեր ունենալ, երիտասարդութեան բարի օրինակ ծառայել եւ, ինչու չէ, իրեն նմանելու ցանկութիւնը յառաջացնել շատերու մօս:

Իսկ թէ ի՞նչ չափանիշներ ամբողջացնող մարդ մը արժանի է պարգեւատրումի:

Գլխաւոր չափանիշը անոր կատարած գործին տարութիւնն ու տեսողութիւնն է: Միութենականի մը պարագային միութեան ճամրով համայնքին, ազգին ու հայրենիքին ունեցած երկար տարիներու ներդրումն է: Երբ մարդ իր ամբողջ կեանքին ընթացքին կարեւոր նպաստ ունեցած է միութեան, ազգին, հայրենիքին, համայնքի կեանքին եւ կամ նորահաս սերունդներու դաստիարակութեան գործին, կ'արժէ նկատի ունենալ զայն: Թեկնածուին գործը պէտք է գնահատել արդարօրէն եւ չտարուիլ ընթացիկ կեանքի մէջ ինքն իր մասին բարձրացուցած աղմուկէն:



**Պարզեւատրումը** գնահատանքի միակ միջոցը չէ այս պարագային: **Պարզեւատրումը** կը կատարուի կեանքի մէջ միայն մէկ անգամ, մինչդեռ գնահատանքը, մեծարեալի վաստակին հանդէալ յարգանքն ու պատիւր կ'ընծայուին, պէտք է ընծայուին, պարզեւատրման պահէն մինչեւ... մահ, տեսաբար յատուկ վերաբերումի արժանացնելով ենթական միութենական ներքին թէ արտաքին ձեռնարկներու ընթացքին, պաշտօնական հանդիսավոր իններու եւ յորելենական տօնակատարութիւններու ժամանակ:

Պէտք է գնահատել պարզեւատրեալին մարդկային արժանիքները, որոնցմէ կարելի է յիշել՝ զոհաբերութեան ողին, մտաւորական եւ նիւթական պարկեշտութիւնը, համեստութիւնը, նուիրումը, խոնարհութիւնը, զաղափարապաշտութիւնը, յարատել աշխատանքը, անշահախնդրու-

թիւնը, արդարասիրութիւնը եւ այսպէս շարքը կարելի է երկարել: Պէտք է հաստատել նաև, որ անձը չէ զործած իր անձնական շահերէն թելադրուելով կամ գովեստներու արժանացման հեռանկարէն մղուելով:

Միջազգային կազմակերպութիւններ յաճախ յարմար թեկնածու մը չունենալու պարագային՝ զանց կ'ընեն այդ տարուան իրենց պարզեւատրումը: Ինչո՞ւ մենք ալ նոյնը չընենք եւ չափ ու կշիռ չտանք մեզի եւ մեր պատկանած միութիւններուն կամ մարմիններուն:

Արժանավայել կերպով գնահատելու համար մեր մեծերը ունենա՞ն այդ գիտակցութիւնը, որպէսզի օրին մէկն ալ, մեզմէ ետք հասնող սերունդները մեր մասին չըսեն, թէ ափստ՝ ա, անցնող սերունդն ալ չունեցաւ մարդ գնահատելու իրմէ սպասուած լրջութիւնը:

#### Հ.Ս.Ը.Մ. 41 ԾՐՁԱՆԻ ՄԵԶ, 101 ՄԱՄՆԱՃԻՒՂԵՐ ԵՒ 11 ՄԻԱԽՈՐՆԵՐ

**Հայաստան:** «Գ. Յակոբեան» (Երեւան-Վելրուն), «Ը. Քրիսեան» (Երեւան-Մալաթիա), «Տ. Խոյեան» (Երեւան-Զեյրուն), «Վ. Չերազ» (Կիւմրի), Արովեան, «Ա. Մարտիրոսեան» (Հրազդան), «Վարդան Տ.» (Երեւան-Էրեբունի), «Վ. Բախչեան» (Արմավիր), «Վ. Ռոստոմեան» (Էջմիածին), «Յ. Առուստամեան» (Չարենցաւան), Մարտունի (Զօրաքար), «Վ. Չերազ» (Երեւան-Կոմիտաս), «Ա. Չոհրապեան» (Վետի), Մարտունի (Ծովլինար), «Յ. Հինդեան» (Երեւան-Մասիս). **Արցախ:** Ստեփանակերտ. **Վրաստան:** Ախալքալաք, Ախալցխա, Թիֆլիս. **Ռուսիա:** Մոսկովա. **Լիքանան:** Պէյրուր, Զահլէ, Թրիփոնի, Պ. Համուտ, Այսինար, Ծինհ, Անրիլիխա, Ժրտէյտէ, Պատշրիէ, Ռառտա. **Արմիա:** Հալէպ, Դամակոս, Լարաքիա, Գամիշի, Քեսապ, Տերիք (միաւոր). **Ֆարանան:** Ամման. **Պաղեստին:** Երուսաղէմ, Հայքա, Եաֆա. **Եղիպատոս:** Գահիրէ, Աղեքսանդրիա. **Իրաք:** Պատտաս. **Քուէյր:** Քուէյր. **Կիպրոս:** Նիկոսիա. **Յունաստան:** Արէնք, Գորինիա, Սելանիկ. **Անգլիա:** Լոնտոն. **Աւստրիա:** Վիեննա. **Ֆրանսա:** Փարիզ, Վալանս, Սարտէ. **Հոլանդա:** Ալմելո, Ալմար (միաւոր), Առնհեմ. **Գերմանիա:** Միլախի. **Հուէտ:** Վեսքերու, Սուտերքելիխ, Սրորիլմ, Օրէալրու. **Պուլկարիա:** Սովիա, Ուստէ (միաւոր), Փլուտիկ, Վալնա, Շումէն (միաւոր). **Գանատ:** Սոնքրէալ, Համիլթոն (միաւոր), Թորոնք, Քէմպրիճ, Սէնք Գարդինգ, Լաւալ, Վանքուլը (միաւոր), Օքառտա (միաւոր), Արեւամտեան Մ. Նահանգներ: Լու Անձելը, Սան Ֆրանչիսկո, «Սատոն» (Ֆրեզնօ), Սոնքեալելլօ, «Ազատամարտ» (Փաստինա), «Արարատ» (Վլենտէյլ), Օրէնճ Քառեմիրի, «Սասիս» (Սան Ֆեռնանտո), «Սեւան» (Սան Տիէլօ), «Արագ» (Ինլընտ Էմփայր), «Անի» (Սամքա Գլարա), «Ծանք» (Քրեսէնթա Հովիտ), «Սիփան» (Պրոբէնք), «Արցախ» (Լաս Վեկաս), Ֆինիքս, «Կարս» (Ուլմար Քրիպ) «Զաւախը» (Նորք Հովիտուն), «Լոդի» (Սաքրամենք-միաւոր), «Կիլիկիա» (Սամքա Գլարիթա-միաւոր), **Արեւելեան Մ. Նահանգներ:** Ուաշինգտոն, Պուբլի, Նիւ Եորք, Նիւ Շլորդ, Շիքալօ, Ֆիլատելիիա, Տիրույր, Փրովինտըն, Ֆլորիտա, Ալպինի, Շարլոր (միաւոր), Սերիմար Հովիտ (միաւոր). **Հարաւային Ամերիկա:** Պուէնո Այրէս, Գորտուպա, Սոնքրէվիտէօ. **Աւստրալիա:** «Անդրանիկ» (Սիտնի), «Արաքս» (Սիտնի), «Նաւասարդ» (Սիտնի).

# Հ.Ս.Ը.Մ.Ի ՇՔԱՆՇԱՆԵՐՈՒ ԲԱՐԵՓՈԽՈՒԱՅԾ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

## ՆԵՐԱԾԱԿԱՆ

Մինչեւ վերջ հաւատարմօրէն ծառայող Հ.Ս.-Ը.Ականին համար մեծագոյն գոհացումը հոգեկան բաւարարութիւնն է, կարեւորագոյն գնահատանքը՝ աշխատանքի մը յաջողութիւնը, միութեան յառաջդիմութիւնը:

Գնահատանքը Հ.Ս.Ը.Ականին համար միայն անհատական բնոյք չունի: Անհատի մը ընդմէջէն զնահատանքը կ'ուղղուի ամբողջ սերունդի մը, որուն իւրաքանչիւր անդամը մնջ հաւատք ունի Մարդուն, Ազգին ու Հայրենիքին:

Դաստիարակիչ է անհատներ եւ սերունդներ զնահատելը, որովհետեւ նման քայլ մը որքան երախտագիտական է, նոյնքան՝ թելադրական է: Իւրաքանչիւր պարգեւատրուողի մէջ մարդիկ կը տեսնեն պատկերը խոնարի հերոսի մը, նուրումի ախոյեանի մը, որուն օրինակով կը ներշնչուին ու կ'առաջնորդուին:

Ահա թէ ինչու, Հ.Ս.Ը.Մ.Ի համագաղութային կառոյցի ստեղծումն անմիջապէս ետք, Ա. Պատգամաւորական Ընդհանուր ժողովի որոշումով եւ Հ.Ս.-Ը.Մ.Ի առաջին Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ՝ 22 Փետրուար 1976-ին ստեղծուեցաւ միութեան «Արժանեաչ» շքանշանը, որուն հետեւեցան «ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ» շքանշանը՝ 7 Փետրուար 1986-ին և «ԱՐՏԱԿԱՐԳ» պատուանշանը՝ 17 Ապրիլ 1995-ին:

Օրին, շքանշանները ստեղծուեցան տարբեր կա-



րիբներու եւ արժեչափերու համաձայն: Արդ, ժամանակի ընթացքին անհրաժեշտութիւն դարձաւ մէկտեղել երեք կանոնագրութիւնները եւ վերամշակել անոնց պայմանները: Աշխատանք մը, որուն ձեռնարկեց Հ.Ս.Ը.Մ.Ի 13-րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովը ընտրուած Կեդրոնական Վարչութիւնը, նոյեմբեր 2024-ին:

Նետեւաբար, վերամշակուած այս կանոնագրութիւնը կը վերաբերի Հ.Ս.Ը.Մ.Ի ԳԼԽԱԻՈՐ երեք շքանշաններուն միայն: Շքանշաններ ունին եւ կրնան ունենալ Հ.Ս.Ը.Մ.Ի շրջանները եւս՝ տեղական իրենց պայմաններուն թելադրանքով եւ Կեդրոնական Վարչութեան գիտակցութեամբ:



## «ԱՐԺԱՆԵԱՅ» ՇՔԱՆՇԱՆ

**ՑՈՒՂՈՒԱԾ 1.- «ԱՐԺԱՆԵԱՅ» շքանշանը միութեան բարձրագոյն շքանշանն է:** «Արժանեայ» շքանշանի կրնայ արժանանալ վաստակաշատ միութենական մը, որ-  
ա) Մէծ ներդրում ունեցած  
է համա-Հ.Ս.Ը.Մ.Ական աշխատանքներու:

բ) Շրջանին մէջ «Մառայութեան» շքանշանի արժանանա-

լէ ետք, երկարամեայ յաւելեալ բեղուն գործունէութեամբ նպաստած է միութեան վերելքին եւ զարգացման:

**ՑՈՒՂՈՒԱԾ 2.- «ԱՐԺԱՆԵԱՅ» շքանշանի պարգեւատրման որոշումը կը պատկանի Հ.Ս.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան: Պարգեւատրումը կը կատարէ Կեդրոնական Վարչութեան անդամ մը կամ լիազօր մը:**

**ՄԱՆՈՒ. Շքանշանին տուչութիւնը կրնայ կատարուիլ յետ-մահու:**

**ՅՈՒՆԻԱԾ 3.- Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը միութենական մը «Արժանեաց» շքանշանով կրնայ պարգեւատրել-**

ա) իր նախաձեռնութեամբ, պարգեւատրման մասին տեղեակ պահելով պարգեւատրեալին շրջանի պատասխանատու մարմինը՝ Շրջանային կամ Մեկուսի Վարչութիւնը:

բ) Շրջանային կամ Մեկուսի Վարչութեան մը առաջարկով եւ Կեդրոնական Վարչութեան վաւերացումով, պայմանով որ առաջարկին կցուած ըլլայ պարգեւատրեալին միութենական վաստակը ծանօթացնող նամակ մը, որ ընդգրկէ ենթական ծանօթացնող հետեւեալ տուեալները:-

- Կենսագրական ամփոփ տուեալներ (ծննդավայր, ծնընդեան թուական, նկար)

- Միութեան անդամակցութեան թուական

- Միութեան մէջ ստանձնած պաշտօններ

- Միութեան մաս կազմած յանձնախումբերու եւ մարմիններու մասին տեղեկութիւններ

- Այլ միութիւններու եւ մարմիններու անդամակցութիւն

Ծանօթ.- ա) Պարգեւատրումը առաջարկով կամ վաւերացը նող մարմինի անդամ մը չի կրնար շքանշան ստանալ:

**ՅՈՒՆԻԱԾ 4.- «Արժանեաց» շքանշանին հետ պարգեւատրեալին կը յանձնուի համապատասխան լամբակի պէճ եւ հաստատագիր, որ կը կրէ Կեդրոնական Վարչութեան կնիքը, ատենապետին եւ ատենադպիրին ստորագրութիւնները եւ պարգեւատրման թուականը:**

**ՅՈՒՆԻԱԾ 5.- Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը պարգեւատրեալին անունը կը յայտարարէ իր պաշտօնաթերթով եւ կայքէջով: Անունը կ'արձանագրէ յատուկ ցանկի մը մէջ եւ պարգեւատրման մասին շրջաբերականով մը կը տեղեկացնէ Շրջանային եւ Մեկուսի Վարչութիւնները եւ անոնց ճամբով՝ անդամական շարքերը:**

Պարգեւատրեալը կը հրաւիրուի միութենական գլխաւոր ձեռնարկներուն եւ իբրեւ մեծարեալ հիւր կ'արժանանայ յատուկ յարգանքի:

## «ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ» ՇՔԱՆՇԱՐ

**ՅՈՒՆԻԱԾ 6.- «ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ» շքանշանի կրնայ արժանալ միութենական մը, որ՝**

ա) Աւելի քան 20 տարուան ծառայութիւն ունեցած է Հ.Մ.Լ.Մ.ին, ծառայութեան հիմ ունենալով 18 տարեկանէն ետք միութեան մէջ ունեցած գործունէութիւնը:

բ) Հետեւողական եւ կամաւոր մասնակցութիւն բերած է իր մասնաճիւղին կամ շրջանին աշխատանքներուն:

գ) Ճանչցուած է իր օրինակելի եւ տիպար վարք ու բարքով:

Ծանօթ.-

ա) Պարգեւատրումը առաջարկով կամ վաւերացնող մարմինի անդամ մը չի կրնար շքանշանալ:

բ) Միութենական մը շքանշանը կրնայ ստանալ պարգեւատրման պահուն իր պատկանած շրջանի մարմինին առաջարկով:



**ՅՈՒՆԻԱԾ 7.- «ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ» շքանշանի պարգեւատրման որոշումը կը տրուի Հ.Մ.Լ.Մ.ի Շրջանային եւ Մեկուսի Վարչութիւններուն առաջարկով եւ Կեդրոնական Վարչութեան վաւերացումով, պայմանով որ առաջարկին կցուած ըլլայ պարգեւատրեալին միութենական վաստակը ծանօթացնող նամակ մը, որ ընդգրկէ ենթական ծանօթացնող հետեւեալ տուեալները:-**

- Կենսագրական ամփոփ տուեալներ (ծննդավայր, ծնընդեան թուական, նկար)

- Միութեան անդամակցութեան թուական

- Միութեան մէջ ստանձնած պաշտօններ

- Միութեան մաս կազմած յանձնախումբերու եւ մարմիններու մասին տեղեկութիւններ

- Այլ միութիւններու եւ մարմիններու անդամակցութիւն

Պարգեւատրումը կը կատարէ Շրջանային կամ Մեկուսի Վարչութեան անդամ մը:

Ծանօթ.- ա) Շքանշանին տուչութիւնը կրնայ կատարուիլ յետ-մահու:

**ՅՈՒՆԻԱԾ 8.- «ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ» շքանշանին հետ պարգեւատրեալին կը յանձնուի համապատասխան լամբակի պէճ եւ հաստատագիր, որ կը կրէ Կեդրոնական Վարչութեան կնիքը, ատենապետին եւ ատենադպիրին ստորագրութիւնները եւ պարգեւատրման թուականը:**

**ՅՈՒՆԻԱԾ 9.- Շրջանային կամ Մեկուսի Վարչութիւն մը պարգեւատրեալին անունը կը յայտարարէ իր կայքէջով եւ ընկերային ցանցերով: Անունը կ'արձանագրէ յատուկ ցանկի մը**



մէջ եւ պարզեւատրման մասին շրջաբերականով մը կը տեղեկացնէ իր անդամական շարքերը:

Պարզեւատրեալը կը հրաւիրուի միութենական գլխաւոր ձեռնարկներուն եւ իբրեւ մեծարեալ հիւր կ'արժանանայ յատուկ յարգանքի:

**ՅՈՒՂԻԱԾ 10.- «Շառայութեան» շքանշանը եւ հաստատագիրը կը տրամադրէ Հ.Մ.Լ.Մ.ի Կեղրոնական Վարչութիւնը:**

## «ԱՐՏԱԿԱՐԳ» ՊԱՏՈՒԱՆԸՆԸՆ



**ՅՈՒՂԻԱԾ 11.- «Արտակարգ» պատուանշանի կրնայ արժանանալ.-**

ա) Հ.Մ.Լ.Մ.ին մեծ ծառայութիւն մատուցող օտար մը կամ ոչ-Հ.Մ.Լ.Մ.ական հայ մը:

բ) Հ.Մ.Լ.Մ.ին իշխանական նուիրատուութիւն կատարող օտար մը, հայ մը կամ Հ.Մ.Լ.Մ.ական մը:

**ՅՈՒՂԻԱԾ 12.- «Արտակարգ» պատուանշանի պարզեւատրման որոշումը կը պատկանի Հ.Մ.Լ.Մ.ի Կեղրոնական Վարչութեան։ Պարզեւատրումը կը կատարէ Կեղրոնական Վարչութեան անդամ մը կամ լիազօր մը։**

**ՅՈՒՂԻԱԾ 13.- Հ.Մ.Լ.Մ.ի Կեղրոնական Վարչութիւնը անձնաւորութիւն մը «Արտակարգ» պատուանշանով կրնայ պարզեւատրել.-**

ա) իր նախաձեռնութեամբ, պարզեւատրման մասին տեղեակ պահելով պարզեւատրեալին շրջանի պատասխանատու մարմինը՝ Շրջանային կամ Մեկուսի Վարչութիւնը։

բ) Շրջանային կամ Մեկուսի Վարչութեան մը առաջարկով եւ իր վաւերացումով, պայմանով որ առաջարկին կցուած ըլլայ նամակ մը՝ անձնաւորութիւնը ծանօթացնող հետեւեալ տուեալներով.-

- Կենսագրական ամփոփ տուեալներ (ծննդավայր, ծնընդեան թուական, նկար)

- Միութեան անդամակցութեան թուական (եթէ միութեան է)

- իր ունեցած պաշտօնը կամ հանդամանքը (եթէ միութեան չէ)

- Ե՞րե եւ ի՞նչ օգտակարութիւն ունեցած է Հ.Մ.Լ.Մ.ին։

- Գաղութի միութիւններու եւ մարմիններու անդամակցութիւն (եթէ անդամ է)։

**ՅՈՒՂԻԱԾ 14.- «Արտակարգ» պատուանշանին հետ պարզեւատրեալին կը յանձնուի համապատասխան լամբակի պէճ**

եւ հաստատագիր, որ կը կրէ Կեղրոնական Վարչութեան կնիքը, ատենապետին եւ ատենադպիրին ստորագրութիւնները եւ պարգեւատրման թուականը։

**ՅՈՒՂԻԱԾ 15.- Հ.Մ.Լ.Մ.ի Կեղրոնական Վարչութիւնը պարզեւատրեալին անունը կը յայտարարէ իր պաշտօնաթերթով եւ կայքէջով։ Անունը կ'արձանագրէ յատուկ ցանկի մը մէջ եւ պարզեւատրման մասին շրջաբերականով մը կը տեղեկացնէ Շրջանային եւ Մեկուսի Վարչութիւնները եւ անոնց ճամբով՝ անդամական շարքերը։**

Պարզեւատրեալը կը հրաւիրուի միութենական գլխաւոր ձեռնարկներուն եւ իբրեւ մեծարեալ հիւր կ'արժանանայ յատուկ յարգանքի։



## Հ.Մ.Լ.Մ.ԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ՄԻՆՉԵՒ «ՄԱՐԶԻԿ»Ը

### ՀԻՄՆԱԴԻՐ ՄԱՄՈՒԼ

«Մարմնամարզ», 1911-1914, Պոլիս, արտօնատէր՝ Շ. Քրիսեան

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

«Յայ սկաուտ», 1919-1922, Պոլիս, խմբ. Կարօ Ուշագլեան

«Պատրաստ», 1921-1922, Խզմիր, խմբ. Զարեթեան

«Արի», 1924-1925, Պուբրէշ, խմբ. Յ. Սիրունի

«Մարզիկ», 1925, Սոֆիա, խմբ. Կարօ Ղազարոսեան

«Յայ սկաուտ», 1925-1926, Ռուսօնք, խմբ. Վաղարշակ Աստուրեան (՝)

«Հ.Մ.Լ.Մ.», 1925-1926, Փլովտիվ, խմբ. Կարօ Ղազարոսեան (Կ. Մեհեան)

«Նոր սերունդ», 1926-1929, Աբէնք, խմբ. Ա.Ա. Պետրոսեան

«Պահակ», 1927-1936, Փլովտիվ

«Յայ սկաուտ», 1929-1935, Փարիզ, խմբ. Կարօ Ուշագլեան

«Տեղեկատու Հ.Մ.Լ.Մ.ի», 1930, Սոֆիա, խմբ. Ներսէս Աստուածատուրեան

«Յայ սկաուտ», 1934-1936, Փարիզ, Վազգէն Անդրէասեան

«Արի», 1934, Պուբրէշ

## **«ՄԱՐԶԻԿ» ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ**

**Հ.Մ.Ը.Մ.ի Գ. Պարզամատրական Ընդհանուր Ժողովի բյուջեական առնուած է սպորեւ գրուած արխիային նիւթը հագուած մըն է 1979-1983 քառամետակի Կեղրոնական Վարչութեան կողմէ ժողովին ներկայացուած գեղեկագիրէն:**

**Նիւթին հրապարակման առիրը «Մարզիկ»ի 45-աւելակն է: Նպակալը՝ պարական լոյս սփուլ թերթին ձևուան գոյմաններուն վրայ:**

**Յայգնենք, որ Հ.Մ.Ը.Մ.ի Գ. Պարզամատրական Ընդհանուր Ժողովը գեղեկի ունեցած է 14-17 Ապրիլ 1983-ին, Արէնք:**



**«Հ.Մ.Ը.Մ.», 1938, Երուսաղէմ-Դայֆա, պատրաստողներ՝ Յրայր Երկարեան, Լեւոն Քէշիշեան եւ Սեսրոպ Երկարեան**

**«Դայ արի», 1938, Սլիվէն, հրատ. Հ.Մ.Ը.Մ.ի Սլիվէնի մասնաճիւղի**

**«Մարզաշխարհ», 1944, Արէնք, խմբ. Դամօ Մեհրապեան**

**«Հ.Մ.Ը.Մ հայ սկաուտ.», 1946-1947, Փարիզ, խմբ. Ք. Ժայտունի**

**«Մարմնամարզ», 1946, Արէնք, խմբ. Դամօ Մեհրապեան**

**«Նաւասարդ», 1953-1958, Պ. Այրէս, խմբ. Ռէն Վարդանեան**

**«Սկաուտին ծայնը», 1965, Դալէա, խմբ. Վարուժան Դանէսեան**

**«Դայ սկաուտ», 1975-1980, Պէյրութ, խմբ. Կարո Թիթիւննեան**

**«Դայ արի», 1977, Արէնք**

**«Այգ», 1979, Լոնտոն**

### **ԳԱՂԱՓԱՐԱԿԻՑ ՄԱՍՈՒԾ**

**«Ռահվիրայ», 1926, Սոֆիա, խմբ. Յ. Մարթայան**

**«Մարզիկ», 1951-1954, Գահիրէ**


**«Ազդակ մարզական», 1952-1958, Պէյրութ, խմբ. Շիգրան Ուկունի**

**«Արեւելք մարզաշխարհ», 1957-1963, Դալէա, խմբ. Ներ՝ Չաւէն Սապուննեան եւ Լուտեր Մասպանաճեան**

**«Գրոհ», 1978-1979, Գահիրէ, խմբ. Իվան Թորոսեան**

**Պ**աշտօնաթերթ ունենալու գաղափարը նոր չէր: Բայց երբ Հ.Մ.Ը.Մ.ը տէր գարձաւ համագաղութային կառոյցի՝ այդ գաղափարը պահանջման վերածուեցաւ: Պէտք էր կապ մը մէկ գաղութէն, մէկ շրջանէն միւսը, շեխոր մը՝ որ հասցնէր Կեղրոնական Վարչութեան խօսքը ամէնուր՝ հայ երիտասարդութեան, քանդակէր Հ.Մ.Ը.Մ.ի դիմագիծը նոր սերունդին դիմաց եւ հաղորդ պահէր Հ.Մ.Ը.Մ.ի շարքերը Հայաստանի եւ աշխարհի չորս կողմը տեղի ունեցող մարզական շարժումներուն, նուաճումներուն, եւ վերջապէս տարածէր Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարական ոգին:

Պատգամաւորական Բ. Հնդհանուր Ժողովի առաջարկին ընդիմութ ընդառաջեց Կեղրոնական Վարչութիւնը, իր չորրորդ նիստին մէջ խակ (2 Մայիս 1979) հարցը գնելով օրակարգի վրայ: Եւ առաջին օրէն ընդգծուեցաւ գործը ամուր հիմերու վրայ դնելու անհրաժեշտութիւնը:




**Առաջին ակնարկով ի յայտ կու գար, որ նիւթերը առատ էին եւ այլազան, ներկայի լուրերն ու յաղթանակները, անցեալի ներշնչող դէմքերն ու դրուագները եւ**

# ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՐ

ապագայի ուղեցոյցն ու հեռանկարները: Այսուհետեւ, բովանդակութիւնը զանազան մասերու բաժնող ծրագիր մը մշակուեցաւ՝ հունաւորելու նպատակաւ խմբագրական աշխատանքները:

Կեդրոնական Վարչութիւնը պիտի ըլլար հրատարակութեան պատասխանատուն, բայց ինք առանձին չէր կրնար այս գործը իրականացնել: Խմբագրական եռանդամ կորիգ մը ունէր իր մէջ, ինչպէս նաեւ վարչական գործերու հրակող մը: Բայց, նման հանդէսի մը հրատարակութեան համար իր կողքին անհրաժեշտ էր մնայուն խմբագրի մը, օժանդակ քարտուղար մը եւ վարչական գործագար մը, որովհետեւ պաշտօնաթերթը կը մտածուէր հրատարակել ամէն ամիս, 32-40 մեծագիր՝ երկսիւնակ էջով, պատկերագարդ եւ գունաւոր կողքով: Տակաւին հարկաւոր էր ունենալ կեդրոն մը, նստատեղի մը, ուր կեդրոնանային աշխատանքները, արխիտեստ եւ՝ այցելուները, բաժանորդները եւ աշխատակիցները հասցէ մը ունենային: Կը նախատեսուէր 2500 տպաքանակ, օֆսէտ տպագրութեամբ, որ պիտի արժէր 5000 լիր. ոսկի: Նոյնքան գումար մըն ալ պիտի տրամադրուէր խմբագրական, վարչական եւ այլ ծախսերու: Այսինքն ամսական 10.000 լիր. ոսկիի ելք մը Փոխարքնը, կը նախատեսուէր, ամիսը նուազագոյնը 2000 օրինակ սպառելու հնարաւորութեամբ (1000 Լիբանան, 500 Սուրիա եւ 500 ալ արտասահմանի այլ երկիրներ) եւ ցրումի ծախսը (հատ գլուխ 1.50 լիր. ոսկի), զանցառելով՝ մուտք ունենալ 7000 լիր. ոսկի: Ամիսը 3000 լիր. ոսկիի բացը կը յուսացուէր գոյացնել գովազդներէ եկած հասոյթով եւ նուիրատըութիւններէ:



Մրագիրին ձեւաւորում տալուն առանթեր՝ Կեդրոնական Վարչութիւնը կապ հաստատեց կարգ մը եղբայրներու հետ, որոնք ատակ էին նման գործի մը լծուելու, անձամբ տեսաւ զիրենք, հրատիրեց առանձին-առանձին կամ խումբով իր ժողովներուն, առաւ անոնց կարծիքները, թերթի բովանդակութեան, անունի մասին անոնց տեսակէտները, եւ մանաւանդ յատակացուց իւրաքանչիւրին ստանձնելիք պարտականութիւնն ու դերը:

Այս շփումներն ու հանդիպումները, չորս ամիս ետք, յանդեցան խառն նիստի մը (19 Սեպտ. 1979), որ առաւ անմիջապէս գործադրելի հետեւեալ որոշումները.-

ա. Պաշտօնաթերթը պիտի կոչուէր «ՄԱՐԶԻԿ», որ դիւրին կը հնչուէր հայուն թէ օտարին կողմէ, նպատակայարմար էր, եւ մանաւանդ Հ.Մ.Լ.Մ.ի անցեալին հետ աւանդական կապ մը կը հաստատէր, տրուած ըլլալով որ, 1920-ական թուականներուն, Պալքաններու մէջ Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան հրատարակութիւնը այդ անունը կը կրէր:

բ. «ՄԱՐԶԻԿ»ը հրատարակել 35-ով 25 սմթր. էջերով, 40 էջ, 4 էջ գունաւոր կողք: Գինը՝ հատավաճառ 5 լիր. ոսկի, եւ արտասահման անոր համարժէքը:

գ. Տպագրութիւնը վստահի Համագողակինի համար պայմանագութիւնի «Վահէ Սէթեան» տպարանին, եւ այդ տեսակցութիւն մը ունենալ տպարանի պատասխանատուներուն հետ:

դ. Ամսագիրին հրամանագիրը Պէյրութիւնի մասնաճիւղին անունով ունենալ, իսկ արտօնագիրին համար պաշտօն տալ եղբ. Վարդէքս Տէր Կարապետեանին, որ իր անունով առնէ:

ե. Եղբ. Երուանդ Տէմիթին հանդեան կը նշանակուի հանդէսին խմբագրի, առաջին հերթին խմբագրականները գրելու եւ միաժամանակ խմբագրական աշխատանքներու գծով գործակցելու Կեդրոնական Վարչութեան խմբագրական կորիգին հետ:

ի. Մայուն աշխատակից նկատել կարգ մը եղբայրներ, ինչպէս Ժ. Նալ-

պանտեան, Կ. Թիւթիւննեան, Ա. Տէր Խաչատուրեան, Զ. Թոռըկեան, տոքթ. Դերենիկ Թերճաննեան եւ ուրիշներ, եւ զանոնք հրաւիրել հանդիպումի մը եւ սկիզբ տալ աշխատանքներուն:

ը. Այս որոշումները շրջաբերականով հաղորդել շրջաններուն եւ պահանջել, որ ոչ միայն թղթակիցներ նշանակեն, այլ իրենց շրջաններէն ներս թերթը տարածելու, բաժանորդ արձանագրելու եւ նոյնիսկ գովազդ գտնելու պարտականութիւններուն ծուլին այժմէն:

Կեդրոնատեսեղին կը մնար Հ.Մ.Լ.Մ.ի Պէյրութիւնի մասնաճիւղին ակումբը, կարելի եղած ըլլալով Պէյրութիւնի կամ Պուրճ Համուտի մէջ անկիւն մը գտնել այդ նպատակին համար, ինչ որ կը դժուարացնէր գործին բարւոք ընթացքը: Այսուհետեւ, նպատակածիդ այս բոլոր ճիգերը կը պսակուին յաջողութեամբ, երբ վերջապէս, «ՄԱՐԶԻԿ»ի առաջին թիւը լոյս կը տեսնէ 1980 Փետրուարին:

Այս յաղթանակը նշելու, եւ մանաւանդ նիւթական գումար մը ապահովելու առաջադրանքով՝ Կեդրոնական Վարչութիւնը կազմակերպեց ճաշկերոյթ հանդիպում մը, որմէ գոյացաւ 18.000 լիր. ոսկի, հազիւ երկու թիւ հրատարակելու դրամ:

Կեդրոնական Վարչութիւնը կը փորձէր գովազդներու եւ ծանուցումներու կայտածէն հունգք քաշել: Առ այդ կապ կը հաստատէր շահագրգուռող անձերու հետ, ինչպէս նաեւ կը դիմէր անհատ գործատէրերու եւ եղբայրներու: Ապարդիւն չէին անցներ այս ճիգերը, սակայն չէին արդարացներ նաեւ մեր ակնկալութիւնները:

Թիւը կը յաղորդէր թիւին: Արտասահմանէն հնչիւն արդիւնքներ կ'ուշանային, տեղույն վրայ իսկ գանձումները կը յապաղէին: Անշուշտ կ'ըլլային նուիրատուութիւններ, որոնք լոյս կը տեսնէին «ՄԱՐԶԻԿ»ի մէջ, ոմանք ջերմօրէն գնահատելի տոկոսով (Մելանքթոն Արսաւանեան, Հ. Առաքելեան, յիշելու համար կարեւորագոյնները), բայց ընդհանրապէս Կեդրոնական Վարչութիւնը կը գոցէր «բացեր»ը իր գանձէն:

Հակառակ Կեդրոնական Վարչութեան շրջաբերականներուն, կարգ մը շրջաններու մէջ իբր նուէր բաժնած էին «ՄԱՐ-

Զիկ»ի առաջին թիւերը: Հարկ եղաւ միջամտել պատասխանատուներուն մօտ, հաշուակցիլ եւ սպառման օրինաւոր եղանակներ ստեղծել:

Մինչեւ վեցերորդ թիւ խմբագրական աշխատանքներուն լիազումար աշխատակցելէ յետոյ, եղբ. Ե. Տէմիրճեան իրեն վերապահեց առաւելաբար խմբագրական գրելու պարտականութիւնը: Իսկ տպարանային սեւ աշխատանքներուն համար պաշտօնի հրատիրւեցաւ եղբ. Գօգօ Սուրբիասեանը, որ միաժամանակ, հետագային եղբ. Արսէնին [Վարչական գործերու պատասխանատու եղբ. Արսէն Մարկոսեան-«Մ.»] մեկնումէն ետք, ստանձնեց վարչական գործերու վարումը եղբ. Բ. Թորիկեանի հետ:

Մինչեւ խմբագրական աշխատանքներուն եղբ. Գօգոյի վարժուիլը՝ ծանր աշխատանքի բաժինը վերցուցին եղբ. Վ. Տէր Կարապետեան եւ Վ. Մուրատեան, հետապնդելով գործը տպարանէն ներս, կապ պահելով աշխատակիցներուն հետ, վարելով թղթակցութիւնները: Եղբ. Յ. Գազանձեան կը մասնակցի այդ աշխատանքներուն, երբեմն գրելով խմբագրականներ, յօդուածներ եւ կազմելով խաչբառ-ծիծաղի էջը:

Առաջին տարին կը բոլորուի 12 թիւով եւ կը ներկայացընէ նիւթական հետեւեալ պատկերը:-



Իւրաքանչիւր թիւի տպագրական եւ թուղթի ծախս 8500 լիբ. ոսկի

Իւրաքանչիւր թիւի առաքումի ծախս 1000 լիբ. ոսկի

Պաշտօնէութեան վճարում 1500 լիբ. ոսկի

Ա. տարուան հաշուոյն Կելրոնական Վարչութիւնը իր դանձէն տուածէ 15.000 լիբ. ոսկի, ինչպէս նաեւ 10 առաւել 10, 20.000 լիբանանեան ոսկի արտօնագիրի եւ սենտիքայի համար:

Երկրորդ տարուան սեմին նոր համաձայնութիւն մը կը



կնքուի տպարանին հետ: Նկատելով որ 3500 տպաքանակը շատ է, իսկ ծախսերը յաւելում պիտի կրեն, տպաքանակը, առաջւան ծախսով կը պակսի եւ կ'ըլլայ 3100 օրինակ:

Յարդ, երեք տարուան ընթացքին, լոյս տեսած են «ՄԱՐՁԻԿ»ի 30 թիւեր: Հարկ կա՞յ խօսելու անոր բովանդակութեան մասին, երբ ամէնքդ վերահասու էք անոր: Բայց ընդհանրական գիծերու մէջ բնորոշչէ բ. տարուան Ա. խմբագրականէն որուշ հատուածներ կը մէջբերենք այստեղ, թարմացնելու համար յիշողութիւնները:-

«Մատուցանեցինք ամէն ամիս, ինչ որ մարմնապէս գեղեցիկ էր, ուժեղ, եւ հոգեպէս վերացնող՝ մարգական եւ երիտասարդական աշխարհին մէջ:

«Հպարտութեամբ հրաբրնկալեցինք Հայաստանի մէջ, Արարատի շուքին յայտնագործուող մերօրեայ քաջամարտիկները միջազգային մրցանշներ եւ յաղթանակներ խլած արմենազարմ ախոյեանները, հայ դնդերին ազնիւ ուժով վարակելու համար նոր սերունդը:»

«Հաղորդեցինք, ի սկիւոս աշխարհին, Հ.Մ.Լ.Մ.ի սկաուտներուն յաղթական արշաւները, մարզական խումբերուն եւ մարզիկներուն յարանորոգ շարժումներն ու յաղողութիւնները, վարչութիւններու եւ մասնածիւղերու նպատակաւաց ոգորումները՝ գոտեպնդելու համար տարասփիւռ մեր ժողովուրդը «Ճուլում» կոչուող գեւին դէմ, եւ բաց պահելով անոր դիմաց՝ պատագի լուսաշող հեռանկարները:»

«Խանդավառուեցանք ազնիւ մրցակցութեան նոր դրօշակակիրներով, չմոռցանք սակայն վաստակն ու գաղափարականը անոնց, որոնք՝ հինուց աստի՝ ակօսը բացին նորածիլ ուժերուն:»

«Վերջապէս՝ քառասուն աղբիւրէ ջուր բերինք, քառասուն բովանդակալից եւ պատկերագարդ էջերուն ակնահաճոյ տեսք մը տալու, ամսօրեայ հանդէսը հասցնելու համար եւրոպական նման հրատարակութիւններու մակարդակին»:

Այո, քառասուն աղբիւրէ ջուր բերելու, «ՄԱՐԶԻԿ»ը տպող մամոլին անիւները դարձնելու համար, քառասուն կտոր եղաւ կեղրոնական վարչութիւնը: Ժամանակին եւ վտիտ գանձին մեծ մասը անոր յատկացուց, թերանալու աստիճան այլ կալուածներու մէջ, որովհետեւ զրեթէ ոչ մէկ տեղ գտաւ անհրաժեշտ ընդունելութիւնն ու աջակցութիւնը: Նշանակւած թղթակիցներէն շատեր տող մը անդամ չգրեցին: Կարդ մը աշխատակիցներ եթէ թոյլ կապ պահեցին, ուրիշներ ժամանակ մը ետք աներեւութացան (ճամբորդութեան կամ այլ պատճառով) կամ հազորադէպօրէն երեցան հանդէսին մէջ: Խոստում ընողներ շատ եղան, բայց խոստումը յարգողներ՝ քիչ:

Տարածման գծով ալ մեր ակնկալութիւնները չարդարացան ամէնուրեք: Քանի մը շրջաններ գերագոյն ճիպ մը փորձեցին,

## ՄԱՀՈՒԱՆ 75-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

# ՅՈՎՀԱՆՆԵՍ Թ. ՀԻՆԴԼԵԱՆ. ՆՈՐԱՀԱՍ ՍԵՐՈՒՆԴԻ ՀԱՅԱԿԵՐՏՄԱՆ ՀԻՄԱԳԻՐ Հ.Մ.Բ.Մ.ԱԿԱՆԸ

**Հ.Մ.Բ.Մ.Ի.** գաղափարական ու բարոյական աւանդներու հունաւորման մէջ, գլխաւոր ներդրում ունեցած հիմնադիրներու շարքին, իր առանձնայատուկ տեղը կը գրաւէ մեծանուն հայմանկավարժ ու փայլուն մտաւորական Յովհաննէս Թ. Հինդլեան, որ 16 Փետրուար 1950-ին, Պոլսոյ մէջ հրաժեշտ տուաւ մեր աշխարհին:

**Հ.Մ.Բ.Մ.Ի.** հիմնադիր սերունդի այս ականաւոր գործիչը մեծ աւանդ ունի քսաներորդ դարասկերգին արեւմտահայութեան ապրած զարթօնքին մէջ՝ սերնդակերտումի եւ հայկերտումի իր առաքելութիւնը հունաւորելով ազատ մարդու եւ ազատագրեալ հայումակման տեսլականով:


Մինչեւ այսօր այժմէ ական իր հնչեղութիւնը կը պահպանէ Յ. Հինդլեանի պատգամը:-

«Ազատութիւնն ամէնէն մեծ բարիքն է մարդուն համար, եթէ գիտէ զայն գործածել: Իսկ երբ ազատութիւնն ընդունող ժողովուրդը տղայ է եւ խաղալիք մը կը կարծէ զայն, այն ատեն ազատութիւնն ամէնէն ձախող արդիւնքները կը նայ ունենալ: Վկայ է պատմութիւնը:»

«Ազատութիւնն անկարգապահութիւն եւ անիշխանութիւն չէ: Ազատութիւնն ինքնակամ հպատակութիւնն է օրէնքին, որ զմեզ կը պահպանէ մեզմէ իւրաքանչիւրին ներսիդին մրափող բարբարոսութեան դէմ: Լըջութեամբ, անկեղծութեամբ, հանդարտութեամբ աշխատակցի քաղաքակրթութեան յառաջդիմութեան, ահա՝ Ազատութիւնը: Հետևել (չնազանդիլ) օրէնքներուն, պոռալով-պոռչտելով, կիրքերու անձնատուր ըլլալով, ահա՝ բարբարոսութիւնը, ահա՝ անիշխանութիւնը: Ազատութիւնը պատասխանատութեան արտաքսում չէ: ընդհակա-

ուրիշներ վերջերս միայն կազմակերպուեցան, մէկ մասն ալ սակայն գոհացաւ եղածով:

Աւելցուցէք ասոնց վրայ, երկրին անապահով վիճակին հետեւանքով ելեկտրական խանդարումները, պարտադրեալ արձակուրդները, պատերազմը, թղթատարական անկանոնութիւնները, վերջապէս «Թափառական խմբագրատունը» եւ հիմնադրամի մը չգոյութիւնը, եւ հասկնալի կ'ըլլայ հաւանաբար կամքի այն տոկունութիւնը եւ չնահանջող ոգին, զոր կեղրոնական Վարչութիւնը ի յայտ բերաւ այս ձեռնարկը յաղթանակի մը վերածելու եւ բաց ճակատով ներկայանալու համար հանրութեան եւ Պատգամաւորական Գ. Ընդհանուր ժողովին:



ուակը, որքան աւելի ազատ ըլլայ մարդ, այնքան աւելի պատասխանատութիւններ ունի: Քիչ մը մտածել կը բաւէ՝ համոզուելու համար այս ճշմարտութեան»:

Մարդու եւ հայու ազատութեան ու հասարակական պատասխանատութեան այսպիսի խոր եւ իրա՛ւ ընկալումով ու պատկերացումով ապրեցաւ եւ գործեց հայ ժողովուրդի մեծ զաւակներէն Յովհաննէս Թ. Հինդլեան, որուն մահուան 75-րդ տարելիցը կ'ոգեկոչենք այս տարի:

Յ. Հինդլեան արդէն հաստատուած հեղինակութիւնն էր 1918-ին, երբ միացաւ մեր ժողովուրդի նոյնքան արժանաւոր մեծերէն Գրիգոր Յակոբեանի եւ հոյլ մը նուիրեալներու անձնիր ջանքերով հիմնադրելու համար Հ. Մ. Բ. Մ. Ի., իրեւել միաժամանակ մարզական եւ սկաուտական կազմակերպութիւն: Անոնց նպատակն էր ի մի բերել եւ, ազգային-քաղաքական ու ընկերային-բարոյական վսեմ գաղափարներու դրօշին տակ ընդհանուր եւ մէկ մեծ կազմակերպութեան մէջ համախմբել մինչ այդ Պոլսոյ թէ հայշարհի տարածութեան ամէնէն ձախող արդիւնքները կը նայ ունենալ:

Հինդլեան ծնած էր 1866-ին, Պոլս: Նորահաստատ «Պէրպէտրեան» վարժարանի անդրանիկ եւ չնորհալի սաներէն էր, որ կանուխէն նետուեցաւ մանկավարժական ասպարէ՝ իր ժամանակի ազգային ամէնէն յառաջադէմ գաղափարներով սերունդ հասցնելով:

Նորահաս սերունդը ազգային ողիով եւ գաղափարական ու բարոյական վսեմագոյն արժէքներով դաստիարակելու առաքելութեան ամբողջապէս նուիրուած մեծ մանկավարժը 5 Հոկտեմբեր 1909-ին, 1908-ի Օսմանեան Սահմանադրու-

թեամբ հաստատուած համեմատաբար ազատ գործունէութեան պայմաններէն օգտուելով, Գալուստ Մալաթեանի հետ գործակցաբար հիմը դրաւ Պոլսոյ հայոց «Նոր դպրոց» վարժարանին, որուն կոչումն ու առաքելութիւնը Հինդեան առիթով մը տարազած է հետեւեալ պարզ, այլեւ խորիմաստ խորհրդածութեամբ:-

«Դիտական միտք, որքա՞ն հագուստագիւտ բան մըն է ան տակաւին մարդոց մէջ: Որքա՞ն յաճախ շպարն իբր իրականութիւն, ձեւն իբր հիմ, խօսքն իբր գործ կ'ընդունինք: Որքա՞ն յաճախ կը բունուինք շողջողուն, կախարդիչ արամասացութիւններու ոստղէն... Առանց շատ հեռուններն երթալու՝ հաշւենք անգամ մը, թէ Սահմանադրութեան վերահաստատութենէն ի վեր որքա՞ն անգամներ սխալեցանք, խաբուեցանք եւ տուժեցինք, միմիայն գիտական մտքի պակասութեամբ, այսինքն՝ միմիայն անոր համար, որ մեր կիրքերուն անձնատուր եղանք տղու մը պէս՝ փոխանակ մեր զգացումները բանականութեան հակակշուն ենթարկելու. միմիայն անոր համար, որ դրական պարագաները միայն ուղեցինք տեսնել՝ փոխանակ հաշուի առնելու դիտական պարագաներն ալ. միմիայն անոր համար, որ կեղծն անկեղծէն զանազանելու չափ յատակատես չկրցանք ըլլալ...»:

Յովհաննէս Հինդեան արդարօրէն ուսուցչապետ հոչակ-ւեցաւ իր ժամանակակիցներուն կողմէ: Եւ պատահական չէր, որ Հ.Մ.Լ.Մ.Ի հիմնադրութեան իր յառաջատար մասնակցութիւնը բերելով՝ Հինդեանի ներդրումը մեծ եղաւ նորաստեղծ կազմակերպութիւնը «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանով զինելու գործին մէջ:

Եթէ Հ.Մ.Լ.Մ.ը Սփիւռքի տարածքին իրաւամբ դարձաւ նորահաս մեր սերունդներուն մարդակերտումի եւ հայակերտումի գիտաւոր հնոցներէն մէկը, բացատրութիւնը պէտք է փնտուել Հինդեանի պայծառատեսութեամբ գաղափարակիրներու հաստատած հիմնարար արժէքներուն եւ սկզբունքներուն մէջ: Ազգային-հասարակական գործիչի Հ.Մ.Լ.Մ.ական կերպարը սահանեցաւ եւ միս ու ուկոր կապեց Հինդեաններու պատգամներով, որոնց շարքին, օրինակ՝

«Խօսած ըլլալու համար խօսիլ... Այս հիւանդութիւնը ուրիշ ձեւ մ’ալ ունի: Որովհետեւ պէտք է, որ անպատճառ խօսինք, չենք անդրադառնար նախապէս՝ մեր ըսելիքին վրայ, հսկողութիւն ի գործ չենք դնելով մեր ուղեղին վրայ, որ աշխարհիս ամէնէն չարածնի բանն է. տղու մը պէս ազատ մուտք կու տանք մեր գանկին մէջ՝ ամէն տեսակ գաղափարներու: Մինչեւ հոս վնաս չկայ ժողովին համար, բայց գէշն հոն է, որ մեր գանկին մէջ անոնց մուտք տալէ վերջ՝ ժողովասրահին մէջ ալ ազատ մուտք կու տանք անոնց, ինչ որ անիրաւութիւնն մըն է, բռնաբարութիւնն մըն է հանդէպ ժողովին: Ժողովն իրաւունք ունի պահանջելու, որ մեր ըսածները տրամաբանական ըլլան նախ, եւ յետոյ՝ տրամաբանորէն առնչութիւն ունենան քննելի ինդրոյն հետ: Որչա՞փ իրաւունք ունի Ռընան, երբ կ’ըսէ. «Ամէն ինչ առատ է, բացի ողմտութենէն»: Եւ որչափ սիրելի են մեզ մեր այն (ազգային) երեսիփիսանները, որոնց մէջ որոշ կերպով կը տեսնուի այդ չքնաղ բարեմասնութիւնը. Բայց որքա՞ն աւելի սիրելի պիտի ըլլային անոնք մեզ, եթէ Գրիգոր Զոհրապէ Քինտիին պէս՝ իրենց ողմտութեան միացնէն խօսքերու

սեղմութիւնը: Ունկնդիր երեսփիսանները դպրոցականներ չեն վերջապէս, եւ ատենաբան երեսփիսանները տեսակ մը թշնամանք ըրած կ’ըլլան անոնց՝ անհարկի եւ անվերջանալի մանրամասնութիւններով եւ կրկնութիւններով երկարելով իրենց պատճառաբանութիւնը»:

Ենչար դնելով «առողջ մարմնի մէջ առողջ միտք» մշակելու հրամայականին վրայ՝ Հինդեան եւ իր ընկերները Հայաստանի ու Հայութեան պաշտամունքը դարձուցին կիզակէտը իրենց հիմնադրած համահայկական շարժումին: Տակաւին նոր կազմուած՝ յատուկ առաքելութիւն ուղարկեցին Երեւան, որպէսզի նորահաստատ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան հետ անհրաժեշտ համակարգումը յառաջացընեն: Եւ այդպէս ալ եղաւ: Այդ ճամբով նաեւ Հ.Մ.Լ.Մ. մարմնաւորեց Դաշնակցութեան գաղափարականօրէն ուղեկից այն շարժումը, որ դէպի հայ լեզուն եւ հայ մշակոյթը, դէպի հայկան ասպետութիւնն ու Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանը լարեց սիրտն ու միտքը, բազուկն ու քայլերը հայութեան նորահաս սերունդներուն՝ ի Հայաստան թէ սիկիւս աշխարհի:

Քեմալականութեան «յաղթարշաւ»էն եւ Մեծ Եղեռնէն վերապրած հայութեան երկրորդ տարագրութենէն ետք, Յ. Հինդեան դուրս չեկաւ Պոլսէն եւ մինչեւ մահ, իր հիմնադրած Պոլսոյ «Նոր դպրոց»ով, հաւատարիմ մնաց իր պաշտամարժէքներով սերունդ հասցնելու առաքելութեան:

Մարդակերտումի եւ հայակերտումի իր գաղափարախօսութիւնն ու պատգամը առաւելագոյնս խտացնող՝ «Արդարակշիռ ազգամիլութիւնը» խորագրով Յ. Հինդեանի աշխատասիրութենէն քաղուած հետագայ խորհրդածութեամբ կ’արժէ եղարափակել մեծարժէք Հայուն ոգեկոչման նուիրաւած այս ակնարկը-

«Ազգին ներկայ ճգնաժամին մէջ, իրաւունք չունինք իմաստասիրական-ընկերային առաւել կամ նուազ յանդուգն տեսութիւններով զբաղելու, եւ ժողովուրդին արդէն գրգուուած երեւակայութիւնն ա’լ աւելի գրգուելու: Ազգասիրութիւնն իրողութիւն մ’է, եւ կարեւոր եղող բանն է ոչնչացնել այն նախապաշտումներն որոնք, մակաբոյծներու պէս փակած ազգասիրութեան, անոր արիւնը կը քամեն: Նպատակ է մէկ երկու խօսքով ցոյց տալ այդ նախապաշտումներէն մէկ քանին եւ ցայտեցնել արդարակշիռ ազգասիրութիւնը:

«Շատերու համար ազգասիրութիւնն ուրիշ բան չէ, բայց եթէ իսու կիրք մը, եւ շատ մը խոհական, այսինքն ճշմարիտ ազգասէրներ, որոնք ջղագրգիուի յատուկ շարժուածեւերով ու խօսքերով չեն արտայայտեր իրենց ազգասիրութիւնը, ազգին շահերուն հանդէպ անտարերներ կը նկատուին, իսկ եթէ ազգին թերութիւնները քննադատեն անոնք, ազգատեացներ կը համարուին: Ընդհակառակն, դրուտեաց կայթերու եւ հայտածան կ’արժանանան անոնք, որոնց ազգասիրութիւնն ի յայտ կու գայ մասնաւոր ջղագրգութեամբ եւ թերակշիռ լաւատեսութեամբ կամ յուկեստեսութեամբ:

«Արդ, ազգասիրութիւնը, ճշմարիտ, արդիւնաւոր ազգասիրութիւնն աւելի բանականութիւնն է, քան՝ զգացում, այսինքն զգացում մ’է, որ այն ատեն միայն կ’ըլլայ օգտակար, երբ բանականութենէն կը կառավարուի»:

## Հ.Մ.Լ.Մ.Ը ՍՈՎՈՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ ԶԵ, ԴՊՐՈՇԵ

(Հ.Մ.Լ.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԵՂԲ. ՏԻՐԱՆ ՎԱՀՐԱՏԵԱՆԻ ԽՕՍՔԸ,  
ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ Հ.Մ.Լ.Մ.Ի ԱԻՍՏՐԱՎԻՈՅ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ 54-ՐԴ ՄԱՐԶԱՀԱՂԵՐՈՒ  
ԲԱՑՄԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

**Ո**ւրախութիւն է տեսնել այսքան մեծ թիւով խումբեր եւ մարզիկ-մարզիկուհիներ Հ.Մ.Լ.Մ.Ի Նաւասարդեան 54-րդ մարզախաղերու բացման հանդիսութեան:

Այսքան մեծ ներկայութիւն կը նշանակէ մեծ վստահութիւն Հ.Մ.Լ.Մ.Ի հանդէպ: Մեծ կապւածութիւն այս միութեան աշխատանքին եւ մեծ սէր ու յարգանք անոր նպաստակին:

Հ.Մ.Լ.Մ.Ի համար այս մարզախաղերը, ինչպէս բոլոր խաղերը եւ սկառուտական ձեռնարկները, միջոց են: Նպատակը այս պատանի-երիտասարդ տղաքն ու աղջիկները իրարութով բերելին է, մէկ հաւաքականութեան, մէկ ժողովուրդի պատկանելու գիտակցութիւնը փոխանցելն է, որպէսզի անոնք այս խաղերէն տուն վերադառնան աւելի հայացած, աւելի խանդավառուած եւ ազգային հպարտութեամբ լեցուած:

Այս տղաքը կրնային հոս ըլլալ եւ իրենց հանդիսատին ու հաճոյին համար բոլորովին այլ տեղ ըլլալ, բայց անոնք նախընտրեցին, նաեւ իրենց ծնողները նախընտրեցին, որ անոնք այսօր հոս ըլլան, Հ.Մ.Լ.Մ.Ի մէջ ըլլան, հայեցի միջնորդութիւն եւ միջավայրի մէջ ըլլան: Ապրիլի տղաքը: Շարունակեցէք մնալ Հ.Մ.Լ.Մ.Ի մէջ, մինչեւ որ օրին մէկը դուռք նստիք ձեր ծնողներուն տեղ եւ ձեր գաւակները ըլլան այս դաշտին մէջ:

Այս է Հ.Մ.Լ.Մ.Ը: Սերունդներու շարունակութիւնն է Հ.Մ.Լ.Մ.Ը եւ անոր համար ալ ան երբեք չի ծերանար, որովհետեւ միշտ կու գան նորերը:



2025-ին շրջանը կը տօնէ իր հիմնադրութեան 60-ամեակը: 60 տարիէս սերունդներ կու գան ու կ'երթան, բայց Հ.Մ.Լ.Մ.Ը կը մնայ: Հ.Մ.Լ.Մ.Ի ժողովրդականութիւնը անմրցելի կը մնայ, որովհետեւ Հ.Մ.Լ.Մ.Ը սովորական միութիւն չէ: Մարզիկներու եւ սկառուտակներու համախմբում մը չէ: Հ.Մ.Լ.Մ.Ը օրէնք է եւ կարգապահութիւն: Հ.Մ.Լ.Մ.Ը նուիրում է եւ ծառայութիւն: Հ.Մ.Լ.Մ.Ը յարգանք է մեծին, գերադասին, բայց նաեւ՝ փոխադարձ հասկացողութիւն է փոքրին, նորեկին: Երէցներուն փորձառութիւնը եւ նորերուն խանդավառութիւնը իրարութիացած յառաջ կը տանին այս միութիւնը: Կողք-կողքի, միշտ միասին, իրարու մտիկ ընելով, իրարու ձեռք երկարելով եւ իրարու հետ գործակցելով:

Միրելինե՛ր,

Հ.Մ.Լ.Մ.Ը դպրոց է, ուր մտնողը կը սորվի բազմաթիւ դասեր: Կարգապահութիւնը այդ դասերէն մէկն է: Այլ դասեր են համեստութիւնը, երկխօսութիւնը, համբերութիւնը, փոխադարձ յարգանքը, միութեան համար անհատական եսերու զոհողութիւնը եւ միայն ու միայն միութեան շահերուն համար աշխատիլը:

Շրջանի հիմնադրութեան 60-ամեակի տարին թող ըլլայ Հ.Մ.Լ.Մ.ական դասերու վերջիշեցման տարի: Թող ըլլայ այդ դասերով գործելու տարի: Թող ըլլայ 60 տարուան իմաստութեամբ աշխատանքի տարի:

Թող ըլլայ մանաւա՛նդ յաջողութիւններով լեցուն տարի:

Վարձքը կատար Շրջանային Վարչութեան եւ այս մարզախաղերու յաջողութեան նպաստած շրջանի մասնաճիւղերու վարչութիւններուն:

Շնորհակալութիւն ծնողներուն, որոնք իրենց գաւակներուն առաջին եւ մեծագոյն քաջալերողները կը հանդիսանան:

Վերջապէս շնորհակալութիւն մէր սիրելի մարզիկ-մարզիկուհիներուն, որոնք որոշած են քալել իրենց նախորդներու 60 տարի առաջ բացած ճամբէն:

Ապրիլ, հազա՞ր ապրիլի բոլորդ:

Եւ թող միշտ ապրիլ Հ.Մ.Լ.Մ.Ը:

Հ.Մ.Լ.Մ.Ի ժողովրդականութիւնը անմրցելի կը մնայ, որովհետեւ Հ.Մ.Լ.Մ.Ը սովորական միութիւն չէ: Մարզիկներու եւ սկառուտներու համախմբում մը չէ: Հ.Մ.Լ.Մ.Ը օրէնք է եւ կարգապահութիւն: Հ.Մ.Լ.Մ.Ը նուիրում է եւ ծառայութիւն: Հ.Մ.Լ.Մ.Ը յարգանք է մեծին, գերադասին, բայց նաեւ՝ փոխադարձ հասկացողութիւն է փոքրին, նորեկին: Երէցներուն փորձառութիւնը եւ նորերուն խանդավառութիւնը իրարութիացած յառաջ կը տանին այս միութիւնը: Կողք-կողքի, միշտ միասին, իրարու մտիկ ընելով, իրարու ձեռք երկարելով եւ իրարու հետ գործակցելով:

# Հ.Մ.Լ.Մ.ԱԿԱՆՔ ՏԿԱՐՈՒԹԻՒՆ, ՆԱՀԱՆՁ, ԶԱԽՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆՁՆԱՏՈՒՐ ԸԼԼԱԼ ՉԻ ԲԱՆՉԱՐ

(Հ.Մ.Լ.Մ.Ի ՀԱԼՔՊԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԽՈՒՄԲԻՆ ՍՈՒՐԻՈՅ 1964-1965 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՄՈՒՄԹԱԶ  
ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱԽՈՑԵԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԱԺԱԿԻ ՏԻՐԱՑՄԱՆ 60-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

**Թորմիկ Ռաստկելէնեան  
ԼՈՍ ԱՆՃԵԼԸ**

**Հ.Մ.Լ.Մ.Ը մարզական եւ սկառատական մեծ միութիւն մը ըլլալով հանդերձ՝ է ու կը մնայ կրթական, մարզական, մարդկային եւ ազգային ու բարոյական վեն ու ազնիւ սկզբունքներու հնոց, ի մասնաւորի մարդկերտումի, հայակերտումի եւ հայրենակերտումի իր սրբազն առաքելութեամբ:**

**Հ.Մ.Լ.Մ.Ը իրբեւ այլպիսին միշտ եղած է մեր ժողովուրդի լոյսի եւ յոյսի ալբիուրը, ձուլումի եւ քաղքենիացումի վասնգաւոր ու վարակիչ հօսանքներուն դէմ յամառօրէն պայքարողը եւ մեր ժողովուրդի անկատար տենչերն ու երազները իրականացնող կայուն ու հաստատ ամրոցը, հայրենիքի անկախութեան, գերիշխանութեան, ազատութեան ու գոյատեման արի, հաւատաւոր, անձնուրաց եւ յանձնառու զինուորը պատրաստող հիմնական ու կենական միջնաբերդը:**

**Իրբեւ հաւատաւոր, անսակարի ծառայող Հ.Մ.Լ.Մ.ական նուիրեաներ, մեր ազնիւ ու վեհ պարտաւորութիւնը պէտք է ըլլայ ջանալ բարձր գիտակցութեամբ, Հ.Մ.Լ.Մ.ի շքեղ անցեալի միութենական, մարզական եւ սկառատական հարուստ պատմութեան էջերը անաղարտ ու անբժի պահել, սուրբ մա-**

**սունքի նման, եւ զանոնք իրենց հարազատ, պայծառ, գեղեցիկ ու հարուստ տարազով ներկայացնել հայութեան, ի մասնաւորի՝ նորահաս սերունդնեռուն:**

**Մեր ճիտին պարտքն է նաեւ, հաստատ ու կուռաւատաքով ու կամքով ջանք ու ճիտ չինայել այս մեծ միութեան՝ Հ.Մ.Լ.Մ.ի պահանձան, գոյատեման և առաջական առաջականութեան գործադրութեան մասին:**

Վերելքին եւ հօրացման համար, որպէսզի ան շարունակէ իր սրբազն առաքելութիւնը եւ օրհնաբեր ու բարեբեր երթը, ապահովելով պանծալի, պատմական նուածումներ եւ իրագործումներ:

Այս է մեր հաւատամքը, այս է մեր հաստատ ու պինդ սկզբունքն ու նպատակը, եւ այսպէս կառչած պիտի մնանք բոլոր սկզբունքներուն հանդէպ, շարունակելու մեր յաղթական երթը, մինչեւ որ իրականանան մեր ազգին անկատար տենչերն ու երազները:

## ԶԱՐԱԲԱՍԻԿ ՄՐՑՈՒՄԸ ԵՒ ԱՆԱՐԴԱՐ ՊԱՏԻԺՆԵՐԸ

**Հ.Մ.Լ.Մ.Ի Հալէպի Փութպոլի խումբին Սուրիոյ 1964-1965 տարեշրջանի մումթազ դասակարգի առաջին ախոյեանութեան քայլարշաւը եղաւ չափազանց գուռար, սպառիչ, մարաթոնեան վազք եւ Գողգոթա լերան մագլցում ու մաքառում:**

**Արդարեւ, 1963-ի ամրան, բամպակի բաժակի աւարտական մրցումը, որ տեղի ունեցաւ Հ.Մ.Լ.Մ.Ի Հալէպի եւ Ահլիի միջեւ, վերջ գտաւ Հ.Մ.Լ.Մ.Ի տինամիկի կազմին յաղթանակով՝ 3-2 արդիւնքով։ Մրցումին կոլերը նշանակեցին եղբայրներ Գրիգոր Սեւալեան (2) եւ Գօօծ Քիլէճեան (1)։**

**Հ.Մ.Լ.Մ.Ի համակիրները, հակառակ իրաւարարներու անսակար ու բացայաց կողմնակալութեան, մրցումի տեւողութեան ամենայն կարգապահութեամբ ու համբերութեամբ իրենց ջիղերուն տէրը մնացին եւ երեք ժիշտական քայլերու չդիմեցին, սակայն անոնց ծով համբերութեան բաժակը ի վերջոյ յորդեցաւ, որովհետեւ իրաւարարներու հակաօրինական ընթացքը յաւելեալ ծանրակշիռ վիճակ ստացաւ, երբ մանաւանդ դաշտէն հեռացուեցաւ Հ.Մ.Լ.Մ.ական վաստակաշատ, օրինապահ, կարգապահ, աստղ մարզիկ մը, մրցումի աւարտէն 10 վայրկեան առաջ։ Այսպէս, իրաւարարը իր աններելի յանցանքով պատճառ դարձաւ, որ համակիրներու համբերութեան բաժակը փշրուի եւ մրցումը կէս ժամով կանգ առնէ, ապա ապահովութեան ուժերու միջամտութեամբ եւ օգնութեամբ անդորրութիւնը վերահաստատուի եւ մրցումը իր բնական ընթացքը ստանայ:**

**Հալէպի Փութպոլի Փետերասիոնը երկար չսպասեց, չուշացաւ, յաջորդ օրն իսկ բացառիկ նիստ գումարեց եւ հետեւ**



"وضع الدوري ،"

لعبة الجيش يومي ١٤ آذار بمواجهة السوري المحلي، لتحديد بطولة الدوري، فاز السوري بحلب (١-٠)، بضافة الحكم حواسبي، وتعادل في دمشق (١-١) بضافة سالم أيمش، وسجل الهدف طارق علوش، وأهدر ركلة جزاء، ليفوز السوري في بطولة الدوري.



սաւորումին նոր դրութիւնը՝ մումթազ, առաջին եւ երկրորդ, գործադրութեան դնել: Ան Սուրբոյ բոլոր շրջաններու ֆետերասիոններուն թելաղբեց այս որոշումը անմիջապէս գործադրութեան դնել եւ համապատասխան գտումին մրցումներ կազմակերպել, որպէսզի իւրաքանչիւր ակումբի աստիճանն ու դիրքը որոշուին:

Հ.Մ.Լ.Մ.Ի Հալէպի խումբը զրկուեցաւ գտումի այս մըրցումներէն եւ դատապարտուեցաւ Հալէպի ակումբներու երկրորդ դասակարգի վերջին դիրքին վրայ մնալու:

## ՄԵՐ ԱՆԿՈՒՆ ԿԱՄՔԸ ԵՒ ՅԱՂԹԱԿԱՆ ԵՐԹԸ

Ստեղծուած այս ծանրակշիռ, արտասովոր ու անարդար կացութիւնը շրջանցելու եւ յաղթահարելու նպատակով, Հ.Մ.Լ.Մ.Ի համայն ընտանիքը ծրագրեալ լուրջ գործի լծուեցաւ, ամենայն կարգապահութեամբ, գերզոհողութեամբ, եւ գործադրութեան ջանքերով յաջողեցաւ վերացնել իր առջեւ ցըւած բոլոր տեսակի դժուարութիւնները եւ ապա իրաւունք ստացաւ մասնակցելու երկրորդ հանգրուանի գտումի մրցումներուն:

Հ.Մ.Լ.Մ.Ի աննման եղբայրներուս հետ քայլ առ քայլ, աստիճան առ աստիճան, ինքնավստահ եւ ընդհանրականը անհատականէն վեր դասելու հաստատ համոզումով ու վճռակամութեամբ, յաջող արդիւնքներ արձանագրելէ ետք, կարողացանք բարձրանալ ու հասնի մումթազ դասա-

եալ անարդար ու իսկա որոշումները տուաւ.-

1. Հ.Մ.Լ.Մ.Ի ֆութպոլի խումբը վեց ամիսով կախակայել եւ անոր մարզական գործունէութիւնը սառեցնել:

2. Երկու աստղ մարզիկներ՝ առաջինը մէկ տարիով, իսկ երկրորդը վեց ամիսով կախակայել:

Այս շրջանին Սուրբոյ ֆութպոլի գերագոյն մարմինը որոշած էր ֆութպոլի ակումբը դարձի:

Կարգի 11 խումբերու շարքին, վերջին մրցումին բացառիկ ելոյթով մը յաղթել վասպուրականի զօրաւոր կազմին (5-0) եւ արդարօրէն մասնակցիլ Սուրբոյ 1964-1965 տարեշրջանի ֆութպոլի մումթազ դասակարգի առաջին ախոյեանութեան մրցումներուն:

Առաջին հերթին Հ.Մ.Լ.Մ.Ի հերոս եղբայրներուս հետ արդարօրէն նուաճեցինք հիւսիսային խմբակի պարագլուի դիրքը. ճակատագրական ու վճռական վերջին մրցումին յաղթեցինք Հալէպի Ահլիի փորձառու եւ զօրաւոր կազմին (1-0) եւ ապահովեցինք ախոյեանութեան աւարտական երթ ու դարձի զոյք մրցումներուն մասնակցելու իրաւունքը, ճակատելու համար հարաւային խմբակի ախոյեան Սուրբոյ բանակի արհետավարժ հզօր կազմին դէմ:

Այս յաղթականին միակ կոլլ նշանակելու բախտը եղբարձրիկ Ռաստկէլէնեանին ժպտեցաւ, երբ ան երկրորդ կիսախաղի 17-րդ վայրկեանին յաջողեցաւ զօրաւոր հարուածով մը խորտակել Ահլիին բերդն ու բերդապահը եւ նշանակել յաղթանակի միակ կոլլ:

## ՊԱՏՄԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆԸ

Աւարտականի երթի մրցումը տեղի ունեցաւ Հալէպի քաղաքականի դաշտին վրայ, Կիրակի, 14 Մարտ 1965-ին, ղեկավարութեամբ միջազգային իրաւարար Ռաշատ Հառասիլի:

Հ.Մ.Լ.Մ.Ի տինամիկ կազմը, ներդաշնակ խաղարկութեամբ, ինչպէս միշտ, անգամ մը եւս իր չափազանց վճռական, բացառիկ ելոյթով ինքզինք գերազանցեց եւ յաջողեցաւ ճակատագրական այս զօրաւոր մրցումը աւարտել 1-0 արդիւնքով:

Մրցումին միակ կոլլ նշանակելու բախտը անգամ մը եւս եղբ. Ճորճիկ Ռաստկէլէնեանին ժպտեցաւ: Ան Ա. կիսախաղի 15-րդ վայրկեանին յաջողեցաւ Հ.Մ.Լ.Մ.Ի աստղ, վարպետ խաղացող եղբ. Գօդո Քիլէնեանին ճգրիտ փոխանցումը իր նպատակին հասցնել, ցնցելով բանակի խումբին բերդն ու բերդապահը, իսպահողները եւ նշանակել մրցումին յաղթանակի միակ կոլլ:



Դարձի մրցումը տեղի ունեցաւ Ուրբաթ, 19 Մարտ 1965-ին, Դամասկոսի քաղաքապետարանի դաշտին վրայ: Օրուան իրաւարարն էր միջազգային Սալէմ Այմաշը, օգնականներ ունենալով Ազգայի Քարաչայը եւ Արէֆ Արիանին:

Ա. Կիսախաղը վերջ գտաւ բանակի խումբին նշանակած կուպ (1-0), կիսախաղի աւարտէն երկու վայրկեան առաջ:

Բ. Կիսախաղի 20-րդ վայրկեանին, Հ.Մ.Լ.Մ.ի խումբին պաշտպանողական գիծի խոհեմ, արթուն աստղ խալացող Մորիս Ֆաքը յաջողեցաւ ազատ, ուղղակի հարուածը 30 մետր հեռաւորութենէն կապարի նման արձակել եւ խորտակել բանակի բերդը եւ յուսահատութեան մատնել բանակի մարզիկները:

Այս գեղեցիկ կոլը բոլորս իրախուսեց եւ յուսադրեց եւ մենք իրաքանչիւրս մէկական առիւծի վերածուած՝ դաշտին տէրն ու տիրականը դարձանք եւ բազմաթիւ անդամներ վտանգեցինք բանակին խումբը, սակայն արթուն բերդապահն ու յիտսապահ գիծը յաջողեցան իրենց բերդը պաշտպանել ու փրկել ստոյգ առիթներէ:

Ի վերջոյ հասաւ փրկութեան ժամը եւ լուսեցաւ իրաւարարի սուլիչին ձայնը՝ աւետելով յաղթանակի ուրախ լուրը, Սուրիոյ 1964-1965 տարեշրջանի մուլմթազ դասակարգի առաջին ախոյեանութեան գահին վրայ բազմելու Հ.Մ.Լ.Մ.ի հերոս տղոց արդար իրաւունքին աւետիար:

Փառք ու պատիւ մէր սիրելի ու պաշտելի Հ.Մ.Լ.Մ.ին, բիւր սէր ու բարձր գնահատանք անգուգական հերոս եղբայրներուն եւ բազմահազար հաւատաւոր Հ.Մ.Լ.Մ.ական եղբայրներուն եւ աննման պաշտելի համակիրներուն:

## ԽԵՂԱԹԻՒՐՈՒՄ ԵՒ ԱՆՏԵՍՈՒՄ

Պատմական այս իրագործումէն աւելի քան 55 տարի ետք, դժբախտաբար, կարգ մը անպատասխանաւու թղթակիցներ փորձեցին Հ.Մ.Լ.Մ.ի ձեռք բերած այս օրինական ախոյեանութիւնը անտեսել եւ այս պատմական, գեղեցիկ ու պանծալի իրագործումը Սուրիոյ պատմութեան էջերէն ջնջել: Կասկածելի նպատակներով այս թղթակիցները նոյնիսկ քայլ մը առջեւ երթալով, Սուրիոյ Փութպոլի ֆետերասիոնին առաջարկեցին, որ ան Ուրբաթ 10 նոյեմբեր 1966-ը յայտարարէ Սուրիոյ Փութպոլի ծնունդի օր: Սակայն, իրենց խնդրանքը նկատի չառնուեցաւ բարեբախտաբար:

Այս խմբակին ղեկավարը համարձակեցաւ հակաօրինական ընթացքով մը Փութպոլի այս առաջին ախոյեանութիւնը ջնջել Սուրիոյ ախոյեանութիւններու մասին իր պատրաստած գրքոյկէն, որովհետեւ ըստ իր համոզումին ախոյեանութիւնը հակաօրինական է, որովհետեւ... տեղի ունեցած է երկու խմբակի դրութեամբ:

## ՃԾՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐԴԱԲՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՌՈՒՄ

Այս հակաօրինական ու անարդար քայլերուն դիմաց չէի

կրնար անտարբեր մնալ: Հ.Մ.Լ.Մ.ականի խիղճս ամէն վայրկեան ինծի խստիւ կը հարհանգէր, որ տէրը կանգնիմ այս պատարեր, պատմական նուածումին ու արդար իրաւունքին, եւ ջանք ու ճիգ չխնայեմ բոլոր դռները թակելու, մինչեւ որ ճշմարտութիւնը վերահաստառուի, յատկապէս Փութպոլի պաշտօնական մարմիններուն կողմէ:

Հ.Մ.Լ.Մ.ի մեծ

դպրոցէն մէր ստացած դաստիարակութիւնը երբեք մեզի չի թույլատրեր, որ տեղի տանք եւ անձնատուր ըլլանք նման անարդարութիւններու դիմաց:

Հ.Մ.Լ.Մ.ի դպրոցին մէջ մենք սորված ենք տէր կանգնիլ մէր իրաւունքներուն, երբեք պարտուղական կեցուածք չցուցաբերել, բացարձակապէս չնահանջել, չընկրկիլ եւ անձնատուր ըլլալ: Պէտք է յամառօրէն, ինքնավստահ, հաստատ ու աննկուն կամքով ու հաւատքով պայքարինք ու յաղթահարենք բոլոր դժուարութիւններն ու արգելքները՝ հասնելու համար արդար, վեհ ու ազնիւ մէր իրաւունքներուն եւ նպատակներուն:

Անսալով Հ.Մ.Լ.Մ.ականի խիղճիս, անմիջապէս գործի լծուեցայ, այս արդար դատը պաշտպանելու եւ մէր վաւերական ու անվիճելի իրաւունքը ձեռք բերելու համար:

Առաջին հերթին հեռաձայնային կապեր հաստատեցի նոյնինքն այս խեղաթիւրումը կատարած անհամեներուն հետ, համապատասխան վաւերական տուեալներ ապահովելով եւ արաբերէն լեզուով յօդուածներ պատրաստելով: Յօդուածներ, որոնք կը հաստատեն այս ախոյեանութեան ճշմարտութիւնը, ծնունդը, հոլովոյթը, եղելութիւնը եւ յաջող ընթացքը, եւ ապա զանոնք այս զեղծարարի խմբակին ներկայացնելի, սակայն ապարդիւն: Անոնք հաստատ մնացին իրենց անհիմն սիսալ ընթացքին վրայ, թաքուն պատճառներով: Անոնց միակ պատասխանը եղաւ այն, որ այս ախոյեանութիւնը օրինական չէ եւ իրենք իբրեւ մարզական լրագրողներ ազատ են իրենց ուղածը ներկայացնելու:

Անցայ յաջորդ քայլին. հարցին թղթածրարը, ամբողջ մանրամասնութեամբ, անոր կցելով կարգ մը մարզական թերթեր եւ արաբերէն լեզուով պատրաստած յօդուածներս, որոնք կը հաստատեն ախոյեանութեան անվիճելի, վաւերական ճշմարտութիւնը, դիմատեարի էջիս ճամբեռ գրի Սուրիոյ Փութպոլի պատմութեամբ նախանձախնդիր անձնաւորութիւններու տրամադրութեան տակ:

Նոյն բովանդակութեամբ նամակ մը եւ արխիւը ուղարկե-

Georgi Wanes  
May 14, 2022 · 22

Shahadat حية، صادقة ، شفافية، وجريئة، لقادات ، وأعلام ونجوم من عاشوا هذا الحدث التاريخي لهم ، لأول بطولة دولية لأندية الدرجة الممتازة الـ 11 بكرة القدم ، والتي جرت في موسم ١٩٦٥-١٩٦٤ ، بتنظيم الاتحاد العربي السوري لكرة القدم ورعايته الكريمة ، وإشرافه المنشغل ، والتي كللت بنجاح تام دون أن تعكر صفو مسيرتها آية شافية ، فانتهت بفوز ناد...

See more



Georgi Wanes

Apr 30, 2023 · 4 min

"الأخلاق ، والمصداقية ، والأمانة لتأريخ الرياضة السورية هي السبيل الوحيد للوصول إلى الحقائق المشرقة ، والناصعة ، والمشرفة" . See more..."



+19

Georgi Wanes

Jun 11, 2020 · 4 min

"قد يستطيع المرء أن يخدع الناس لبعض الوقت ، ولكنه لا يستطيع أن يخدعهم لكل الوقت ، لأن حيل الكذب... See more..."



Ցի Սուրբիոյ Փութպոլի գերագոյն մարմինին, եւ ճշմարիտ ու յանդուզն պատասխաներ ստացայ աւելի քան յիսունի հասնող յարգարժան, հաւատաւոր ու վստահութիւն ներշնչող անձնաւորութիւններէ, որոնք եղած են Սուրբիոյ անցեալի ու ներկայի Փութպոլի գերագոյն մարմինի նախագահներ, անդամներ, միջազգային իրաւարարներ, աստղ մարզիկներ, ակումբներու պատասխանատուներ, լրագրողներ, թղթակիցներ եւ այլք. բոլորն ալ, առանց բացառութեան ու վերապահութեան հաստատեցին, որ 1964-1965 տարեցրանի Փութպոլի առաջին ախոյեանութիւնը անվիճելի ճշմարտութիւն է եւ թէ «Նատի ալ Սուրբիոյն՝ Հ.Մ.Լ.Մ.ը եղած է այս ախոյեանութեան ու բաժակին տիտղոսակիրը, արժանավայել ախոյեանը»:

Այս ընտրանիներու փաղանգը զիս իրախուսեց ու քաջալեց, եւ ես տարիներ ետք յամառօրէն եւ յաւելեալ ինքնավըստահութեամբ շարունակեցի սկսած աշխատանքս եւ մնայուն հետապնդումս այս հարցին, որպէսզի նաեւ Սուրբիոյ գերագոյն մարզական մարմինի պատասխանատուներէն յաջողիմ ստանալ ոյնանման հաստատումներ եւ վաւերական պատասխաններ:

Եւ վերջապէս ժրածան աշխատանքս տուաւ իր արդար պտուղը եւ դրական հունձքը, երբ ես յաջողեցայ Սուրբիոյ ընդհանուր մարզական մարմինի նախագահին հետ հետաձայնացին կապ հաստատել եւ անոր պարզել կացութիւնը եւ կատարած աշխատանքս, խնդրելով իր արդար կեցուածքն ու պատասխանը:

Ան յայտնեց այս հարցին գծով իր համոզումը, եւ ինձմէ խնդրեց, որ անմիջապէս այս թղթածրարը իրեն փոխանցեմ եւ խոստացաւ 48 ժամուան ընթացքին փոխանցել գոհացուցիչ պատասխան:

Եւ այլպէս ալ եղաւ: Նախագահը խոստումը յարգեց եւ հետաձայնով մը յայտնեց, որ այս ախոյեանութիւնը բացարձակ իրականութիւն է ու վաւերական, եւ «Նատի ալ Սուրբիոյն՝ Հ.Մ.Լ.Մ.ը եղած է այս ախոյեանութեան տիտղոսին արժանացողը: Ան աւելցուց ըսելով. քանի մը օրէն կրնաս Սուրբիոյ մար-

զական գերագոյն մարմինի դիմատերի պաշտօնական էջին վրայ տեսնել ինծի ուղարկած բոլոր յօդուածներդ ու վաւերական տեղեկութիւններդ: Նաեւ կրնաս այդ բոլոր տեսնել մեր մարզական պաշտօնաթերթին մէջ, ուր յատակօրէն պիտի յիշուին 1964-1965 տարեցրանի ախոյեանութեան ծնունդն ու յաջող ընթացքը: Առաւել, հոն պիտի գտնես նկարով յօդուած մը, որ կ'անդրադառնայ կատարած կարեւոր նուաճումներուդ, ի մասնաւորի 1964-1965 տարեցրանի ախոյեանութեան տիրացման, ինչ որ անվիճելի, վաւերական ու ճշմարիտ իրականութիւն է:

Այդ բոլորը իսկապէս իրականացան եւ դիմատերի յիշեալ էջը վկան է պատմական անարդարութեան վերականգնումին եւ ճշմարտութեան վերահաստատումին:

## ՍԷՐ, ՅԱՐԳԱՆՔ ԵՒ ԵՐԱՎԱԾՎԻՏՈՒԹԻՒՆ

Այս բոլորէն ետք, ամենայն հաւատքով եւ երախտագիտութեամբ փառք կու տամ Աստուծոյ, որ մեր ազնիւ խնդրանքն ու փափաքը իրականացուց, արդարութիւնը վերահաստատեց, նոյնինքն մարզական պաշտօնական պատասխանատուներու կողմէ, եւ անոր օրինական ըլլալը կրկին օրհնեց:

### Սիրելիներ,

Կարելի է ճշմարտութիւնը որոշ ժամանակի մը համար ծածկել, խեղաթիւրել եւ մոռացութիւն մատնել, սակայն ուշ կամ կանուխ ան պիտի բացայացուի ուժգնորէն, պայծառ արեւու նման եւ իր զօրաւոր ճառագայթները արձակելով պիտի շլացնէ աչքերը բոլոր անոնց, որոնք կը դիմեն նման վատ ու անօրինական արարքներու եւ կը ջանան յափշտակել ուրիշներուն արդար իրաւունքը:

Եւ վերջապէս խորունկ սէր, յարգանք եւ երախտագիտութիւն բոլոր անոնց, ի մասնաւորի Փութպոլի յիշեալ խումբի անզուգական եղբայրներուս եւ մարզիչին եղբ. Աբրահամ Աւրնեանին, որոնք գերզոնզութեամբ, բարձր գիտակցութեամբ, Հ.Մ.Լ.Մ.ականի վայել ընթացքով, անսակարկ նուիրումով անկարելին կարելի դարձուցին եւ իրենց դրական ու օգտակար մասնակցութիւնը բերին Հ.Մ.Լ.Մ.ի պանծալի, փառաւոր ու պատմական նուաճումներուն եւ իրագործումներուն, մեծապէս նպաստելով անոր գոյատեւման, վերելին ու յաջողութիւններուն, եւ արժանացան բոլորին ջերմ սիրոյ, յարգանքին ու բարձր գնահատանքին:

Յառաջ անսասան, յառաջ անվեհեր, դէպի նորանոր պանծալի իրագործումներ:



# ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԶՄԵՌՆԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԽՎՂԵՐԸ

- ՄԱՄԱԿԱՑՈՒԹԵԱՄԲ 88 ՔԱՂԱՔՆԵՐԻ 1348 ՄԱՐԶԻԿ-ՄԱՐԶԻԿՈՒՀԻՆԵՐՈՒԻ  
- ԵՐԵՒԱՆ ԱԼԱԶԻՆ, ԿԻՒՄՐԻ՝ ԵՐԿՐՈՐԴ, ԱՇՈՅՔ՝ ԵՐՐՈՐԴ



**Զ**մեռնային առաջին մարզակաղերէն 11 տարի ետք, 1-7 Փետրուարին, Վայոց Զորի Ջերմուկ քաղաքին մէջ տեղի ունեցած համահայկական ձմեռնային երկրորդ խաղերը, մասնակցութեամբ 18 երկիրներու 88 քաղաքներու 1348 մարզիկ-մարզիկուհիներու, որոնք 72 մետալներու տիրացման համար ճակատեցան եօթը մարզաձեւերու մէջ.- դահուկավագք, ձնամարտ, մարզական պարեր, հոքի, ճատրակ, լեռնադահոյկ եւ սնոպորտ:

Համահայկական ձմեռնային առաջին խաղերը կատարուած էին 24 Փետրուարէն 2 Մարտ 2014-ին, Ծաղկաձորի մէջ, մասնակցութեամբ աշխարհի 11 երկիրներու 22 քաղաքներու 430 մարզիկ-մարզիկուհիներու: Խաղերը իրենց յայտագիրին վրայ ունեցած էին չորս մարզաձեւեր.- դահուկավագք, լեռնադահոյկ, սնոպորտ եւ տափօղակով հոքի:

Համահայկական ձմեռնային երկրորդ խաղերուն մասնակցեցան 76 իրաւարարներ. Կարգ մը մրցումներ կատարուեցան Ջերմուկէն դուրս, Երևան:

Նի եւ Ապարանի մէջ: Մտորել՝ խաղերու հիւրընկալման վայրերը.-

Մարզական պարեր- Ջերմուկի «Գլածոր» առողջարան:

Հոքի- Երեւան, «Կազիրոմ Արմենիա» ուսումնամարզական համալիր:

Ճատրակ- Ջերմուկ, «Կրանտ ռեզորտ» համալիր:

Ձնամարտ- Ջերմուկ, օդակայանի տարածք:

Դահուկավագք- Ջերմուկ, օդակայանի տարածք:

Լեռնադահոյկ- Ապարան, «Մայեռ» մասնակիուն ռեզորտ:

Մնոպորտ- Ապարան, «Մայեռ» մասնակիուն ռեզորտ:

Խաղերուն բացումը տեղի ունեցաւ 1 Փետրուարի երեկոյեան ժամը 6.30-ին, Ջերմուկի ճոպանուղիին տարածքը, իսկ փակումը՝ 7 Փետրուարի կէսօրէ ետք ժամը 2-ին, Ջերմուկի կեդրոնական հրապարակը:

Բացման հանդիսութեան ներկայ գտնուեցան Հայաստանի Հանրապետութեան եւ Աղդային Ժողովի նախագահները, Կառավարական Կազմկոմիտէի





նախագահը, բարձրաստիճան այլ անձնաւորութիւններ, Համահայկական Խաղերու Համաշխարհային Կոմիտէի նախագահը, գործադիր կոմիտէի անդամներ եւ պատուաւոր հիւրեր:

Խաղերուն ջահը բոցավուեցաւ Նորավանքին բերուած ջահով, որուն վառելու պատիւը վերապահուեցաւ 2024-ի աշխարհի ախոյեան, ծանրաբարձ Վարագրատ Լալայեանին: Ջահավառութեան նախորդեց ձայնի եւ լոյսի աննախնթաց ցուցադրութիւն: Տեղի ունեցաւ խաղերու մասնակից պատուիրակութիւններու տողանցք: Ապա, մարզիկներու եւ իրաւարարներու երդում՝ մրցելու եւ դատելու յանուն մարզական պատփի եւ մայր Հայաստանի փառքի: Երդումը կատարուեցաւ Համահայկական խաղերու դրօշին ներքեւ: Դրոշը բարձրացուց ծանրաբարձութեան Եւրոպայի ախոյեան Հուփիսիմէ Խուրչուտեան:

Ցայտնենք, որ համահայկական ձմեռնային երկրորդ խաղերու առաւելագոյն մասնակցութիւնը արձանագրուեցաւ ճատրակի մէջ: Առանց տարիքային սահմանափակումի, ճատրակի մրցումներուն մասնակցեցան 210 վարպետ-վարպետուհիներ: Անոնք խաղացին 9 հանգրդուանէ բաղկացած արագ ճատրակ:

Հոքիի մրցումներուն մասնակցեցան չորս խումբներ.- Երեւան, Տոնի Նախիջեւան, Վոլկոկրատ եւ Մոնթրէալ:

Բաւական հետաքրքրութիւն ստեղծեց առաջին անգամ ըլլարով կիրարկը ձող ձնամարտը, որուն մասնակցեցան 18

խումբեր Ապարանէն, Վլիեննայէն, Լիբանանէն, Թալինէն, Թիֆլիսէն, Կրասնոստարէն, Թեհրանէն, Մասիսէն եւ այլ քաղաքներէ:

Վեցորեայ մրցումներու աւարտին, 55 մետալներու տիրացան հայրենի 13 քաղաքներու պատուիրակութիւններ, իսկ 16 մետալներու՝ սփիւռքեան 10 քաղաքներու ներկայացուցիչներ (խաղ մը պրոնզէ մետալակիր չունեցաւ): 65 քաղաքուէ մետալի չուրացաւ: Կամ, աւելի ճիշդը՝ խաղերու մասնակից քաղաքներուն 26 առ հարիւրը միայն մետալներու տիրացաւ: Մետալակիր քաղաքներու առաջին տասնեակին մէջ տեղ գրաւեցին սփիւռքեան 4 քաղաքներ: Ինչպէս միշտ, Երեւան ալիրացաւ առաւելագոյն թիւով մետալներու՝ 18 (6 ոսկի, 10 արծաթ, 2 պրոնզ): Յաջորդեցին Կիւմրի (4 ոսկի, 3 արծաթ, 4 պրոնզ) եւ Աշոցք քաղաքները (3 ոսկի, 5 արծաթ, 4 պրոնզ):



Խաղերու փակման պաշտօնական արարողութեան խօսքով մը հանդէս եկաւ Հայաստանի Հանրապետութեան նախագահ Վահագն Խաչատրյան: Անըսաւ, որ համահայկական ձմեռնային երկրորդ խաղերը կրկին մէկտեղեցին աշխարհի զանազան անկիւնները ապրող հայրենակիցները: «Այս խաղերը ոչ միայն մարզական նախաձեռնութիւննեն, այլև յուրհրդանշ մեր համախմբւածութեան, հաւաքական ուժի եւ անկուրում կամքի»:

Իր կարգին, Հայաստանի վարչապետի աշխատակազմի ղեկավար, Համահայկական խաղերու կառավարական կազմկոմիտէի նախագահ Արայիկ Ցարութիւնեան յայտնեց, որ մենք յաջողեցանք: Յաջողեցանք, որովհետեւ բոլոր խաղերուն տեսանք մրցակցութիւն, տեսանք միասնութիւն, տեսանք եղբայրութիւն: Նման խրաքանչիւր նախաձեռնութիւնը կամքագույն է աշխատական անկուրում կամքի»:





Նույթին մեզի համար կարողութիւններ գարգացնելու առիթ է:

Խօսք առաւ նաեւ Համահայկական Խաղերու Համաշխարհային Խորհուրդի նախագահ Իշխան Զաքարեան եւ նշեց, որ մենք բոլորս յաղթեցինք: Պարտուղա-ները միայն չարակամներն էին: Մենք



բոլորս յաղթեցինք, որովհետեւ համահայկական խաղերու գաղափարը այլեւս անշրջելի է, անփոխարինելի եւ հաստատուն: Հայաստան-Ափիւրք միասնութիւնը՝ մարզախաղերով: Մենք բոլորս յաղթած ենք իրարու հետ»:

Յայտնենք, որ փակման արարողու-

թեան ընթացքին, համահայկական ձմեռնային երկրորդ խաղերու «Լաւագոյն պատուիրակութիւն» հոչակուեցաւ Կոտայքի մարզի պատուիրակութիւնը: «Արդար խաղ»ի մրցանակին արժանացաւ Մոնթբէալի խումբը: «Խաղերու յայտնութիւնը» նկատուեցաւ Վոլկոկրատի խումբը, իսկ «Մարզական ոգի եւ արիութիւն» մրցանակին տիրացաւ Լիքանանի խումբը:

Ստորեւ՝ մրցումներուն արդիւնքները:

## ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՉՄԵՌՆԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ

	Ո.	Ա.	Պ.	ԸՆԴՀ.
1. Երեւան	6	10	2	18
2. Կիմրի	4	3	4	11
3. Աշոցք	3	5	4	12
4. Սոչի	2	2	1	5
5. Տարազ	2	1	-	3
6. Ծաղկաձոր	1	2	-	3
7. Վաղարշապատ	1	-	1	2
8. Վանաձոր	1	-	1	2
9. Թեհրան	1	-	-	1
10. Տոնի Նախիջևան	1	-	-	1
11. Մուկուս	1	-	-	1
12. Աբովյան	1	-	-	1
13. Ջերմուկ	-	1	-	1
14. Խոյ	-	-	1	1
15. Սիսիան	-	-	1	1
16. Կրասնոտար	-	-	1	1
17. Պարում	-	-	1	1
18. Լու Անձելս	-	-	1	1
19. Բիլբեղաւան	-	-	1	1
21. Վոլկորոտ	-	-	1	1
22. Արմավիր	-	-	1	1
23. Տաշիր	-	-	1	1

## ԴԱՀՈՒԿԱՎԱԶՔ

### ԱԶԱՏ ՈՃ-ՏՂԱՔ

- Միքայէլ Միքայէլեան (Աշոցք)
- Սպարտակ Ոսկանեան (Աշոցք)
- Թադէոս Պօղոսեան (Աշոցք)



# ՀԱՄԱՐԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ



## ԱԶԱՏ ՈՃ- ԱՂՋԻԿՆԵՐ

1. Քաթիա Գալստեան (Աշոցք)
2. Վասելինա Խաչատրյան (Սոչի)
3. Ռոզա Միմոնեան (Կիւմրի)

## ԴԱՍԱԿԱՆ ՈՃ- ՏՂԱՔ

1. Միքայէլ Միքայէլեան (Աշոցք)
2. Սպարտակ Պոկանեան (Աշոցք)
3. Թադէս Պօղոսեան (Աշոցք)

## ԴԱՍԱԿԱՆ ՈՃ- ԱՂՋԻԿՆԵՐ

1. Վասելինա Խաչատրյան (Սոչի)
2. Քաթիա Գալստեան (Աշոցք)
3. Ռոզա Միմոնեան (Կիւմրի)

## ԴԱՍԱԿԱՆ ՈՃ-

### ԽՄԲԱՑԻՆ ԽԱԽՆ ՓՈԽԱՆՑԱՎԱԶՔ

1. Վասելինա Խաչատրյան (Սոչի)  
էրիկ Աւետիսեան (Վանաձոր)
2. Թադէս Պօղոսեան (Աշոցք)  
Քաթիա Գալստեան (Աշոցք)
3. Միքայէլ Միքայէլեան (Աշոցք)  
Անահիտ Մարգարեան (Աշոցք)

## ԶՆԱՄԱՐՏ

## ԱՌԱՋԻՆ- ԹԵՇՐԱՆ

Ամայիսա իսրայիլեան, Գէորգ Խողաշխեան, Ամարաս Լազարի, Վարանդ Զոհրաբեան, Էրեբունի Մկրտչեան, Էմիլ Նաւասարդեան, Արամազդ Բաբայեան, Վարագղատ Խեցոյեան, Մոնթէ Մովսէսեան, Արգիշտի Ղարախանեան:

## ԵՐԿՐՈՐԴ- ԶԵՐՄՈՒԻԿ

Գոռ Թադէսոսեան, Նարեկ Ստեփիան-եան, Ռուդիկ Հայրապետեան, Յարութիւն Կարապետեան, Յարութիւն Ստեփիանեան, Արտուշ Բեգլարեան, Աղուան Գէորգեան, Արթիւր Վահանեան, Ալլա Մարգարեան, Լիլի Առաքելեան:

## ԵՐՐՈՐԴ- ԽՈՅ

Դաւիթ Վարդումեան, Արա Պուլուզ-եան, Կարէն Բէյըութեան, Էդուարդ Եղեան, Նուէր Թորոսեան, Արմինէ Նիկողոսեան, Էլիա Աբգարեան, Արեւիկ Ալեքսանեան, Տիգրան Դաւթեան, Ալպէրթ Ալեքսանեան:

## ԼԵՌՆԱԴԱՀՈՅՑ

### ՀՍԿԱՅ ՈԼՈՐԱՎԱՅՑՔՔ- ՏՂԱՔ

1. Կէպ Մոսէսով (Երեւան)

## ՄՆՈՊՈՐՏ

### ՀՍԿԱՅ ՈԼՈՐԱՎԱՅՑՔՔ- ՏՂԱՔ

1. Նորիկ Թադէսոսեան (Երեւան)
2. Կարէն Սաֆարեան (Մաղկաձոր)
3. Կարէն Միրզոյեան (Վանաձոր)

### ՀՍԿԱՅ ՈԼՈՐԱՎԱՅՑՔՔ- ԱՂՋԻԿՆԵՐ

1. Լիլիթ Պետրոսեան (Մոսկով)
2. Յասմիկ Մելիքեան (Երեւան)
3. -----





## ԹԱՏՐՈՎ

### ՏՂԱՔ

- Գաղիկ Նաւոյեան (Երեւան)
- Վոլոդիմիր Ռորոսեան (Կիւմրի)
- Մարգի Բասենցեան (Տավուշ)

### ԱՂՋԻԿՆԵՐ

- Մարիամ Խաչատրեան (Արովեան)
- Աննա Խաչատրեան (Երեւան)
- Աստղիկ Ցակոբեան (Արմաւիր)

## ՀՈՔԻ

- Տոնի Նախիջեւան
- Երեւան
- Վոլոկորատ

## ՄԱՐԶԱԿԱՆ ՊԱՐԵՐ

### BABY 2 (4-6) LAT+ST-CHA, W (ՍՈԼՕ)

- Հերմինէ Գիւլեան (Կիւմրի)
- Նինա Մոսէչուկ (Մոչի)
- Նանէ Ցարութիւնեան (Սիսիան)

### BEGINNER 4 (7-9) LAT+ST (ՍՈԼՕ)

- Սոֆյա Սէյտաեւա (Տարազ)
- Եարոսլաւ Նեմ (Տարազ)
- Եւա Զաքարեան (Կրասնոսար)

### SILVER (9-11) CHA, S, R, J (ՍՈԼՕ)

- Շուշանիկ Ժամկոչեան (Կիւմրի)

### 2. Գոհար Խաչատրեան (Կիւմրի)

### 3. Մարինա Պապանեան (Կիւմրի)

### 3. Թամարա Ղեւոնդեան (Փարաքար)

### YOUTH+ADULT (ԶՈՅՑԵՐ)

- Վահէ Մարատեան - Լիանա Գորէեան (Երեւան)
- Արարատ Վարդանեան - Մարիամ Փափազեան (Երեւան)
- Էրիանա Պիգլովա (Կիւմրի)

### FS 6 (10-12) LAT+ST CHA, S, J, W, T, Q (ՍՈԼՕ)

- Կիրա Օրինենկօ (Տարազ)
- Սաֆինա Պապիկեան (Երեւան)
- Արիանա Պիգլովա (Կիւմրի)

### FS 4 (12-13) CHA, S, R, J (ՍՈԼՕ)

- Մանէ Ալեքսանեան (Երեւան)
- Էլէն Սարգսեան (Երեւան)
- Անահիտ Դաւթեան (Երեւան)

### FS 5 (14-15) CHA, S, R, PD, J (ՍՈԼՕ)

- Լուսինէ Ղարիբեան (Կիւմրի)
- Անահիտ Տիգրանեան (Կիւմրի)
- Մարիամ Եղիազարեան (Պաթում)

### FS 5 (16+) CHA, S, R, PD, J (ՍՈԼՕ)

- Լիլիա Խուրչուտեան (Երեւան)
- Ժաննա Զաքարեան (Երեւան)

### LATIN SHOW (11-14)- ԽՄԲԱԿԱՑԻՆ

- Կիւմրի
- Երեւան
- Վաղարշապատ

### LATIN SHOW (15+)- ԽՄԲԱԿԱՑԻՆ

- Վաղարշապատ
- Երեւան
- Բիւրեղաւան

## ՀՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ



	Ո.	Ա.	Պ.
Երեւան	3	6	1
Կիւմրի	4	2	2
Տարազ	2	1	-
Սոչի	-	1	1
Վաղարշապատ	1	-	-
Սիսիան	-	-	1
Կրասնոսար	-	-	1
Պաթում	-	-	1
Փարաքար	-	-	1
Լոռ Անձելը	-	-	1
Բիւրեղաւան	-	-	1



## ԱՐՑԱԽԻՑ ԴՈՒՐՍ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆ

**Յ**ունուարի 10-ը. սա մեր առաջին տարին է բ Արցախից դուրս: Հպարտօրէն ուղղում ենք նշել, որ չնայած մի շարք խոչընդոտների, մենք կարողացել ենք հասնել մեր նպատակներին: Այդ գործում մեծ օգնութիւն է ցուցաբերել Հ.Մ.Ը.Մ. Կենտրոնական Վարչութիւնը:

Տարուայ կտրուածքով ծաւալել ենք ակամիվ գործունէութիւն, չինայելով ջանք ու եռանդ՝ կազմակերպել ենք մի շարք ծրագրեր Արցախից երեխաներին նորից երջանկի տեսնելու համար:

Մեր յաջողութեան ապացոյցը սկառատների թուի աճն է: Նրանք իւրաքան-

չիւր գործունէութեան ապացուցում են, որ պատասխանատունները գուր չեն աշխատել եւ ունեն արժանի յաջորդողներ:

Մեր մեծագոյն ձեռքբերումներից էր գայլիկական խմբերի բացումը: Նրանք մանուկ հասակից դաստիարակում են բարձր արժէքներով, որը կ'օգնի հայրենիքին ծառայելու գործում:

Այժմ ունենք սկառատական խմբեր նաև Մասկատում եւ Արմավակում, որը մեր աշխատասիրութեան արդիւնքն է: Խոստման արարողութեան ժամանակ երգում տուեց 50 սկառուտ:

Մեծ փորձ ձեռք բերեցինք Լիբանան եւ Շուէտիա որպէս պատուիրակութիւն



մեկնումից: Այն հետագայում կատարելագործուելու հնարաւորութիւն էր:

Ունեցանք խմբապետ, ով ամէն կերպ ստարում եւ քաջալերում է սկառատներին: Նա մասնակցեց Եգիպտոսում խըմբապետական 9-րդ համագումարին եւ ձեռք բերած գիտելիքները կիրառեց գործունէութեան ընթացքում, որը էլ աւելի արդիւնաւէտ դարձրեց մեր աշխատանքը:

Իսկ պատասխանատուական կազմի յաջողութիւնները վարչութեան ջանամիջարար աշխատանքի արդիւնքն է: Զեւաւորուեց մեր գործունէութեանը խթանող վարչութիւն:

Հայաստանում առաջնային խնդիր էր գրասենեակի հարցը: Ուզում ենք չնորհակալություն յայտնել Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ին՝ իրենց գրասենեակում մեզ տեղ տալու համար:

Այսպիսով, տարին համարում ենք նուածումների տարի





## Հ.Մ.Լ.Մ.Ի ԱՐՑԱԽԻ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐԸ ԵՒ ՏԵԱՌՆԵՐՆԴԱՌՎՔԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

### Թղթակից ԵՐԵՒԱՆ

Հ.Մ.Լ.Մ.Ի Արցախի մեկուսի շրջանի սկաուտները 2025 տարին սկսեցին նոր գիտելիքների ձեռքբերումներով։ Յունուարին սկաուտների մօտ սկսուեց Բ. կարգի սեմինարը։

Սեմինարի շրջանակներում սկաուտները այցելեցին Սուլը Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի։ Զուր չէ, որ սկաուտները երդուում են լինել հաւատարիմ Աստծուն։ Կրօնը մեծ դեր է խաղում սերունդ դաստիարակելու գործում, քանզի այն ձեւաւորում է բարոյական արժեքներ եւ սկզբունքներ, որոնք օգնում են ցուցաբերելու օրինակելի վարքագիծ։

Փետրուարին եւս մէկ նպատակ դար-

ձաւ իրականութիւն։ Գիտելիքների ձեռքբերման տարուան սկիզբը նշանաւորուեց նաեւ գայլիկների համար։ Նրանք յաջողութեամբ աւարտեցին «Կակուղ թաթիկ» կարգի սեմինարը։ Հիանալի մթնոլորտն անպահաս էր՝ յագեցած ազգային երգ ու պարով, սկաուտական կանչերով ու ծափերով, ինչպէս նաեւ ձեռային աշխատանքներով։

Մենք արդէն բացել ենք մոկլիների խմբեր, որոնք նախատեսուած են 3-6 տարեկան երեխաների համար։ Այստեղ փոքրիկները կը զարգացնեն թիմում աշխատելու եւ հասարակութեան մէջ հա-



մարկուելու հմտութիւններ, որոնք կ'օգնեն նրանց տարբեր ոլորտներում։ Դարձեալ Փետրուարին, Հ.Մ.Լ.Մ.Ի Արցախի մեկուսի շրջանի սկաուտական աստիճանաւորական կազմը՝ ծնողական խորհրդի աջակցութեամբ, կազմակերպել էր միջոցառում Տեառնընդառաջ (Տընդէզ) եկեղեցական տօնի կապակցութեամբ։

Միջոցառումը սկսուեց հոգեւորականի խօսքով, ով բացատրեց Տընդէզի խորհուրդը եւ վառեց կրակը։ Այնուհետեւ միջոցառումն ամբողջացաւ ազգային պարերով ու երգերով՝ տալով իր իւրայատուկ համն ու հոտը։

Տընդէզը խորհրդանշում է Աստծոյ եւ մարդկութեան հանդիպումը, որտեղ Աստուած իր սիրով եւ ողորմութեամբ լուսաւորում է աշխարհը։ Կրակը, իր հերթին, խորհրդանշում է այն աստուածային լրյուր, որը մուտք է գործում աշխարհ։

Միջոցառմանը ներկայ էին Հ.Մ.Լ.Մ.Ի կենտրոնական Վարչութիւնից, Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Մ.Կ.-ի վարչութիւնից եւ սկաուտներից, Արցախի կենտրոնական կոմիտէի անդամներից, Արցախի Հ.Ֆ.Երիտասարդական եւ պատանեկան միութիւնների անդամներ եւ սկաուտների ծնողներ։





## ԱՅՅՈՒԹԵԼՈՒՐԻ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՊԱՆԹԷՌՆ



### Թղթակից ԵՐԵՒԱՆ

Հաւատարիմ աւանդոյթին, Կիրակի, 22 Դեկտեմբեր 2024-ին, սկաուտական շարքերով այցելեցինք Եռաբլուր՝ Ամանորի նախաշեմին խնկարկելու մեր հերոս նահատակների անմահ յիշատակը:

Մենք անսահման երախտապարտ ենք բոլոր նրանց, ովքեր իրենց կեանքը զոհաբերեցին յանուն մեր հայրենիքի ազատութեան ու խաղաղութեան:

Շիրիմների մօտ՝ լուռ խոնարհումով, վերստին զգացինք մեր պարտքը՝

ապրելու արժանապատիւ կերպով եւ շարունակելու նրանց թողած պատգամը:

Հոգեւոր գարթօնքի շունչն ամփոփւեց Սրբոց Վարդանանց Նահատակաց եկեղեցում անցկացուած հոգեհանգստեան կարգի ընթացքում, որտեղ աղօթեցինք նրանց հոգիների խաղաղութեան համար:

Այս օրը դարձաւ ոչ միայն յիշատակի, այլև վերարժեւորման խորհուրդ՝ ամրապնդելով մեր հաւատարմութիւնը հայրենիքին: Շնորհակալութիւն բոլոր նրանց, ովքեր մեզ հետ կիսեցին այս օրը: Յիշատակը յաւերժ է...





## 2025-Ը ԹԷԺ Է ԼԻՆԵԼՈՒ

### Թղթակից ԵՐԵՒԱՆ

**28** Դեկտեմբեր 2024-ին Հ.Մ.-  
Հ.Մ.-Հ.Ա.Ա.Կ.ը ամփոփեց  
իր բուռն ու արգասարեր  
2024 թուականը: Ամփոփումը վարեց  
Հ.Մ.Հ.Մ.-Հ.Ա.Ա.Կ.ի կենտրոնական  
Վարչութեան ատենապետ եղբ. Արթիւր  
Մկրտչեանը՝ ընդգծելով տարուան ըն-  
թացքում կազմակերպութեան ունեցած  
յաջողութիւնները, նուաճումներն ու  
նոր անդամներ ներգրաւելու կարեւո-  
րագոյն նախաձեռնութիւնները:  
Հանդիպմանը ներկայ էին Կենտրո-

նական Վարչութեան անդամները, Հ.Մ.-  
Հ.Մ.-ի կենտրոնական Վարչութեան ան-  
դամ քոյլ Սանարա Վարդանեանը, Երե-  
ւանի եւ միւս մասնաճիւղերի վարչու-  
թեան անդամները, ինչպէս նաև սկաու-  
տական շարքերի պատասխանատունե-  
րը:

Քննարկուեցին մի շարք հարցեր, ինչ-  
պէս նաև 2025-ի ծրագրեր, որոնց չնոր-  
հիւ Հ.Մ.Հ.Մ.-Հ.Ա.Ա.Կ.ը կը շարունակի  
իր առաքելութիւնը՝ հաստատակամ լի-  
նելով նորանոր բարձունքներ նուաճելու  
եւ նոր ծրագրեր իրականացնելու:  
2025-ը թէժ է լինելու:



## Հ.Մ.Հ.Մ.Ի ԹԻՖԼԻՍԻ ՄԱՍՆԱՅԻՒՂԻ ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

### Թղթակից ԹԻՖԼԻՍ

Շաբաթ, 1 Փետրուարին, Հ.Մ.Հ.Մ.-ի թիֆլիսի մասնաճիւղը ունեցաւ մար-  
զական գործունէութիւն: Մասնաճիւղին վոլիպոլի խումբերը մրցեցան իրա-  
րու դէմ:

Ցայտնենք, որ խումբերը կազմուած են սկաուտներէ, որոնք իրենց ազատ  
ժամերուն կը զբաղին մարզական գործունէութեամբ:



## Հ.Ա.Ը.Ս.-Հ.Ա.Ս.Կ.Ի 2025-Ի ՄԵԿՆԱՐԿԸ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԵՌՆԱՐԿՆԵՐՈՎ

### Թղթակից ԵՐԵՒԱՆ

**Ա**րժի եւս մէկ անգամ փաստել, որ 2024-ը Հ.Ա.Ը.Ս.-Հ.Ա.-Ս.Կ.ի համար աւելի քան բուռն էր ու տպաւորիչ: Այն ոչ միայն յափեցած էր սկաուտական ամենատարբեր ծրագրերով, այլև նշանաւորուեց Հ.Ա.Ը.Ս.-Հ.Ա.Ս.Կ.ի 35-ամեակին նույնական յորելենական միջոցառումներով:

Իսկ 2024-ի աւարտին՝ Դեկտեմբերի 14-19-ը, Տուլայի Ալ Մարմօմ բնապահպանական արգելոցում (Ա.Մ.Է.) կազմակերպուած սկաուտական միջազգային բանակումին Հ.Ա.Ը.Ս.-Հ.Ա.Ս.Կ.ը մասնակցեց արիների 5 հոգանոց խմբով (պատուիրակութեան ղեկավար՝ Մարտիկ Փիլոյեան՝) լինելով միակ ոչ արաբախօս պատուիրակութիւնը՝ 19 մասնակից պատուիրակութիւնների կազմում: Բանակումը նպատակ ունէր զարգացնել երիտասարդների Փիզիքական եւ մշակութային կարողութիւնները, կարեւորել շրջակայ միջավայրի եւ վայրի բնութեան պահպանութիւնը:

2025 թ.ի հէնց սկզբին (Փետրուարի 8-17, 2025 թ.) Հ.Ա.Ը.Ս.-Հ.Ա.Ս.Կ.ը մասնակցեց գարձեալ Ա.Մ.Է.-ում՝ այս անգամ Շարժայում կազմակերպուած

10-րդ միջազգային սկաուտական հաւաքին: Հ.Ա.Ը.Ս.-Հ.Ա.Ս.Կ.ը ներկայացրեց Խաչիկ Թաղեւոսեանը: Երէցների համար կազմակերպուած 10-օրեայ այս ծրագրի նպատակն էր մշակոյթների փոխանակումը, առաջնորդութեան զարգացումը, համագործակցութեան ամրապնդումը աշխարհի սկաուտների միջեւ:

Մէկ այլ կարեւոր ձեռնարկի՝ NEXUS միջազգային կրթական ծրագրին, Հ.Ա.Ը.Ս.-Հ.Ա.Ս.Կ.ը մասնակցեց Մարտի 5-9-ը՝ Ալպանիոյ Շկոտրա քաղաքում: Հ.Ա.Ը.Ս.-Հ.Ա.Ս.Կ.ի 7 քոյրերից կազմուած պատուիրակութիւնը ղեկավարում էր Արմաւիրի «Վ. Բախչեան»

մասնաճիշդի ատենապետուհի Նարէ Խլպաթեանը: Ծրագիրը եզակի հնարաւորութիւն էր մեր մասնակիցների համար՝ զարգացնելու առաջնորդական հմտութիւններն ու աւելի լաւ ճանաչելու սկաուտութեան ուժը:

5-օրեայ ծրագրի ընթացքում Հ.Ա.Ը.Ս.-Հ.Ա.Ս.Կ.ի քոյրերը մասնակցեցին առաջնորդութեանը վերաբերող թիմային աշխատանքների, զարգացրին ուսումնական մտածողութիւնը, հաղորդակցական հմտութիւնները: NEXUS միջազգային կրթական ծրագրի շրջանակներում Հ.Ա.Ը.Ս. Եւրոպական տարածաշրջանի աջակցութեամբ հրատարակ-





ւեցին նաեւ սկաուտական ուղեցոյցներ, որոնց՝ անգլերէնից հայերէն թարգմանութիւնն ու խմբագրական աշխատանքը վերապահուած էր Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ին, ինչն իրականացուեց ամենայն պատասխանատութեամբ, յառուր պատշաճի:

Միջազգային այս բոլոր ծրագրերի ընթացքում կազմակերպուած մշակութային օրուան շրջանակում հայ սկաուտները ներկայացրին ո՛չ միայն Հայաստանի պատմութիւնը, երդն ու պարը, այլև ազգային խոհանոցը՝ օտար մասնակիցներին հիւրասիրելով մեր աւանդական ուտեսաներն ու անուշեղէնը:

Միջազգային բոլոր ձեռնարկներին մասնակցելով՝ Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի սկաուտներն իսկապէս ձեռք բերեցին ո՛չ միայն փորձառութիւն, այլեւ նոր գիտելիքներ, կապեր եւ հնարաւորու-



թիւներ՝ առաջ տանելու մեր կարգախոսը՝ «Բարձրացի՞ր-բարձրացրու»:





## Թղթակից Պուրճ ԿԱՄՈՒՏ

**ովանաւորութեամբ Հ.Ս.-Լ. Մ.ի Պուրճ Համուտի մասնածիւղի վարչութեան, կազմակերպութեամբ Հ.Ս.-Լ. Մ.ի Պուրճ Համուտի մասնածիւղի Սկաուտ. Խորհուրդին եւ խմբապետական կազմին, Կիրակի, 1 Դեկտեմբեր 2024-ին, Ազգ. Լ. եւ Ս. Յակոբեան քոլէճի բակին մէջ տեղի ունեցաւ 2024-2025 տարեշրջանի եւ մասնածիւղի հիմնադրութեան 90-ամեակի սկաուտական պաշտօնական վերամուտը՝ ներկայութեամբ Հ.Ս.-Լ. Մ.ի Լիբանի Շրջանային Վարչութեան անդամներուն, Շրջանային Սկաուտ. Խորհուրդի եւ խմբապետական կազմի, ինչպէս նաև Հ.Ս.-Լ. Մ.ի Պուրճ Համուտի մասնածիւղի նախկին խմբապետներու եւ շքանի պատկան մարմիններու ներկայացուցիչներու:**

### ՏՈՂԱՆՑՔԸ

Պաշտօնական վերամուտը սկիզբ առաւ մասնածիւղային սողողանցքով մը, առաջնորդութեամբ արի խումբի անդամներէ բաղկացած նուագախումբին: Մասնածիւղին անդամները խրոխտ քայլերով եւ կարգապահ շարքերով տողան-

շեցին Պուրճ Համուտի հրապարակին շրջակայքը: Յնցիչ էր այն պահը, երբ ժողովուրդը խանդավառութեամբ եւ յուսավի աչքերով կը դիտէր անդամներուն տողանցքը:

### ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Տողանցքին աւարտին, բոլորը ներկայացան դաշտ, ուր տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն: Լիբանանի, Հայաստանի, Արցախի եւ «Ով հայ արի» քայլերգներուն հետ, խորհրդանշական ձեռայինին վրայ բարձրացան դրօշակները: Քայլերգներէն ետք, Հ.Ս.-Լ. Մ.ի

Պուրճ Համուտի մասնածիւղի վարչութեան խօսքը փոխանցեց քոյր Մարիա Գոլաքեան: Ողջունելէ ետք ներկաները, քոյրը յայտարարեց մասնածիւղի 90-ամեակի աշխատանքներուն մեկնարկը: Գոլաքեան նշեց: «Հ.Ս.-Լ. Մ.ի Պուրճ Համուտի մասնածիւղի իւրաքանչիւր անդամ քաջ կը գիտակցի միասնական գործելու անհրաժեշտութեան, վստահութեան, անկեղծութեան, փոխադարձ հասկացողութեան ծառայութեան եւ այլն: Այս գրաւականներու հաւատքով է, որ մասնածիւղը յառաջդիմած է յաջողութեամբ եւ հասած է մինչեւ 90-ամեակ: Գոտեանդուած այս հաւատքով՝ հաստա-



տուն քայլերով կը յառաջանանք դէպի մասնաճիւղի 100-ամեակ եւ, ինչու ոչ, 100 ամեակներ»:

Խօսք առաւ նաեւ Հ.Մ.Լ.Մ.ի Լիբանանի Շրջանային Ընդհանուր Խմբապետ քոյր Ալիք Տէր Պետրոսեան-Մելքոնեան: Քոյրը չնորհաւորեց մասնաճիւղին 90-ամեակը, անդրադարձաւ Շրջանային Խմբապետութեան ծրագրած հետագայ աշխատանքներուն եւ յայտարարեց Rally տարի:

Օրուան պատգամը փոխանցեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան երիտասարդ միաբաններէն Գէորգ Վրդ-Գարակէօզեան: Ան բարձր գնահատեց Հ.Մ.Լ.Մ.ի գերակատարութիւնը հայ կեանքին մէջ եւ շեշտեց սկառուտական խոստումին գործադրութեան կարեւորութիւնը:

Պատգամէն ետք ներկաներուն յայտարարուեցաւ Հ.Մ.Լ.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի 90-ամեակի նշանակը եւ նշանախօսքը: Արարողութիւնը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

## ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՑԱՅՏԱԳԻՐԸ

Դրօշակի արարողութենէն ետք տեղի ունեցաւ գեղարուեստական յայտագիր: Անդամները զանազան կատարումներով, տպաւորիչ ձեւով ներկայացուցին Հ.Մ.Լ.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի 90-ամեայ փառաւոր պատմութիւնը, մասնաճիւղին նուաճումները եւ տարիներու ընթացքին դիմագրաւած դժուարութիւնները: Անոնք նաեւ երգով յաւեր-



ժացուցին Շուշիի ազատագրութեան կոիւներուն նահատակուած հերոս, մասնաճիւղի նահատակ եղբ. Վիգէն Զաքարեանի յիշատակը:

Յայտագիրի աւարտին ընթերցուեցաւ խմբապետութեան խօսքը:



## ՋԱՀԱՎԱՌՈՒԹԻՒՆԸ

Ցանկութեց խորհրդաւոր ջահավառութիւնը: Մասնաճիւղի նախկին խմբապետ եղբ. Ռաֆֆի Քէշիշեան նոր սերունդին փոխանցեց միութեան 90-ամեայ ջահը. եղբօր ընկերակցեցան մասնաճիւղի խումբ մը վեթերան խմբապետներ: Բոցավարեցան 8 ջահեր, որոնք կը խորհրդանշէին մասնաճիւղին սկառտական 8 խմբաւորումները:

Ջահավառութիւնը աւարտեցաւ հետեւեալ խօսքով «Եւ այսպէս, մասնաճիւղին 90 տարի պահպանուած ջահը մեզի փոխանցուելով միշտ պիտի բոցավաէ մեր բոլորին սիրտերն ու հոգիները: Կը խոստանանք հաւատարիմ մնալ ազգին եւ միութեան: Ամբողջ ուժով աշխատիլ հայ ժողովուրդին նպատակներու իրագործման համար եւ այս յարատեւ տքնաջան աշխատանքը խորհրդանշող անմառ ջահը փոխանցել մեզի յաջորդող սերունդներուն:»:



## ՅԱԶՈՐԴԱԲԱՐ Զ-ՐԴ ՏԱՐԻՆ ՀԱԼԱԼՈՎ

# Հ.Մ.Ը.Ա. ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՄԱՍՆԱԿԻՂ ՇԱՐՁԵԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԿՈՂՔԻՆ

Թղթակից

ՊՈՒՐՃ ՀԱՍՈՒՏ

**Հ**աւատարիմ մնալով սկառուտական խոստումին, դաւանանքին եւ տարիներու աւանդութեան, Զ-րդ տարիին ըլլալով, Հ.Մ.-Հ.Մ.-ի Պուրճ Համուտի մասնաճիւղի վարչութեան հովանաւորութեամբ եւ մասնաճիւղի Սկառուտ. Խորհուրդին եւ խմբապետական կազմին կազմակերպութեամբ, Շաբաթ, 28 Դեկտեմբեր 2024-ի երեկոյեան տեղի ունեցաւ «Make A Dish» մարդասիրական աշխատանքը:

«Make A Dish»ի այս տարուան նախաձեռնութիւնը նույիրուած էր Հ.Մ.-Հ.Մ.-ի Պուրճ Համուտի մասնաճիւղի հիմնադրութեան 90-ամեակին: Առ այդ, նախաձեռնութեան հրաւիրուած էին 90 ընտանիքներ:

Հնտանիքները հիւրընկալելէ ետք, մասնաճիւղի խմբապետական կազմին խօսքը արտասանեց միաւորի խմբապետ քոյլը էւա Ղազարեան: Շնորհակալութիւն յայտնելով նախաձեռնութեան նույիրատուներուն՝ քոյլը ըսաւ, որ նման նախաձեռնութեաններ կը փաստեն, թէ որքա՞ն ալ գդուար ըլլան երկրին մէջ տիրող պայմանները, միութեան աշխատանքը կանգ չ'առներ ու պիտի

չառնէ, այլ հակառակը՝ աւելի ոգեւորւած եւ աւելի կազմակերպուած պիտի շարունակէ իր առաքելութիւնը:

«Իբրև Հ.Մ.-Հ.Մ.-ի Պուրճ Համուտի մասնաճիւղ՝ մեզի համար հպարտութիւն է տեսնել հայ ընտանիքներ՝ նոր տարուան սեղանին շուրջ համախմբըւած: Այսօր մենք հաւաքուած ենք ո՛չ միայն ճաշակելու մեր սկառուտներուն կողմէ պատրաստուած ճաշերը, այլեւ հաւաքուած ենք միասնաբար անցընելու գեղարուեստական ճոխ յայտագիրով լեցուն անմոռանալի երեկոյ մը», ըսաւ քոյլը:

Խօսքի աւարտին մասնաճիւղի վարչութեան, Սկառուտ. Խորհուրդին եւ խրմբապետական կազմին անունով քոյլը էւա Ղազարեան շնորհաւորեց ներկանե-

րուն նոր տարին եւ Սուրբ Ծնունդը՝ մաղթելով յաջողութիւն եւ փափաք-ներու իրականացում, այն յոյսով, որ 2025-ը ըլլայ խաղաղութեամբ եւ ուրախ օրերով լեցուն տարի մը:

Մասնաճիւղի խմբապետական կազմին խօսքէն ետք տեղի ունեցաւ սկառուտներու կողմէ պատրաստուած գեղարուեստական կոկիկ յայտագիր: Անդամները տօնական երգերով, պարերով, նուագով, զանազան տեսակի խաղերով եւ բարեմաղթութիւններով ճոխացուցին երեկոն եւ ստեղծեցին տօնական ջերմ մթնոլորտ: Գեղարուեստական յայտագիրէն ետք ներկաները ճաշակեցին սկառուտներուն կողմէ պատրաստուած տաք ու համեղ ճաշերը եւ միասնաբար անցուցին ուրախ ժամանակ:

Ցայտագիրի աւարտին ներկաները դիմաւորեցին «Հայ շեփոր» խումբն ու կաղանդ Պապան, որ նուէրներ տուաւ մանուկներուն:

Նշենք, որ մասնաճիւղի խմբապետական կազմը շրաւարարուեցաւ միայն ընտանիքներ հրաւիրելով: սկառուտներու կողմէ պատրաստուած տաք ճաշերը փոխարուեցան տուները անոնց, որոնք կամքէ անկախ պատճառներով կարողութիւնը չունէին ներկայանալու իրախանքին:





## ՀԱՂՈՐԴՎԳՐՈՒԹԻՒՆ

**Ք**Ա.Ը.Ը.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը այսու կու գայ տեղեկացներու, թէ անցնող ամիսներու հետեւողական աշխատանքով, լիբանանեան մարզական ֆետերասիոններու ընտրութիւններու իր մասնակցութիւնն ու ներկայութիւնը հասան իրենց աւարտին:

Նշենք, թէ վերջին հանգրուանով՝ Ուրբաթ, 7 Մարտին, «Ք.Ա.Ը.Ը.- Աղբալեան» մարզամշակութային համալիրին մէջ տեղի ունեցան Լիբանանի հեծելարշատի ֆետերասիոնի ընտրութիւնները, ներկայութեամբ դատական մարմինն նշանակւած արդարադատութեան նախարարութեան փորձագէտի, երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարութեան ներկայացուցիչի եւ քուէարկելու իրաւունք ունեցող եօթը ակումբներէն վեցի ներկայացուցիչներուն եւ թեկնածուներուն: Այս ընտրութիւններուն Ք.Ա.Ը.Ը.ի չորս թեկնածուները ընտրուեցան Լիբանանի հեծելարշատի ֆետերասիոնի եօթնանդամ կազմի անդամներ՝ հետեւեալ ձեւով:-

Եղբ. Քրայր Սեղոյեան- նախագահ  
Քյոյ Արտա Զեյթունլեան- գանձապահ  
Եղբ. Նազօ Չապիպեան- հաշուապահ  
Եղբ. Կարպիս Արգարեան- խորհրդական

Ստորեւ կը ներկայացնենք Ք.Ա.Ը.Ը.ի Լիբանանի մարզական ֆետերասիոններուն մօտ ներկայացուցիչներուն վերջնական պատկերը:-

1. Ակաուտական ֆետերասիոն- եղբ. Վաչէ Նամարեան
2. Պասքեթպոլի ֆետերասիոն- եղբ. Չայկ Թապագեան
3. Արլէրի ֆետերասիոն- քոյր Մարիա Գէորգեան
4. Խոշի ֆետերասիոն- եղբ. Ժագ Տաղլեան (Անձարի Ամիթիէի ներկայացուցիչ)- փոխ նախագահ եւ եղբ. Սագօ Դարբինեան
5. ճատրակի ֆետերասիոն- եղբ. Էլի Ջուլիշեան
6. Հեծելարշատի ֆետերասիոն- եղբ. Քրայր Սեղոյեան՝ նախագահ
7. Քոյր Արտա Զեյթունլեան- գանձապահ  
Եղբ. Նազօ Չապիպեան- հաշուապահ  
Եղբ. Կարպիս Արգարեան- խորհրդական
7. MMA-ի ֆետերասիոն- եղբ. Վարուժ Քէշիշեան

Յաջողութիւն բոլոր ընտրեալներուն:

Ք.Ա.Ը.Ը.ի Լիբանանի  
Շրջանաձիւն Վարչութեան



## Հ.Մ.Ը.Ա. ՊԵՅՉՐՈՒԹԻ, ԱՆԹԻԼԻԱՍԻ, ԺԼՏԵՅՑՏԻ ԵՒ ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՄԱՄԱԳԻՆԴԵՐՈՒ ԶԻՒԱԳՆԱՑՈՒԹԻՒՆԵՐԸ ԵՒ ԶԻՒՆԻ ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐԸ

**Մ**արտի առաջին եւ երկրորդ շաբաթավերջերը Հ.Մ.Ը.Ա. Լ.Մ.Ը.ի Լիբանանի չորս մասնաճիւղերու սկառուտներուն համար եղան հաճելի եւ անմոռապալիք: Արդարեւ, Հ.Մ.Ը.Ա. Պէյշրութի, Անթիլիասի, Ժլտեյցտի մասնագույն հաճելի եւ անմոռապալիք: Արդարեւ, Հ.Մ.Ը.Ա. Պէյշրութի, Անթիլիասի, Ժլտեյցտի մասնագույն հաճելի եւ անմոռապալիք: Արդարեւ, Հ.Մ.Ը.Ա. Պէյշրութի, Անթիլիասի, Ժլտեյցտի մասնագույն հաճելի եւ անմոռապալիք:

### ՊԵՅՉՐՈՒԹԻ ՄԱՄԱԳԻՆԴԻ ՀԱՅՐԱՎԵՐ

Հ.Մ.Ը.Ա. Պէյշրութի մասնաճիւղը աւանդական իր ձիւնագույթիւնը կատարեց «Sun City Resort»ին մէջ, ուր սկառուտական բոլոր խումբերը ջերմ, հաճելի եւ ընտանեկան մթնոլորտի մէջ իրագործեցին իւրաքանչիւր խումբի համար նախատեսուած յայտագիրները:

Կիրակի, 9 Մարտ 2024-ին, մոկլի, գայլիկ, արծուիկ, երէց եւ պարմանուհի խումբերը ձիւնով խաղացին, հաւաքաբար ճաշեցին եւ անմոռանալի յիշատակներով բեռնաւորուած՝ վերադարձան տուն: Իսկ արի-արենոյշ խումբերը՝ երկար սպասումէ ետք, «Sun City Resort»էն մեկնեցան ձիւնի բանակումի:

Նշենք, որ ձիւնագույթեան մասնակցեցան նաեւ անդամներու ծնողները, որոնց համար կազմակերպուեցաւ մտերմիկ երեկոյ:

### ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՄԱԳԻՆԴԻ ՀԱՅՐԱՎԵՐ

Հ.Մ.Ը.Ա. Պէյշրութի Անթիլիասի մասնաճիւղը ձիւնի բանակումը կատարեց Քանաթ Պաքիչի մէջ: Բանակումին մասնակցեցան մասնաճիւղին երէց փաղանգի եւ արի խումբի անդամները:

Երկօրեայ ձիւնի բանակումը արդէն դարձած է սկառուտական կեանքի անբա-



ժանգրուան: Հետեւաբար, առաջոտեան, արեւածագին, սկառատները ուղղուեցան բանակավայր եւ մեծ խանդապառութեամբ լարեցին իրենց վրանները: Շուտափ բանակավայրը պատրաստէր: Անդամները մասնակցեցան զանազան յայտագիրներու՝ ինչպէս ձիւնախաղեր, արշաւ շրջակայ լեռներու վրայ: Անոնք լիովին վայելեցին բնութեան գեղեցկութիւնը:

Գիշերը, խարոյկին շուրջ, սկառատներ երգեցին սկառատական կանչեր եւ ազգային երգեր: Կիրակի, առաջօտեան, անոնք արշաւեցին բանակավայրին շրջակայքը, ապա տուն վերադարձան անմոռանալի յիշատակներով:

### ԺԼՏՔՑՏՔԻ ՄԱՄԱՋԻՒԴԻՂ

Հ.Մ.Լ.Մ.ի ժըտէյտէի մասնաճիւղը եւս ձիւնի բանակումը կատարեց Քանաթ Պարիշի մէջ: Արդարեւ, մասնաճիւղին արի խումբի անդամները, «Դաւիթ Բէկ» փաղանգի երէցներն ու «Սուէ Մայրիկ» փաղանգի պարմանուհիները մասնակցեցան այս բանակումին: Անոնք քաջաբար դիմացան ցուրտին եւ վայելեցին առանձնայատուկ պահեր՝ լեցուն արկածախնդրութիւններով եւ խանդապառութեամբ:

Բանակումը տեղի ունեցաւ լեռնային ձիւնածածկ միջավայրի մը մէջ, ուր սկառատները առիթը ունեցան խաղալու ձիւնի զանազան խաղեր, մրցելու իրենց լնկերներուն հետ եւ զարգացնելու իրենց սկառատական հմտութիւնները: Անոնք արշաւեցին ձիւնածածկ լեռան վրայ, սահեցան ստորոտը եւ խաղացին զանազան խաղեր, իրենց շրջապատը լեցընելով խնդրով եւ ուրախութեան բացադանչութիւններով:

Երեկոյեան, սկառատները հաւաքուեցան խարոյկին շուրջ. երգեցին, պարեցին եւ պատմեցին հետաքրքրական պատմութիւններ: Բոցին ջերմութիւնը վայելերով, անոնք ամրապնդեցին իրենց սկառատական կապերը, բաժնեկցելով ուրախ եւ



ջերմ պահեր: Խարոյկին շուրջ ծաղկեցաւ խակական սկառատական ողին եւ խանդապառ մթնոլորտի հետ տիրեցին սէրն ու միասնականութիւնը:

Ձիւնի այս բանակումը մեծ փորձառութիւն էր բոլոր սկառատներուն համար, որոնք սորվեցան դիմակայել ցուրտին, զարգացնել խմբային աշխատանքի իրենց հմտութիւնները եւ ամրապնդել սկառատական արժէքները: Անոնք տուն վերադարձան հաճելի եւ լաւագոյն յիշատակներով, անհամբեր սպասելով նմանօրինակ յաջորդ յայտագիրին:

### ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՄԱՄԱՋԻՒԴԻՂ

Հ.Մ.Լ.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի տարեկան ձիւնացութիւնը տեղի ունեցաւ շաբաթ մը ետք, Կիրակի, 18 Մարտ 2025-ին, կազմակերպութեամբ մասնաճիւղին Սկառատական Խորհուրդին եւ խմբապետական կազմին:

Ձիւնագնացութենէն առաջ, սկառատներ այցելեցին Զմմառու հայ կաթողիկէ դարաւոր վանքը, ծանօթացան վանքի զանազան բաժիններուն եւ ապա ուղղուեցան Քֆարարպիան, ուր հաճելի եւ անմոռանալի պահեր անցուցին ձիւնի զանազան խաղերով, ձիւնեմարդ շինելով, երգերով ու կանչերով:

Այսպէս, Մարտ ամսուան առաջին երկու շաբթուան ընթացքին բազմահարիւր սկառատներ բնութեան վայելքը ապրեցան, մթնոլորտ փոխեցին եւ լնկերային հաճելի պահեր անցուցին՝ հաճելին եւ օգտակարը միացնելով իրարու: Անոնք կազմուրուած վերադարձան իրենց ակումբները՝ նոր խանդապառութեամբ շարունակելու միութենական տարեշրջանը:





# ԽՄԲԱՊԵՏԻ ԱՍԻԲԱՎՆԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ

Թղթակից  
ՍՈՒՐԻԱ

**ովանաւորութեամբ Հ.Ս.Ը.Ը.-  
Մ.ի Սուրիոյ Շրջանային Սկա-  
ռատ. Խորհուրդին, Կիրակի, 2  
Փետրուար 2025-ին, Հ.Ս.Ը.Ը.Մ.ի պաս-  
քեթպոլի դաշտին մէջ տեղի ունեցաւ**



Խմբապետի աստիճանի տուչութիւն ձե-  
ռամբ՝ Սուրիոյ Շրջանային Խմբապետ  
եղբ. Ռաֆֆի Կարապետեանի եւ Շրջա-  
նային Խմբապետուհի քոյր Թամար  
Աւետեանի:

Խմբապետի աստիճան ստացան Հա-  
լէպի մասնաճիւղէն Հինգ քոյրեր եւ եղ-  
բայրներ-

Եղբ. Հրակ Փայասեան  
Քոյր Մարիանա Մարգարեան  
Քոյր Մելինէ Պէզճեան  
Քոյր Գառնի Կիւլիւմեան  
Եղբ. Արա Թահհան

Շրջանային Խմբապետն ու Խմբապե-  
տուհին յաջողութիւն մաղթեցին նոր  
խմբապետերուն եւ թելադրեցին, որ իւ-  
րաքանչիւրը տիպար Հ.Ս.Ը.Ը.ական  
օրինակ դառնայ նորահաս սերունդին՝  
միշտ բարձր պահելու միութեան դրօշը:

Աւարտին, Հալէպի մասնաճիւղի  
Սկառատ. Խորհուրդը յուշանուէր մը  
յանձնեց Շրջ. Խորհուրդի ատենապե-  
տին:

Գործունէութիւնը փակուեցաւ «Ով  
հայ արի» քայլերգով:



Թղթակից  
ԼԱԹԱՔԻԱ

**Կ ազմակերպութեամբ Հ.Ս.Ը.Ը.ի Լաթաքիոյ մասնա-  
ճիւղի վարչութեան, Երեքարթի, 18 Փետրուար 2025-  
ին տեղի ունեցաւ թեքուանտոյի գօտիներու տուչու-  
թիւն եւ վկայականաց բաշխման հանդիսութիւն:**

Յայտնենք, որ թեքուանտոյի փորձերը ակումբին մէջ ըն-  
թացան չաբաթը երկու անգամ, մարզիչ ունենալով իլիաս Ես-  
պէրը:

Թեքուանտո մարզաձեւին վարչութեան ներկայացուցիչ-  
ներն են քոյր Ալին Գաբրիէլեան եւ Եղբ. Սագո Ներսէսեան:

## ԹԵՔՈՒԱՆՏՈՅԻ ԳՈՏԻՆԵՐՈՒ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԿԱՅԱԿԱՆԱՑ ԲԱՇԽՈՒՄ ԼԱԹԱՔԻՈՅ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ՄԵԶ

Տարուան մը յարատեւ մարզումներէ ետք, թեքուանտո մար-  
զաձեւին հետեւող ինը քոյրերն ու եղբայրները հանդէս եկան  
մարզական ձկուն ձեւերով՝ խանդավառելով ներկաները:

Աւարտին, մասնաճիւղին վարչութիւնը մարզիկներուն  
յանձնեց թեքուանտոյի գօտի եւ վկայական:





## Հ.Մ.Լ.Մ.Ի ԳԱՄԻՇԼԻԻ ՄԱՍՆԱՅԻՒՂԻ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

**Թղթակից  
ԳԱՄԻՇԼԻ**

Հ.Մ.Լ.Մ.Ի Գամիշլիի մասնաճիւղը տարեկան անդամական Հնդկանուր ժողովը գումարեց Կիրակի, 23 Փետրուար 2025-ին, երեկոյան ժամը 5-ին, Հ.Մ.Լ.Մ.Ի ակումբին մէջ, ներկայութեամբ Հ.Մ.Լ.Մ.Ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան լիազօր ներկայացուցիչ քոյր Անի Սարգիսեանի:

Մասնաճիւղի ատենապետ եղբ. Անդրանիկ Սարգիսեան ժողովը բացուած յայտարարեց «Յառաջ նահատակ» քայլերգով եւ ներկաները հրաւիրելով վայրկեան մը յոտնկայս յարգելու յիշատակը մեզմէ յաւէտ բաժնուած հին ու նոր Հ.Մ.Լ.Մ.ականներու: Հնթերցուեցաւ վարչութեան միամեայ գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագիրը: Ներկաները արձարծեցին մասնաճիւղը յուզող զանազան հարցեր եւ համապատասխան լուսաբանութիւններ ստացան վարչութենէն:

Ժողովի աւարտին անդամական Հնդկանուր ժողովը ընտրեց իննանդամ նոր վաչութիւն: Այս առիթով Շրջանային Վարչութեան խօսքը փոխանցեց Շրջանային Վարչութեան լիազօր ներկայացուցիչ քոյր Անի Սարգիսեան:

Ժողովը փակուեցաւ «Ով հայ արի» քայլերգով:

Նորընտիր վարչութիւնը իր առաջին նիստին աշխատանքներուն բաժանումը

կատարեց հետեւեալ ձեւով: -  
Եղբ. Անդրանիկ Սարգիսեան - ատենապետ

Քոյր Մարալ Սարգիսեան - ատենապետուհի  
Եղբ. Արամ Աւետիսեան - գանձապահ

Քոյր Թամար Յովհաննէսեան - հաշւապահ

Քոյրեր Մարալ Պետրոսեան, Ատուր Ադամեան, Շանթ Պետրոսեան, Սերոբ Վալյոյեան, Կիկօ Խաչատրութեան - խորհրդականներ





## Հ.Մ.Ը.Ա. ԼԱԹՎԱՔԻՈՅ ՄԱՍՆԱՅԻԴԻՆ ԱՆԴԱՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Թղթակից  
ԼԱԹՎԱՔԻՆ

**Պ**արբաթ, 28 Փետրուար 2025-ին, Լաթվաքիոյ ակումբին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Ա. Լաթվաքիոյ մասնաճիւղի անդամական լնդհանուր ժողովը, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Ա. Սուրբիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յարութ Օքնեանի եւ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Յարութ Գաբրիէլեանի:

2024-2025 տարեշրջանի ընթացաւարտ վարչութեան նիւթաբարոյական տեղեկագիրը ընթեղյելէ ետք, ժողովը քննարկեց վարչութեան միամեայ գործունէութիւնը եւ գնահատեց անոր տարած աշխատանքը, ապա առաջարկներ ներկայացուեցան յառաջիկայ շրջանի նորընտիր վարչութեան: Այնուհետեւ կատարուեցաւ նոր վարչութեան ընտրութիւն: Ընտրուեցան հետեւեալները - եղբ. Յովհաննէս Պարութճի, քոյլր Ալին:

Գաբրիէլեան, եղբ. Սագո Ներսէսեան, քոյլր Մարալ Ճերմակեան եւ քոյլր Լենա Հանչչեան:

Աւարտին, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յարութ Օքնեան փոխանցեց իր սրտի խօսքը՝ չնորհակալութիւն յայտնելով ընթացաւարտ վարչութեան եւ չնորհաւորելով նորընտիր վարչութիւնը եւ անոր մաղթելով բեղուն աշխատանք: Եղբայրը նաեւ բացատրութիւններ տուաւ Լիբանանի մէջ կայանալիք Միջին Արեւելքի ցամաքամասային բանակումին եւ Համա-Հ.Մ.Ը.Ա. ական 12-րդ մարզախաղերուն մասին (Երեւան, Հայաստան):

Իր կարգին, Շրջանային Վարչութեան ներկայացուցիչը ընթեղյեց Սուրբիոյ Շրջանային Վարչութեան ուղարկած չնորհաւորագիրը, ապա իր սրտի խօսքը փոխանցեց ներկաներուն եւ նորակազմ վարչութեան՝ մաղթելով միշտ բարձր պահել Հ.Մ.Ը.Ա. նշանաբան «Բարձրացի՛ր-բարձրացուր»ը

## Հ.Մ.Ը.Ա. ՔԵՍԱՎԻ ՄԱՍՆԱՅԻԴԻՆ ԱՆԴԱՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Թղթակից  
ՔԵՍԱՎ

**Հ.Մ.Ը.Ա. Քեսավի մասնաճիւղին մէջ անդամական լնդհանուր ժողովը տեղի ունեցաւ Շաբաթ, 1 Մարտ 2025-ի առաւտեան ժամը 10-ին, Հ.Մ.Ը.Ա. կեդրոնին մէջ, ներկա-**



յութեամբ Հ.Մ.Ը.Ա. Սուրբիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յարութ Օքնեանի, Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Յարութ Գաբրիէլեանի, Շրջանային Վարչութեան անդամ եւ

լիազօր ներկայացուցիչ եղբ. Յակոբ Հանչեանի, Քեսավի մասնաճիւղի վարչութեան եւ Հ.Մ.Ը.Ա. ականներու:

Բացումը կատարուեցաւ «Յառաջնահատակ» քայլերով: Վարչութեան

միամեայ նիւթաբարոյական տեղեկագիրի ընթերցումէն ետք, ժողովը բարձր գնահատեց ընթացաւարտ վարչութեան կատարած աշխատանքը, ապա ներկայացուց զանազան առաջարկներ:

Ժողովի աւարտին Շրջանային Վարչութեան ատենապետը փոխանցեց իր սրտի խօսքը: Ան գնահատեց նախորդ վարչութեան աշխատանքը, չնորհաւորեց նորընտիր կազմը եւ յաջողութիւն ու բարի երթ մաղթեց անոր:

Հ.Մ.Լ.Մ.ի Քեսապի մասնաճիւղի նորընտիր վարչութիւնը կը բաղկանայ հետեւեալներէն.- եղբ Խաչիկ Զէլէպեան, քոյր Մեղրիկ Ղազարեան, եղբ. Շանթ



Լընդեան, եղբ. Սամուէլ Տէմիրճեան եւ եղբ. Սթիւ Պէօնիւքեան

Ժողովը փակուեցաւ «Ով հայ արի» քայլերգով:

## Հ.Մ.Լ.Մ.ի ԴԱՄԱԿՈՍԻ ՄԱՄԱՅԻՒՂԻ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ



Թղթակից  
ԴԱՄԱԿՈՍ

յական միամեայ տեղեկագիրի ընթերցումէն ետք, ժողովը քննարկեց ընթացաւարտ վարչութեան լիազօր եղբ. Պողոս Խաճարեանի:

նը եւ գնահատեց աշխատանքը, ապա ներկայացուեցան առաջարկներ:

Ժողովի աւարտին, եղբ. Պողոս Խաճարեան փոխանցեց Շրջանային Վարչութեան խօսքը, գնահատեց ժողովին հեղասահ ընթացքը եւ չնորհաւորեց նորընտիր կազմը՝ մաղթելով յաջողութիւն:

Հ.Մ.Լ.Մ.ի Դամասկոսի մասնաճիւղի վարչութեան նորընտիր կազմը բաղկացաւ հետեւեալ եղբայրներէն.- Միհրան Ղազարեան, Անդրանիկ Խաճարեան, Արա Խաճարեան, Վահան Գողանեան եւ Յարութեան:

**Հ.Մ.Լ.Մ.ի Դամասկոսի  
մասնաճիւղի անդամական  
կան Ընդհանուր ժողովը  
ը տեղի ունեցաւ Ուրբաթ, 7  
Մարտ 2025-ին, «Ահարոնեան»  
կեդրոնին մէջ, ներկայութեամբ  
Հ.Մ.Լ.Մ.ի Սուրբոյ Շրջանային  
Վարչութեան լիազօր եղբ. Պողոս  
Խաճարեանի:**

Մասնաճիւղի վարչութեան  
ատենապետ եղբ. Միհրան Ղազար-  
եան ժողովին բացումը կատարեց  
«Յառաջ նահատակ» քայլեր-  
գով: Վարչութեան նիւթաբարո-





## Հ.Ա.Ը.Ը. ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԿՈՒՍԻ ՇՐՋԱՆԻ ԱՆԴԱՄԱԿԱՆ 19-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

**Թղթակից  
Վիեննա**

**Հ.Ա.Ը.Ը. ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԿՈՒՍԻ  
Մարզականի անդամական 19-րդ  
Ընդհանուր ժողովը տեղի ու-  
նեցաւ Շաբաթ, 18 Յունուար 2025-ին,  
Ներկայութեամբ Հ.Ա.Ը.Ը. Կեդրոնական  
Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Ֆէտի  
Խաժակ Գագանճեանի:**

Ժողովը սկսաւ «Ցառաջ նահատակ» քայլերգով: Ապա,  
մնայուն դիւանի անդամներ ընտրուեցան եղբ. Աւետիս Լեհիմճ-  
եան՝ ատենապետ եւ եղբ. Շահան Գարիկեան՝ ատենադպիր:

Ժողովի օրակարգին անցնելէ առաջ, ատենապետը ժողո-  
վականներէն խնդրեց մէկ վայրկեան յոտնկայս լուութեամբ  
յարգել վաստակաշատ եղբայր Գրիգոր Հալլածեանի յիշատա-  
կը:



Անդամական ժողովը լայնօրէն քննեց  
մասնաճիւղին կազմակերպական, մշա-  
կութային, մարզական եւ յատկապէս  
երիտասարդական ու սկաուտական ծրա-  
գիրները: Անդրադարձաւ Մարզական ժողովա-  
րութիւններուն եւ ժողովականներու  
մտահոգութիւններուն եւ ըստ այնմ կա-  
տարեց պատշաճ առաջարկներ եւ տուաւ  
որոշումներ:

Ժողովի աւարտին, ժողովականները

ընտրեցին յառաջիկայ տարեշրջանի նոր վարչութիւնը՝ բաղ-  
կացած հետեւեալ քոյր- եղբայրներէն:-

**Եղբ. Սամուէլ Նահապետեան**

**Քոյր Սիլվիա Պուրճեան**

**Քոյր Թալին Շէկոյեան-Ապաճեան**

**Եղբ. Մովսէս Էմմիեան**

**Եղբ. Յակոբ Սահակեան**

Փակման խօսքով հանդէս եկաւ Հ.Ա.Ը.Ը. Կեդրոնական  
Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Ֆէտի Խաժակ Գագանճ-  
եան: Ան գնահատեց ժողովին դիւանը եւ յաջողութիւն մաղ-  
թեց նորընտիր վարչութեան: Ապա, եղբայրը շեշտեց Հ.Ա.-  
Ը.Ը. Կարեւոր դերը հայապահպանման եւ առողջ ու գիտա-  
կից երիտասարդներ կերտելու աշխատանքին մէջ:

Նորընտիր վարչութիւնը կեդրոնական Վարչութեան ներ-  
կայացուցիչ եղբ. Ֆէտի Խաժակ Գագանճեանի ներկայու-  
թեամբ իր դիւանին ընտրութիւնը կատարեց հետեւեալ ձեւով:-

**Եղբ. Սամուէլ Նահապետեան- ատենապետ**

**Քոյր Սիլվիա Պուրճեան- ատենադպիր**

**Եղբ. Մովսէս Էմմիեան- գանձապահ**





## **Հ.Մ.Ը.Ա. ԱԹԵՆքի ՄԱՍՆԱՅԻՆԻ 100-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ**

**Արշա Սամուելեան  
Աթենք**

**Մ**եծ ուրախութեամբ եւ յուզումով, Կիրակի, 8 Դեկտեմբեր 2024-ին, տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Ա. Աթէնքի մասնաճիւղի հիմնադրութեան 100-ամեակի տօնակատարութիւնը:

Այս յիշարժան առիթը եզակի հնարաւորութիւն էր պատուելու մեր պատմական ուղին եւ ներդրումը Յունաստանի մարզական իրականութեան, ինչպէս նաև՝ հայ եւ յոյն հասարակութեան մէջ:

Տօնակատարութեան գլխաւոր բանախօս, լրագրող Թումաս Սիսերիս հանդէս եկաւ շատ հետաքրքրական դասախոսութեամբ մը, նիւթ ունենալով «Հայ մարզական խումբերու դերակատարութիւնը՝ հայ գաղթականութեան եւ տեղւոյն շրջապատի հետ ներդաշնակման ու մանաւանդ հաւաքական իրաւունքներու պաշտպանութեան ծիրէն ներս»:

Յորելեար Աթէնքի մասնաճիւղին կողմէ եղբ. Յովհաննէս Ղազարեան ներկայացուց Հ.Մ.Ը.Ա. Յունաստանի շրջանի պատմութիւնը՝ վկայակոչերով հետաքրքրական դրաւաներ:

Իրենց ներկայութեամբ

տօնակատարութիւնը պատուեցին Յունաստանի ճատրակի ֆետերասիոնի եւ FIDE-ի փոխ նախագահ Վիորկոս Մակրոպուլոս, Յունաստանի պատրիարքաթպովի ֆետերասիոնի անդամ, FIBA Europe-ի կիներու յանձնաժողովի եւ դպրոցական ու համալսարանական մարզական յանձնաժողովի պատասխանատու Աննի Կոնստանտինիսութիւնի, Յունաստանի լողի ֆետերասիոնի նախագահ Կիրիակոս Եաննոփուլոս: Իրենց ներկայութիւնը բերին նաև Նէս Զմիռնիի փոխ քաղաքապետ Թէոտորոս Կաստորիս, Ատիկէի հարաւային մարզի ճատրակի ակումբներու միութեան փոխ նախագահ Եաննիս Պլեւրաքիս եւ վարչութեան անդամներ:

Ներկայ գտնուեցան նաև հայ առաքելական Աթէնքի եւ Փիքսի եկեղեցւոյ հոգեւոր հովիւները, հայ կաթողիկէ եկե-

ղեցւոյ գերապայծառը, ինչպէս նաև Ատիկէի հայկական համայնքի կազմակերպութիւններու ներկայացուցիչները: Պաշտօնական հրաւիրեալներու կարգին էին Հ.Մ.Ը.Ա. Յ. Յունաստանի Շրջանային Վարչութիւնը իր ատենապետով՝ եղբ. Ճորժ Սելիմեանով, Հ.Մ.Ը.Ա. Գոքինիոյ մասնաճիւղը եւ Աթէնքի շրջանի խմբավետական կազմը: Բարեկամ մարզական ակումբներէն ներկայ էին «Պանիոնիոս», «Միլոնաս», «Իքարոս»ի ներկայացուցիչները: Հանդիսութիւնը վարեց քոյր Վերոնիք Քիւրէքնեանը: Տօնակատարութիւնը ողջունեցին վարչութեան անունով՝ քոյր Թէրեզա Աւետիսեանը (Հայերէնով) եւ վարչութեան ատենապետ եղբ. Յովիկ Տէր Յովակիմեանը:

Տօնակատարութիւնը առիթ մը եղաւ իրարու մօտ բերելու բարեկամներ, անդամներ եւ մարզիկներ, որոնք իրենց ներկայութեամբ պատուեցին մասնաճիւղին հարիւրամեալը, միաժամանակ խոստանալով շարունակել պատմութիւն կերտել եւ յառաջ տանիլ Հ.Մ.Ը.Ա. արժէքները:

Աւարտին, փոքր հիւրասիրութիւնը առիթ մը եղաւ թարմացնելու յիշատակներ, դէմքեր ու դէպքեր:





## «ՀԱՅ ՍԿԱՈՒՏԻ ՕՐ»ՌԵՎԵՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ՊՈՒԼԿԱՐԻԱՅ ՄԵՋ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄՔ՝ ՓԼՈՎՏԻՎԻ, ՎԱՌՆԱՅԻ ԵՒ ՌՈՒՍԻ ԱՐԻ-ԱՐԵՆՈՅՉՆԵՐՈՒՆ

Թղթակից  
ՓԼՈՎՏԻՎ

**Ե**րկար տարիներու բացակայութենք ետք, 1 եւ 2 Մարտ 2025-ին, Հ.Ս.Ը.Ը.Ի Պուլկարիոյ երեք մասնաճիւղերու արիարենոյները Փլովտիվի մէջ միասնաբար նշեցին «Հայ սկառուտի օր»ը: Խանդապառութիւնը եղաւ մեծ եւ մինոլորտը բացառիկ: Առաջին անգամն էր, որ 20 սկառուտներ Վառնայէն, 5 սկառուտներ Ռուսէն եւ 45 սկառուտներ Փլովտիվէն քով-քովի կու գային երկօրեայ հարուստ ծրագիրով մը, որ պիտի ընդ-

գրկէր ժամանց, ընկերային պահեր եւ տօնակատարութիւն:

Արդարեւ, Վառնայի եւ Ռուսէի սկառուտները չոգեկատրով Փլովտիվ հասան Շաբաթ, 1 Մարտին: Զանոնք դիմաւորեցին Փլովտիվի սկառուտները եւ առաջնորդեցին Ս. Գէորգ եկեղեցւոյ շրջափակ, ուր տեղի ունեցաւ զրօշակի արարողութիւն եւ «Յառաջնահատակ» քայլերգի երգեցողութիւն:

Ապա, տեղի ունեցաւ մրցում-խաղ մը, որուն ընթացքին սկառուտները ծանօթացան Փլովտիվի՝ Եւրոպայի ամէնէն հին բնակուած քաղաքին տեսարժան ու պատմական վայրերուն:

Երեկոյեան, հայկական մշակութային միութեան սրահին մէջ, ներկայ սկառուտները եւ անոնց ընկերակցող պատասխանատուները պատրաստեցին ուտելիքներ եւ կատարեցին խրախճանք:

Կիրակի, 2 Մարտին, Վառնայի, Ռուսէի եւ Փլովտիվի 70 արի-արենոյշները մասնակցեցան դաստիարակչական սեմինարի մը, ուր հանդէս եկաւ Սոֆիայէն յատկապէս հրաւիրուած՝ միջազգային դասատու Հերմինէ կմիրեան: Ան սկառուտներուն ներկայացուց ընկերային-մանկավարժական շարք մը նիւթեր, որոնց չուրջ կատարեց զրոյց-քննարկում:





**Երեկոյեան, Ծնողական Խորհուրդի կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ «Հայ սկաուտի օր» ուսան ճաշկերպիթ-տոնակատարութիւն, ուր ողջոյնի խօսքերով հանդէս եկան Փլովտիվի քահանայ հայրեր՝ Տ. Հրուչ Մուրատեան եւ Տ. Դանիէլ Գարածեան։ Անոնք մաղթեցին, որ Վարդանանց ոգին միշտ վառ մնայ սկաուտներուն մօտ եւ Հ.Մ.Լ.Մ. շարունակէ արժանի զաւակը ըլլալ հայութեան։**

**Տօնակատարութեան խօսքեր արտասանեցին նաեւ Փլովտիվէն քոյր Սրբուհի Գաբրիէլեան եւ Վառնայէն եղբ. Մարտիկ Պէյլէրեան։ Անոնք չնորհաւորեցին Հ.Մ.Լ.Մ.ի սկաուտներուն տօնը եւ մաղթեցին, որ համապուլկարական Հ.Մ.Լ.Մ.ական նման նախաձեռնութիւնները յաճախ կը կրկնուին։ Եղբ. Պէյլէրեան յուշանուէր մը փոխանցեց քոյր Գաբրիէլեանին։**

**Այս առիթով գործադրուեցաւ գե-**



**ղարուեստական պատշաճ յայտագիր։ Ներկաները, 150 հոգի, մեծ հետաքրքրութեամբ եւ գոհունակութեամբ հետեւեցան ներկայացուած յայտագիրին, յատկապէս Վարդանանց նուիրուած թատրոնին։**

**Երկօրեայ խանդավառ մթնոլորտէ ետք, սկաուտները իրարմէ բաժնուեցան համելի յիշատակներով եւ դարձեալ հանդիպելու խոստումներով։**



## **Հ.Մ.Լ.Մ.Ի ԱԼՄԵԼՈՅԻ ՄԱՍՆԱՅԻՇՈՒ** **ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐԸ**

**Կ իրակի, 12 Յունուար 2025-ին տեղի ունեցաւ Հ.Մ.Լ.Մ.Ի Ալմելոյի մասնաճիւղի նոր տարեշրջանի սկաուտական առաջին հաւաքոյթը։**

**Հաւաքոյթին աւարտին, վարչութեան անունով խօսք առաւ ատենապետ եղբ. Մասիս Վահանեան եւ ներկայ աստիճանաւորական կազմին եւ սկաուտներուն բարի երթ մաղթեց իրենց յառաջիկայ աշխատանքներուն համար։**

**Ապա, եղբ. Վահանեան վարչութեան որոշումով փոխանցեց մասնաճիւղի եւ միաւորի խմբապետներուն նոր պաշտօնները.-**

**Եղբ. Ցակոր Գասպարեան- Մասնաճիւղի Խմբապետ**

**Եղբ. Ռազմիկ Արամեան- Ա. միաւորի Խմբապետ**

**Քոյր Մարիամ Միհիթարեան- Բ. միաւորի Խմբապետուհի**



## Հ.Մ.Ը.Ա.Ի ՍՈՏԵՐԹԵԼԻՈՅ ՄԵԿՈՒՄԻ ՇՐՋԱՆԻ 10-ԱՄԵԼՎԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Թղթակից  
ՍՈՏԵՐԹԵԼԻԱ

**Կ**ազմակերպութեամբ Հ.Մ.-Լ.Մ.-ի Սոտերթելիոյ Մեկուսի շրջանի վարչութեան, Շաքաթ, 1 Փետրուար 2025-ին տեղի ունեցաւ Հ.Մ.-Լ.Մ.-ի Սոտերթելիոյ մասնաճիւղի հիմնադրութեան 10-ամեակի տօնակատարութիւն:

Տօնակատարութեան ներկայ գտնուեցան համայնքի հոգեւոր հովիտ Վաղարշ Քհնյ. Խսախանեան, Հ.Մ.-Լ.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Ֆէտի Խաժակ Գագանձեան, Հ.Յ.Դ. «Հիւսիսեան» կոմիտէի ներկայացուցիչ Սիմոն Տէր Սահակեան, Ս. Մարիամ Աստուածածին եկեղեցւոյ խորհուրդի ներկայա-



ցուցիչ եղբ. Ալէքս Շառոյեան, Շուէտի Սկառտական կազմակերպութեան ներկայացուցիչը, Հ.Մ.-Լ.Մ.-ի Սթոքոլմի եւ Օրէպրուի մասնաճիւղերու վարչականներ, ուղեկից միութիւններու ներկայացուցիչներ, հրաւիրեալներ եւ ծնողներ:

10-ամեակի Տօնակատարութիւնը սկսաւ Շուէտի, Հայաստանի, Արցախի



եւ Հ.Մ.-Լ.Մ.-ի քայլերգներով, ապա ցուցադրուեցաւ Հ.Մ.-Լ.Մ.-ի Եւրոպայի ցամաքամասի բանակումին կարծ տեսերիզը, որմէ ետք քոյր Սօսէ Երէցեան արտասանեց վարչութեան խոսքը:

Ապա, միութեան «Մառայութեան» շքանշանին արժանացան եղբայրներ Համօ Երէցեան, Պարոյր Քէհեայեան եւ Կարլ Պօղոսեան:

Տեղի ունեցաւ մասնաճիւղին 10 տարուան պատմութիւնը ներկայացնող վաւերագրական տեսերիզին ցուցադրութիւնը: Տեսերիզը պատրաստուած էր քոյր Վարդի Խաչատուրեանի կողմէ:

Այս առիթով կատարուեցաւ Հ.Մ.-Լ.Մ.-ի ոսկէզօծ Շուշանածաղկով պարգևատրում անցեալին մինչեւ օրս գործած ու գործող խմբավետական կազմերուն եւ ներկայ վարչութեան:

Ասմունքով հանդէս եկաւ քոյր Կասիս Տէրտէրեան: Օրուան պատգամը արտասանեց Հ.Մ.-Լ.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Ֆէտի Խաժակ Գագանձեան, իսկ սրտի խօսք փոխանցեց եւ տօնակատարութիւնը «Պահպանիչ»ով վակեց Վաղարշ Քհնյ. Խսխանեան:

Տեղի ունեցաւ նաեւ 10-ամեակի կարկանդակի հատում:

Ցայտնենք, որ տօնակատարութեան հանդիսավարութիւնը հայերէնով եւ շուէտերէնով կատարեցին քոյր նանօր Կարապետեան եւ եղբ. Կարիկ Վարդանեան:



## Հ.Ս.Լ.Ս.Ի ՍՈՏԵՐԹԵԼԻՈՅ ԱՆԴԱՍԱԿԱՆ ԵՕԹՆԵՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Թղթակից

ՍՈՏԵՐԹԵԼԻԱ

**Հ.Ս.Լ.Ս.Ի Սոտերթելոյ մեկուսի շրջանի անդամական 7-րդ Ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ Կիրակի, 16 Փետրուար 2025-ին, ներկայութեամբ Հ.Ս.Լ.Ս.Ի Կեղրոնական Վարչութեան անդամ եղբ. Ֆէտի Խաժակ Գագանձեանի:**

Իբրեւ հրաւիրեալներ ժողովին ներկայ էին նաև Հ.Ս.Լ.Ս.Ի Սթոքհոլմի եւ Օրէպրուի վարչութիւններուն ներկայացուցիչները:

Ժողովը ընթացք առաւ ընտրելով մնայուն դիւան.- ատենապետ՝ եղբ Պարոյր Քէհեայեան եւ ատենապահիր՝ քոյր Նանօր Կարապետեան:

**Մեկուսի շրջանի վարչութիւնը ներկայացուց իր երկամեայ գործունկութեան նիւթարարոյական տեղեկագիրը: Տեղեկագիրին շուրջ լուսաբանութիւններ կա-**



տարուելէ ետք, յաջորդեց ժողովականներուն կողմէ քննակման օրակարգը: Իբրեւ եղրակացութիւն, ընթացարտ վարչութեան աշխատանքները նկատուեցան «Գնահատելի»:

Ժողովի աւարտին, ժողովականները ընտրեցին յառաջիկայ երկամեայ նստաշրջանի նոր վարչութիւն՝ բաղկացած եօթը քոյր-եղբայրներէ:

Փակման խօսքին մէջ, Կեղրոնական Վարչութեան անդամ եղբ. Ֆէտի Խաժակ Գագանձեան ներկայացուց Կեղրոնական Վարչութեան գալիք օրերու աշխատանքները.՝ Հ.Ս.Լ.Ս.Ի Ամերիկայի եւ Աւստրալիոյ ցամաքամասային բանակում, համա-Հ.Ս.Լ.Ս.Ի. ական 12-րդ մարզախաղեր, Հ.Ս.Լ.Ս.Ի. նոր կայքէջ: Եղբայրը իր խօսքին մէջ նաև նշեց, որ ազգային գործի մէջ աշխատող պէտք չէ շատ զգայուն ըլլայ, պատասխանատու դիրքեր կը ստանձնենք, որպէսզի պատահած հարցերը լուծենք եւ ոչ թէ առաջին դժուարութեան ետքայլի դիմենք: Անբարձր գնահատեց ընթացաւարտ վարչութեան աշխատանքը եւ յաջող երթ մաղթեց նորընտիր վարչութեան:

Ապա, անդամական Ընդհանուր ժողովի դիւանին հրաւէրով, նորընտիր վարչութիւնը, ներկայութեամբ Կեղրոնական Վարչութեան ներկայացուցիչին, ընտրեց իր դիւանը եւ պաշտօններու բաժանումը կատարեց հետեւեալ ձեւով.՝

**Ատենապետ- եղբ. Աւագ Կարապետեան**

**Ատենապահիր- Քոյր Նորա Վէքիեան**

**Գանձապահ- Քոյր Սոսէ Երէցեան**

**Սկաուտականի ներկ.- եղբ. Ցարութէ Տէր Ներսէսեան**

**Հնկերայինի ներկ.- եղբ. Ռաֆֆի Ղազարեան**

**Հաշուապահ- Քոյր Կարինէ Սարգիս- եան**

**Ցարաբերական- Քոյր Լենա Ցակոր- եան**



## ԱՄԲՈղջ ՏԱՐԵՇՐՋՎԱՆ ՄՅ...

Սեւան Նազարեան

ՓՄԻՒԶ

Ամբողջ տարեշրջան մը...

Ու զիրար յաջորդող գործունէութիւններ...

Ցոգնիլ չգիտցող միութիւն մըն է Հ.Մ.Լ.Մ.ր... անհատները կը յոգնին, այ՞, բայց, անգամ մը անոր դռնէն ներս մտնելէ ետք՝ կարծէք վարակիչ խայծ մը կը պարուրէ զիրենք ու կը մոռցնէ պատէն անդինը ու... շարժումը կը սկսի...

Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանսը եւս ըլլարով անոր մէկ մասնիկը, բացառութիւն պիտի չկազմէր ուրիշ ձեռովք բանելու եւ 2024-ի իր գործունէութիւնը արդարացնող հայելին էր այդ իրականութեան:

Հաւանաբար շարքին վերջինն էր սկաուտական կաղանդի օրը, որ համախմբած էր արի-արենյշներն ու գայլիկ-արծուիկները, իրենց գործունէութեան վայրին՝ իսի լէ Մուլինոյի մարզական համալիրին մէջ:

8 Դեկտեմբեր 2024-ին, հոն հաւաքաւած էին ո՛չ միայն Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանսի տարազաւոր անդամները, այլև՝ անոնց ծնողները, բարեկամներ, Հ.Մ.Լ.Մ.-ականներ, վարչականներ, Սկաուտ. Խորհուրդի անդամներ եւ հարազատներ:

Սկաուտական տողանցքը բացումը կատարեց հաւաքին, աւելի քան 90 սկաուտներու մասնակցութեամբ: Յաջորդեց երգման արարողութիւնը, աստիճաններու եւ փողկապի տուչութիւնն ու գնահատականներու բաշխումը:

Նոր սերունդը ուղղակի թէ անուղղակի պէտք ունի տեսնելու, իմանալու միութեան թէ անոր գործունէութեան մասին հնչող խօսքերը, որոնք փոխանցըցան վարչութեան ատենապետ եղը. Անարէ Դադայեանի կողմէ: Եղայրը շեշտեց հաւաքական աշխատանքի կարեւորութիւնը, որուն արդիւնքը այսօր իր արտայայտութիւնը կը գտնէ քանի մը միջոցով՝ սեփական ակումբի մօտալուտ բացում, Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանսի յիսնամեայ կեանքի նույիրուած գիրքի հրատարակութիւն, ինչպէս նաեւ սկաուտներու թիւի բարձրացում:

Այնուհետեւ, Կեղրոնական Վարչութեան Եւրոպայի ներկայացուցիչ եղը. Սեւակ Թորոսեան փոխանցեց իր սրտի

խօսքը: Ան բարձր գնահատեց յիշողութեան փոխանցման եւ ստանձնումի կարեւորութիւնը, որուն վառ օրինակն է վերջերս լոյս տեսած Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանսի յիսնամեակին նույիրուած գրքոյիլը:

«Իմաստուններու խորհուրդ»ին անունով խօսք առաւ եղը. Լեւոն Պաղտասարեան եւ ներկայացուց իսի լէ Մուլինոյի մէջ 2025-ին բացուղող Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանսի նորակառոյց կեղրոնին մանրամասնութիւնները:

Այս նիւթին անդրադարձաւ նաեւ իսի լէ Մուլինոյի քաղաքապետութեան ներկայացուցիչ, քաղաքապետի կցորդ Յարութ Խանճեան, որ հաստատեց շրջանի քաղաքապետութեան հաւատքն ու վստահութիւնը Հ.Մ.Լ.Մ.-ի ընտանիքին



եւ անոր հետ գործակցաբար կեղրոնի ծրագիրի իրազործման հանգրուաններուն։ Ան նաեւ կարեւորեց Հ.Մ.Լ.Մ.-ֆրանսի ներուժը, որ պիտի դառնայ Եւրոպայի այն մասնաճիւղը, որ պիտի ունենայ իր սեփական կեղրոնը՝ 2745 քառակուսի մեթր տարածութեամբ։

Օրուան խօսքերէն ետք բեմը տրամադրուեցաւ սկաուտներուն, որոնք իրենց ներկայացումներով՝ պար, թատրոն, բուրդ, երգ ու կանչ, խանդավառեցին ծնողներն ու ներկանելոր։

**Անշուշտ բոլորը կը սպասէ-** ին գալուստը Կաղանդ Պապային, որ չուշացաւ սրահին դուռը թակելու եւ իր նուէրները բաժնեկուու։

Սրահը տօնական էր, տաղաւարները լեցուած էին համադամ ուտեստներով, վիճակախաղով, Հ.Մ.Լ.Մ.-ի խորհրդանշնը կրող քազակներու վաճառքով ու մանաւանդ՝ Հ.Մ.Լ.Մ.-ֆրանսի յիսնամեակին նուիրուած գիրքի վաճառք-տաղաւարով, որ կը մակագրուէր գիրքի հեղինակ՝ եղբ. Սեւակ Թորոսեանի եւ յառաջաբանը ստորագրող եղբ. Հրաչ Սիսեռեանի կողմէ։

Այս ձեռնարկի խորքին կատարուեցաւ անդրադարձը երկու կարեւոր իրադարձութիւններու՝ գիրքի գինեածնին եւ ակումբի բացման հանդիսութեան,



որոնց պաշտօնական արարողութիւնները պիտի կատարուին 2025-ին։

Սակայն կ'արժէ յետագարձ ակնարկ մը կատարել դէպի տարեսկիզբ...

Սարգական փորձերը, որոնք շաբաթը քանի մը անգամ, գործէն թէ դասերէն ետք, մարզադաշտ «կը քաշեն» երիտասարդները, այս տարուան ընթացքին ունեցան իրենց համագաղութային դրսեւորումը։

Հ.Մ.Լ.Մ.ը կը հեռանար իր բարունակէն եթէ դառնար զուտ մարզական միութիւն, պարպուելով հայկականէն, ու անոր դրսեւորումը կը կատարուի իր մարզախաղերով։

Համաճարակի հետեւանքով կանգ առած «Կապի Փոսթու» պասքէթի մըր-

ցաշարքը, չորս տարուան դադարէ ետք, կրկին պասքէթի դաշտի վրայ իրարուդէմ մրցելու «պատրուակով», հայ երիտասարդներով լեցուց իսի լէ Մոլինոյի Cite des Sports մարզարահը, ուր 8 Սեպտեմբեր 2024-ին տեղի ունեցան խաղերը եւ 12 խումբեր միասնաբար ապրեցան համելի պահեր։

Տարբեր չէր պատկեր «Սուրէն Մուրատեան» Փութպոլի մրցաշարքին, որ տեղի ունեցաւ կրկին իսի լէ Մոլինոյի Միմուն մարզադաշտին վրայ, 23 Յունիս 2024-ին։ Հոս եւս 12 խումբեր գնդակի ետին վագելու եւ զայն դարպասէն ներս մտցնելու «քողին տակ», ապրեցան միութենական եւ հայկական միջավայր մը պարգեւող պահեր։





Անշուշտ միշտ ալ գոյութիւն ունի  
ուրախ մթնոլորտ ստեղծելու փափաքը,  
որ յաճախ կը գտնէ իր լուծումը՝ երաժշշ-  
տութեան, ուտեսաի ու խաղերու միջո-  
ցով: 400 հոգիէ աւելի ներկայ-այցելու-

ներ վայելեցին թէ՛ խաղերը եւ թէ այդ  
հաճելի պահերը:

Մարզականի պարագային, եթէ մըր-  
ցաշարքն ու յաղթանակներն են տար-  
ւան մը մարզումներուն վերջակէտը,

սկառտական կեանքին մէջ այդ մէկը իր  
գործունէութեան կարեւոր մէկ հան-  
գորուան՝ բանակումն է, ուր չարքաշ  
կեանքէն անդին, միասնաբար ապրելու  
եւ միասին ապրիլ սորվելու երեւոյթը  
անբացատրելի մտերմութիւն մը կը  
ստեղծէ բանակողներուն միջեւ, պահե-  
լով այդ ժամանակաշրջանէն միա՛յն գե-  
ղեցիկ յիշատակներ:

**Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանսի սկառտական**  
ամառ, 6-14 Յուլիսին, Ժամավիլի մէջ  
ունեցան իրենց տարեկան բանակումը՝  
60 հոգիի մասնակցութեամբ: Բանակու-  
մի աւարտին տեղի ունեցաւ այցելու-  
թեան օր (13 Յուլիսին):

**Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանսի արի-արենոյշները**  
այս տարի վայելեցին նաեւ **Հ.Մ.Լ.Մ.-ի**  
**Լոնտոնիկ սկառտական** բանակու-  
մը, որ իր կարգին նոր լիզք փոխանցեց  
անոնց, ապրելու միութեան համատա-  
րած գոյութեան չօշափելիութիւնը:

Ծնողական եւ մարզական յանձնա-  
խումբերու կազմակերպած ընթրիքներն  
ու մտերմիկ հաւաքները իրենց չուրջ հա-  
մախմբեցին գաղութային շրջանակ մը,  
որ հաւատք ունի **Հ.Մ.Լ.Մ.-ի** 106-ամեայ  
ազգանուէր ու մշտանորոգ գործունէ-  
ութեան:

**Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանս,** ինչպէս միշտ, այս  
տարի եւս մասնակից դարձաւ գաղու-  
թային կեանքի ձեռնարկներուն՝ **Մ. Մա-  
նուշեանի** աճիւններուն պանթէոն մուտ-  
քի արարողութեան, Արցախի զօրակցու-  
թեան ցոյցին, **Ապրիլ 24-ի** ոգեկոչումին  
թէ այլ:

Կորովն ու հաւատքը կատարուած  
գործին ճամբայ կը հարթեն բոլոր խո-  
շնդուաներուն, որոնց յաղթահարման  
մղիչ ուժը կը մնայ միասնականութիւնը:



## Հ.Մ.Լ.Մ.-ՖՐԱՆՍԻ ՍԿԱՌՈՒՏԱԿԱՆ ԴԱՄԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԵՄԻՆԱՐԸ

Թղթակից  
ՓԱՐԻԶ

**Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանսի Սկառտա** Խորհրդը ծրագրած է ամսական  
դրութեամբ դաստիարակչական սեմինարներ կազմակերպել,  
խմբապետական եւ աստիճանաւորական կազմերուն փոխանցելու  
համար տեսական եւ գործնական դիտելիքներ:

Առաջին սեմինարը տեղի ունեցաւ Կիրակի, 16 Փետրուար 2025-ին:

Սեմինարին յայտագիրը ընդգրկեց հետեւեալ նիւթերը:-

- Խմբակային դրութիւն

- Համբագրակցութեան խաղ

- Խմբակի աշխատանք վարելու ձեւեր

- Յայտագիրի ծրագրաւորումի հանդրուաններ

Այս սեմինարին կազմերը ունեցան աշխոյժ մասնակցութիւն եւ օրը աւար-  
տեցաւ ուրախ մթնոլորտի մէջ:



# «ՀԱՅ ՍԿԱՈՒՏԻ ՕՐ»ՌԻՎՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ԿԻՊՐՈՍԻ ՄԷՋ

Թղթակից  
ՆԻԿՈՍԻԱ

**Ուրբաթ, 6 Մարտ 2025-ի երեկոյ-**  
եան, Կիպրոսի Հ.Ա.Ը.Ա.-ՀԵՄ-ի  
սկաուտարանին մէջ տեղի ունե-  
ցաւ «Հայ սկաուտի օր»ուան հանդիսու-  
թիւն, որուն իրենց մասնացութիւնը բերին  
Հ.Ա.Ը.Ա.-ԱՅՄԱ 77-րդ խումբի արի-արենոյշները: Հանդի-  
սութեան ներկայ էին թեմի կաթողիկոսական Փոխանորդ Կո-  
միտաս Արք. Օհանեան, հայ համայնքի  
պետական ներկայացուցիչ Վարդգէս  
Մահտեսեան, երեսփոխանական եւ ազ-  
գային վարչութիւններու ատենապետ-  
ներ, Հ.Յ.Դ. Կոմիտէի ներկայացուցիչը,  
ինչպէս նաեւ միութեան անդամներ:

Բացման խօսքին համար բեմ բարձրա-  
ցաւ խմբապետուհի քոյր Ռոզալին Ղու-  
կասեան-Կարապետեան եւ հարակիրեց  
ներկաները երգելու Հ.Ա.Ը.Ա.-ի քայլերգը:  
Ան ներկայացնելիք ետք օրուան յայտագի-  
րը, իր խօսքին ընդմէջն ընդգծեց տիրող  
դժուարութիւնները, բայց միաժամանակ  
շեշտեց միշտ պատրաստ ըլլալ գործնա-  
կան ամէն միջոց օգտագործելու՝ զանոնք  
յաղթահարելու համար: Ան ըսաւ. «Իբրեւ  
Հ.Ա.Ը.Ա.-ի արի-արենոյշներ հպարտան-  
քով կը կրենք միութեան սկաուտական  
տարազը: Այսօր կ'ուղենք ստեղծել այն-  
պիսի մթնոլորտ մը, որ բոլորս միասին,  
քոյրեր եւ եղբայրներ, մեծով ու փոքրով,  
ինքնավտահ քայլերով, տքնաջան աշխա-  
տանքով ու վերանորոդ հաւատքով եւ կո-  
րովով նետուինք մեզի վստահուած  
առաքելութեան՝ գործուղուինք մեր մշա-  
կած ծրագիրներուն իրագործման»:

Յայտագիրը ընդգրկեց ներկայացում  
մը՝ «Հ.Ա.Ը.Ա.-ի հիմնադրութեան անդ-  
րանիկ ժողովը», որ արի-արենոյշներու  
կողմէ շատ յաջող ձեւով ներկայացուե-  
ցաւ: Ներկայացման յաջորդեց եօթը արի-  
արենոյշներու խոստման արարողու-  
թիւնը: Անոնք ստացան նաեւ իրենց փող-  
կապները:



Խոստման արարողութեան յաջորդեց գրօշակի  
արարողութիւնը: Աւարտին, Սրբազն Հայրը օր-  
ւան պատգամը փոխանցեց ներկաներուն եւ «Պահ-  
պանիչ»ով փակեց հանդիսութիւնը:



## Հ.Ա.Ը.Ա. ՔՈՒԵՅԹԻ ՖՈՒԹԲՈԼԻ ԵՐԵՑՆԵՐՈՒ ԽՈՒՄԲԻՆ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

Կարօ Մինաս  
ՔՈՒԵՅԹ

**Հ.Ա.Ը.Ա.-ի ՔՈՒԵՅԹի Փութպոլի երէցնե-  
րու խումբը այս տարի եւս իր մասնակ-  
ցութիւնը բերաւ երկրի Փութպոլի  
սիրողական մրցաշարքին («Տառլի Հուաթ քու-  
էյթի») եւ, երկար տարիներու իր տքնաջան աշխատանքին արդիւնքը քաղե-  
լով, տիրացաւ երկրորդ բաժանումի ախոյեանութեան: Ան առաջին  
հանդիսացաւ 14 խումբերու շարքին, Հ.Ա.Ը.Ա.-ին եւ հայութեան անունը  
բարձր պահերով գաղութին մէջ:**



Յաղթանակը ամբողջ գաղութին եւ յատկապէս Հ.Ա.Ը.Ա.-ին համար եղաւ  
պարծանքի եւ հպարտութեան ալլիկոր: Ախոյեանութեան լաւագոյն խաղա-  
ցող եւ լաւագոյն բերդապահ հանդիսացան եղբայրներ Մելիք Գարլօ Մելիք-  
սէթեան եւ Աւո Ատանալեան:



# Հ.Ս.Ը.Մ.Ի ՆԱԽԱՍՏՐԴԵԱՆ 54-ՐԴ ՄԱՐԶԱԾԽՎՂԵՐԸ ՆՈՐ ՅԱՎԹԱՎԱՎԿՆԵՐՈՎ ՈԳԵԻՈՐԵՑԻՆ ԱԻՍՏՐԱԼԻՈՅ ՄԱՍՆԱՇԻԼԵՐԸ ԵՒ ՇՐՋԱՆԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ

Թղթակից  
ՄիՏՆի

**Հ.Ս.Ը.Մ.Ի Աւստրալիոյ շրջանի աւանդութիւն դարձած Նաւասարդեան մարզախաղերը տեղի ունեցան 25-28 Դեկտեմբեր 2024-ին, «Hills Basketball» դաշտին վրայ, ուր ներկայ հայութիւնը վերապրեցաւ մեր ժողովուրդի փառահեղ անցեալի պատմութիւնը, վայելեց հայկական եւ ազգային աւանդական երաժշտութիւն եւ ականատեսը դարձաւ մեր երիտասարդներու յաղթանակներուն, որոնք զարդարուեցան Հ.Ս.Ը.Մ.Ի յաղթանակի մետախներով։**

Նաւասարդեան 54-րդ մարզախաղերու յաղթանակի առողանցքը տեղի ունեցաւ Հինգշաբթի, 26 Դեկտեմբերի կէսօրէ ետք ժամը 3-ին, մասնակցութեամբ

800 մարզիկներու, Հ.Ս.Ը.Մ.Մ.ականներու, ծնողներու, համակիրներու եւ զանազան կազմակերպութիւններու ներկայացուցիչներու։



ղերը ներկայացնող մարզիկներ։ Ապա, շքերթը շարունակուեցաւ դէպի գլխաւոր սրահ, ուր Հ.Ս.Ը.Մ.Ի մարզիկները կատարեցին քայլերգներ, որոնք աւելի տպաւորիչ դարձուցին օրուան մթնոլորտը։ Արարողութեան գլխաւոր հանդիսավար քոյլը Զարմիկ Քէյվանեան այս միջոցին ներկայացուց իւրաքանչւր մասնաճիղի պատմութիւնը եւ ձեռքբերած յաջողութիւնները։ Ան նաեւ շեշտեց Հ.Ս.Ը.Մ.Ի հիմնադրութեան գլխաւոր նպատակները՝ երիտասարդութեան հայեցի դիմագիծի կերտում եւ աշխարհով մէկ ցրուած խումբերու համախմբում մարզական մէկ դրօշի տակ։ Քոյրը նա-



Եւ անդրադարձաւ այն իրողութեան, որ Հ.Մ.Լ.Մ. աւելի մէկ դարէ ի վեր, մարզական շարժումի եւ սկառատութեան ճամբով կը պահպանէ ազգային մեր արժէքները եւ նորահաս սերունդները հեռու կը պահէ ձուլման վտանգէն:

Այնուհետեւ, արարողութիւնը շարունակուեցաւ Հ.Մ.Լ.Մ.ական մարզիկի երգումով։ Երգումը կատարեց եղբ. Ժիրայր Պապիկեան։

Հ.Մ.Լ.Մ.ի Աւտրալիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ քոյր Ցոլին Քէշիշեան յայտարարեց Նաւասարդեան մարզախաղերուն պաշտօնական բացումը։ Ան իր խօսքին մէջ ընդգծեց, որ ինչ ալ ըլլան դժուարութիւններն ու մարտարաւէրները, Հ.Մ.Լ.Մ.ը միշտ կը մնայ երիտասարդ, կենսունակ եւ խանդավառ միութիւն՝ աւելի լաւ ապագայի յոյս ներշնչելով բոլորին։

Արարողութեան պաշտօնական բաժնը եղբափակուեցաւ Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Տիրան Վահրամեանի խօսքով։ Եղբ. Վահրամեան իր խօսքին սկիզբ նշեց, որ

«Ուրախութիւն է տեսնել այսքան մեծ թիւով խումբեր եւ մարզիկ-մարզիկուհիներ Հ.Մ.Լ.Մ.ի Նաւասարդեան 54-րդ մարզախաղերու բացման հանդիսութեան։ Այսքան մեծ ներկայութիւն կը նշանակէ մեծ վստահութիւն Հ.Մ.Լ.Մ.ի հանդէպ։ Մեծ կապուածութիւն այս միութեան աշխատանքին եւ մեծ սէր ու յարգանք անոր նպատակին։»

Ապա, ան նկատել տուաւ, որ «Հ.Մ.Լ.Մ.ի համար այս մարզախաղերը, ինչպէս բոլոր խաղերը եւ սկառատական ձեռնարկները, միջոց են։ Նպատակը այսպատճի-երիտասարդ տղաքն ու աղջիկները իրարու քով բերելն է, մէկ հաւաքականութեան, մէկ ժողովուրդի պատկանելու գիտակցութիւնը փոխանցելն է, որպէսզի անոնք այս խաղերէն





տուն վերադառնան աւելի հայցած,  
աւելի խանդավառուած եւ ազգային  
հպարտութեամբ լցուած:

«Այս տղաքը կրնային հոս ըլլալ եւ  
իրենց հանգիւատին ու հաճոյքին համար  
բոլորովին այլ տեղ ըլլալ,- շեշտեց ան-  
բայց անոնք նախընտրեցին, նաեւ իրենց  
ծնողները նախընտրեցին, որ անոնք այ-  
սօր հոս ըլլան, Հ.Մ.Ը.Մ.ի մէջ ըլլան, հա-  
յեցի մթնոլորտի եւ միջավայրի մէջ  
ըլլան: Ապօի՞ք տղաք: Շարունակեցէք  
մնալ Հ.Մ.Ը.Մ.Մ.ի մէջ, մինչեւ որ օրին մէ-  
կը գուք նստիք ձեր ծնողներուն տեղ եւ  
ձեր զաւակները ըլլան այս դաշտին մէջ:

«Այս է Հ.Մ.Ը.Մ.ը: Սերունդներու  
շարունակութիւնն է Հ.Մ.Ը.Մ.Մ. եւ անոր  
համար ալ ան երբեք չի ծերանար, որով-  
հետեւ միշտ կու գան նորերը», հաստա-  
տեց եղբ. Վահրամտեան:

Վերջապէս, եղբ. Վահրամտեան յայտ-  
նեց, որ «Հ.Մ.Ը.Մ.Մ. դպրոց է, ուր մտնո-

ղը կը սորվի բազմաթիւ դասեր: Կարգա-  
պահութիւնը այդ դասերէն մէկն է: Այլ  
դասեր են համեստութիւնը, երկխօսու-  
թիւնը, համբերութիւնը, փոխադարձ  
յարգանքը, միութեան համար անհատա-  
կան եսերու զոհողութիւնը եւ միայն ու  
միայն միութեան շահերուն համար աշ-  
խատիլը: 2025-ը, շրջանի հիմնադրու-  
թեան 60-ամեակի տարին թող ըլլայ Հ.Մ.-  
Ը.Մ.ական դասերու վերյիշեցման տա-  
րի: Թող ըլլայ այդ դասերով գործելու  
տարի: Թող ըլլայ 60 տարուան իմաս-  
տութեամբ աշխատանքի տարի» (Խու-  
քին ամբողջութիւնը տեսնել էջ 12):

Ցայտնեանք, որ չորսօրեայ մարզախա-  
ղերու աւարտին տեղի ունեցաւ Նաւա-  
սարդեան յաղթանակի պարահանդէսը,  
մասնակցութեամբ 600 պատանի-երի-  
տասարդ մարզիկներու, որոնք տօնեցին  
Հ.Մ.Ը.Մ.Մ.ի յաղթանակը՝ բարձր պահե-  
լով Հ.Մ.Ը.Մ.Մ.ի վարկն ու յաղթանակի  
բաժակները:





## Հ.Ա.Ը.Ս.Ի ԳԱՆԱՑԱՅԻ ՇՐՋԱՆԻ 51-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ ԳԵՄՊՐԻՃԻ ՄԵԶ

Հուրինա  
ԹՈՐՈՆԹՈ

**Հ**ովանաւորութեամբ Հ.Ա.-Լ.Ա.Ի Գանատայի Շրջանային Վարչութեան, կազմակերպութեամբ Հ.Ա.Ը.Ս.Ի Գէմպրիճի մասնածիւղին, միջ-մասնածիւղային 51-րդ մարզախաղերու բացման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Ուաթըրլուի մէջ, 30 Նոյեմբեր 2024-ին: Հանդիսութեան ներկայ էին Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Բաբեկն Արք. Զարեան, Հ.Ա.Ը.Ս.Ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ քոյր Լիոնի Սարմագեան, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուէլ Քէօսէեան, Գանա-

տայի Շրջանային Ընդհանուր Խմբապետ եղբ. Արուշ Պէրպէրեան, Շրջանային Խմբապետ եղբ. Ռաֆֆի Դաւիթիեան եւ Շրջանային Խմբապետուհի քոյր Կասիա Կարապետեան-Կիւլեան:

Հանդիսութեան ներկայ էին նաեւ շրջանի խորհրդարանի անդամներ, Գէմպրիճին Պրայըն Մէջ, Ուաթըրլուէն՝ Պարտիչ Չաճճըր եւ Քիշրնըրէն՝ Վալերիա Պրատֆորտ, ինչպէս նաեւ Ուաթըրլուի քաղաքապետ՝ Շորոթի Մաքքապ:

Բացման հանդիսութեան եւ մարզախաղերուն իրենց մասնակցութիւնը բերին Հ.Ա.Ը.Ս.Ի Արեւմտեան եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու շրջաններու Լու Անձելլարի, Տիթրոյիթի, Ուաշընկթընի, Նիւ Եորքի մասնածիւղերը,



ինչպէս նաեւ Գանատայի մասնածիւղերէն Մէնթ Գաթրինգի, Զամիլթընի, Լաւալի, Թորոնթոյի, Գէմպրիճի, Մոնթրէ-ալի, Վանգուվըրի եւ Օթառուայի Հ.Ա.-Ը.Ը.Ական մարզիկները, որոնք շեփորախումբի քայլեղանակներով եւ խրոխտ քայլերով խումբ առ խումբ տողանցեցին մարզասրահէն ներս, արժանանալով հանդիսականներու ծափող-ջոյնին եւ գնահատանքին:

Եղբայրներ Խազմիկ Կարպուշեանի եւ Սագօ Քէսապեանի երգեցողութեամբ հնչեցին Գանատայի, Հայատա-նի եւ Արցախի քայլերգները:

Օրուան բեմավարներ քոյր Արէք Գագագեան եւ Շանթ Ահարոնեան փոխն ի փոխ կատարեցին յայտագիրին հանդիսավարութիւնը:





Հանդիսութեան սկիզբը բեմ հրաւիրուեցաւ մարզիկ եղբ. Անդրանիկ Մարտիրոսեան: Ան ամփոփ ձեւով ներկայացուց խաղերուն կանոնները եւ շեշտը դրաւ այն գաղափարին վրայ, որ եղբայրական բնոյթ ունեցող այս խաղերուն նպատակն է մրցակցութեան ոգին զարգացնել մարզիկներուն մէջ եւ ինչ ալ ըլլան խաղերուն արդինքները, Հ.Մ.-Լ.-Մ.ական կեցուածքով եւ արժանավայ-նել մասնակցութեամբ ներկայացնել մասնաճիւղերը:

Բեմ բարձրացաւ Գէմպրիճի վարչութեան ատենապետուհի քոյր Թալին Տանօղիեան եւ իր խօսքին սկիզբը նշեց, որ Հ.Մ.-Լ.-Մ. կը նշանակէ Հայ Մարմանակը-թական Ընդհանուր Միութիւն: Հ.Մ.-Լ.-Մ. հիմնուած է 1918-ին եւ ներկայիս կը հաշուէ աւելի քան 111 մասնաճիւղեր, մօտաւոր 25 երկիրներու մէջ: Քոյրը անդրադարձաւ Գանատայի Գէմպրիճի մասնաճիւղի հիմնադրութեան եւ ըսաւ, որ ներկայիս մասնաճիւղի անդամներուն թիւը կը հասնի 230 մարզիկներու

եւ սկառուտներու, որոնք կը շարունակեն պահպանել այս գեղեցիկ ժառանգութիւնը՝ Հ.Մ.-Լ.-Մ.ը:

Այս առիթով իր արտասանած խօսքին մէջ, Հ.Մ.-Լ.-Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուէլ Քէօսէեան նշեց, որ սրտի մեծ հրձուանք կ'ապրինք, երբ մեծ թիւով մարզիկներ կը տեսնենք մեր աչքին առջեւ: Գանատան իր մասնաճիւղերու կողքին այս տարի ունեցաւ նորածին մը՝ Օթառուայի միաւորը, որուն ներկայու-

թիւնը այսուհետեւ գործօն պիտի ըլլայ միութեան աշխատանքներուն մէջ: Ատենապետը իր խօսքը ուղղեց մարզիկներուն ըսելով. «Միրելի՛ մարզիկներ, այսօր ձեր օրն է, խանդավառեց՛ք զիրար, բարձրացէ՛ք եւ բարձրացուցէ՛ք, իսկ խաղի աւարտին զանց առնէք արդիւնքները եւ յիշեցէ՛ք, որ դուք մարզիկներ էք, Հ.Մ.-Լ.-Մ.ական մարզիկներ, միշտ յաղթական, որովհետեւ այս միութեան եւ հայութեան մէկ մասնիկն էք»:

Սրտի խօսքով հանդէս եկաւ Հ.Մ.-





**Հ.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան Գանատայի անդամ քոյր Լիոնի Սարմագեան:** Քոյր Սարմագեան ողջունեց ներկաները, մարզախաղերուն մասնակից մասնաճիւղերը եւ նորաստեղծ Օթառուայի միաւորը: Ան գնահատեց նաեւ մարզախաղերու մասնակցութեան համար հիւրաբար ներկայութիւնը Արեւելեան եւ Արեւմտեան Մ. Նահանգներէն Հ.Մ.Ը.Մ.Ը.ական մարզիկներու: Քոյր Սարմագեան դրուատիքով անդրադարձաւ Գէմպրիճի վարչութեան եւ մարզական

յանձնախումբին, որոնք ծրագրեցին եւ իրագործեցին 51-րդ մարզախաղերը: Քոյրը յիշեց նաեւ շեփորախումբը, որուն ներկայութիւնը խրախուսեց ներկաները եւ ամբողջացուց յատագիրը: Վերջապէս, քոյր Սարմագեան բարձր գնահատեց 106-ամեակի ջանակիր նորահաս սերունդը, որ ամէն ճիզ ի գործ կը դնէ միութիւնը առաջնորդելու դէպի յաղթանակ եւ միացեալ ու հզօր Հայաստան:

**Յայտագիրի աւարտին, հայրական**

իր պատգամը փոխանցեց Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Բաբեկէն Արք-Զարեան: Ան ըսաւ. «Ինծի համար մեծ ուրախութիւն է ներկայ գտնուիլ այս հանդիսութեան: Այս ո՛չ միայն մարզական հանդիսութիւն, այլև՝ յալթանակի փառատօն է, միասնական կեցուածքի արտայայտութիւն է, հաւաքական եւ մարզական աշխատանքի դրսեւորում է»: Առաջնորդը իր կարգին գնահատեց Շրջանային Վարչութեան յանձնախումբը եւ կամաւորներու փաղանգը, որոնք բժախնդրուէն պատրաստած էին հանդիսութիւնը. Ան իր խօսքը աւարտեց ըսելով. «Միթեցէ՞ք Աստուած ու Հայրենիք, հաւատարիմ մնացէք քրիստոնէութեան եւ հայ հաւատքին ու անոր ընդմէջէն տէր դարձէք հայ մշակոյթին»: Հուսկ, Առաջնորդը իր խօսքը աւարտեց «Տէրունական» եւ «Զգործս ձեռաց մերոց» աղօթքներով:

Եփորախումբին «Յառաջ նահատակ» քայլերգին կատարողութեամբ հանդիսութիւնը հասաւ աւարտին:





## «ՎԿԱՅԵԱԼ» ԿԱՐԳԻ ՏՈՒՂՌՈՒԹԻՒՆ ԵՒ «ՀԱՅ ՍԿԱՌԻՏԻ ՕՐ» ՈՒԱՆ ՆՇՈՒՄ

Հուրինա  
ԹՈՐՈԽԹՈ

**Հ**ովանաւորութեամբ Հ.Մ.-Լ.Մ.-ի Գանատային Շրջանային Վարչութեան, կազմակերպութեամբ Շրջանային Սկառուտ. Խորհուրդի եւ Շրջանային Խմբապետութեան, Կիրակի, 23 Փետրուար 2025-ին, Մոնթրէալի Ս. Յակոբ Ազգային վարժարանի «Բաստրմածեան» սրահին մէջ տեղի ունեցաւ «Վկայեալ» կարգի տուչութիւն եւ «Հայ սկառուտի օր» ուան նշում:

Իրենց ներկայութեամբ հանդիսութիւնը պատուեցին Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Բարդէն Արք. Զարեան, Յակոբ Վրդ. Եագուապեան, Հ.Մ.-Լ.Մ.-ի Կեղրոնական Վարչութեան անդամ քոյր Լիոնի Սարմազեան, Հ.Յ.Դ. Գանատայի Կեղրոնական Կոմիտէի եւ քոյր միութիւններու ներկայացուցիչներ, Շրջանային Վարչութեան եւ Շրջանային Սկառուտ. Խորհուրդի անդամներ, Հ.Մ.-Լ.Մ.-ի Մոնթրէալի եւ Լաւալի մասնաճիւղերու վարչականներ եւ Սկառուտ. Խորհուրդի անդամներ, ինչպէս նաեւ՝ անցեալի ծառայութիւն ունեցող Հ.Մ.-Լ.Մ.-ականներ, ծնողներ ու համակիրներ:

Հանդիսութեան սկսաւ Գանատայի, Հայաստանի, Արցախի եւ Հ.Մ.-Լ.Մ.-ի քայլերգներով եւ Գանատայի Հնդհանուր Խմբապետ եղբ. Արուշ Պէրպէրեանի «Պատուի ա՛ռ»ի հրահանգով:

Օրուան բեմավարներ քոյր Մովակ Սողանեմէզեան-Պչաքճեան եւ Ճեսիքա Մարկորեան պահեցին յայտագիրին հերթականութիւնը եւ բժախնդրութեամբ ընթերցեցին Հ.Մ.-Լ.Մ.-ական նշանախօսքեր եւ չորհաւորագիրներ:

Հանդիսութեան բացման խօսքը ար-

տասանեց Շըջանային Սկառուտ. Խորհուրդի ատենապետ եղբ. Ալեքսան Գույումճեան: Եղբայրը իր բացման խօսքին մէջ ըսաւ. «Հ.Մ.-Լ.Մ.-ի սկառուտները Վարդանանց սերունդի ասպետական ոգիէն ներշուած, Վարդանանց օրը յայտարարած են «Հայ սկառուտի օր»: Այսօր առաւել եւս իւրայատուկ օր է բոլորիս համար, որովհետեւ խումբ մը սկառուտներ պիտի օժտուին «Վկայեալ» կարգի վկայականներով, ինչ որ իրենց աշխատանքով ու գիտելիքներով խարիսխը



պիտի կազմէ հայակերտման մեր աշխատանքին»:

Խումբ մը քոյրերու եւ եղբայրներու կողմէ արտասանուած Մուշեղ իշխանի «Անցէք հայարտ»ը եւ Պարոյր Սեւակի «Հայաստան» ասմոննքները, ջութակի ընկերակցութեամբ եղբ. Յարութ Գարտանաքեանի, յուզնախառն պահեր ապրեցուին ներկաներուն:

«Հայ սկառատի օր»ուան խորհուրդը փոխանցեց Հ.Մ.Լ.Մ.ի Գանատայի Շըջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուէլ Քէօսէեան:

Ատենապետը նախ ողջունեց ներկաները, ապա հակիրճ կերպով անդրադաւ «Վկայեալ» կարգին եւ թեկնածու քոյրերուն ու եղբայրներուն, որոնք լրջորէն հետեւեցան սեմինարի դասախոսական վեց նիւթերուն եւ հարստացնելով իրենց գիտելիքները ամեռղացուցին սեմինարին ընդհանուր կանոնները եւ արժանի դարձան կարգին:

Եղբ. Մանուէլ իր խօսքը շարունակեց՝ «Հ.Մ.Լ.Մ.ի աւելի քան 107-ամեայ սկառատութիւնը եւ անոր ընդարձակ գործունէութիւնը հակիրճ խօսքերով ներկայացնելը անկարելի է: Այնուամենայնիւ, պատշաճ է, որ յիշենք եւ յարգենք սկառատական շարժումի հիմնադիրները, պատմական յետադարձ ակնարկ մը կատարելով»:

Պատգամախօս եղբայրը ներկայացուց լորտ Պէյտըն Փառուրի կեսագրականը, ռազմական կենցաղը, հրատարակած գիրքերը եւ իր ու քրոջ կազմակերպած բանակումները: Ան նշեց, որ



Փառուրի քարոզչական եւ կազմակերպչական աշխատանքներուն չնորհիւ հետգհետէ աշխարհով մէկ սկառատական շարժումը կը ծաւալի եւ իր մէջ կը ներառէ 200 երկիրներ եւ աւելի քան 57 միլիոն սկառատական սկառատական յայնածաւալը ընթացքը խթան կը հանդիսանայ, որ Շաւարչ Քրիսեան «Մարմնամարդ» թերթին մէջ խրախուսէ դեկավար տարրերը ստեղծելու նմանօրինակ շարժում մը՝ հայկական բնոյթով: Մրագիրը կ'իրականանայ եւ սկառատական առաջին խումբը կը կազմուի 1912-ին, Սկիւտարի մէջ:

Եղբ. Քէօսէեան այնուհետեւ նշեց շարժումին զարգացումը, Հայոց Ցեղասպանութեան լընթացքին կրած զանդ-

ւածային ու աւելիչ հարուածը եւ միութեան հայապահանման աշխատանքներուն ունեցած նպաստը: Եղբայրը ներկայացուց նաեւ Հ.Մ.Լ.Մ.ի սկառատական գործունէութեան տարածումը Պոլիսէն դէպի արտասահման եւ յատակ փաստերով յիշեց սկառատական առաջին կեղրոնական յանձնախումբին ստեղծումը, համագաղութային բանակումները, խմբապետական համագումարները, ինչպէս նաեւ Հ.Մ.Լ.Մ.ի տարածումը մինչեւ Հայաստան եւ Արցախ:

Պատգամախօսը աւելի ուշ անդրադաւ Հ.Մ.Լ.Մ.ի Գանատայի շրջանի սկառատական գործունէութեան: Ան հաստատեց, որ Գանատայի բոլոր մասնածիւղերն ալ աշխոյժ գործունէութիւն ունին՝ համախմբելով աւելի քան 900 սկառատական եւ 2000 Հ.Մ.Լ.Մ.ականներ:

Եղբայրը իր խօսքին աւարտին անդրադաւ սկառատութեան հայեցի դաստիարակութիւն ջամբելու առաքելութեան, ուր երեխան մանուկ հասակէն կը դաստիարակուի ազգային, հայենասիրական եւ մարդկային սկզբունքներով: Ան գնահատեց հիմնադիր սերունդը, որ գժուարին ու ծանր պայմաններու մէջ հիմնեց այս միութիւնը: Ան քաջալերական խօսքերով գնահատեց նորահաս երիտասարդները, որոնք արժանի ժառանգործները կը հանդիսանան միութեան ջահը վառ պահելու:

Խումբ մը քոյրերու հեղաճկուն շարժումներով հայկական պարի գեղեցիկ





ներկայացումը բարձր տրամադրութիւն ստեղծեց ներկաներուն մօտ:

Թաւջութակով եղք. Արէն Արսէն-եանի «Էրեբունի» նուազը ազդեցիկ եւ հաճելի պահեր ստեղծեց ունկնդիրներուն մօտ: Բոլորին կողմէ հանրածանօթ «Գիտաշխն»ը մեներգեց եղք. Սագո Աշբեան:

«Սարդարապատ» երաժշտութեան զուգահեռ, խումբ մը արենոյշ-ներու պարը բարձր տրամադրութիւն ստեղծեց հանդիսատեսներու մօտ, որոնք ծափերով գնահատեցին ներկայացումը:

Թորոնթոհայ երգիչ Սերոբ Յակոբեան հանդէս եկաւ ազգային-յեղափոխական երգերով:

Հանդիսութիւնը հասած էր աւարտին եւ վկայուող քոյերն ու եղբայրները բարձրացան բեմ, ուր Հ.Մ.Լ.Մ.ի Գանատայի Շրջանային Խմբապետ եղք. Պաֆփի Դաւիթեան եւ խմբապետուհի քոյր Կասիա Կարապետեան-Կիւլեան ամփոփ

տեղեկագիրով մը ընթերցեցին «Վկայեալ» կարգի սեմինարին տեսական եւ գործնական բաժիններու տեղեկատուութիւնը: Խմբապետները չնորհակալութիւն յայտնեցին բոլոր անոնց, որոնք ճիգ չխնայեցին սեմինարին յաջողութեան համար:

Բոլոր խմբապետները վկայուեցան «Վկայեալ» կարգի վկայականներով: Աւարտին, Հ.Մ.Լ.Մ.ի Գանատայի Հնդհանուր Խմբապետ եղք. Արուշ Պէրպէրեան հանդէս եկաւ գնահատանքի խօսքով



եւ ըսաւ. «Գիտեմ, որ այս վկայականին արժանանալու համար որքան աշխատանք տարիիք, սակայն յաջողեցաք իրականացնել ձեզի վստահուած բոլոր աշխատանքները: Դուք այսօր վկայեցաք եւ այսօրուընէն ձեր աշխատանքը ծանրաբեռնուեցաւ: Միութիւնը շատ ակնկալութիւններ ունի ձեզմէ: Ես քաջ վստահ եմ, որ դուք պիտի ըլլաք արժանաւոր դրօշակակիր սկառատներ եւ ձեզի վստահուած դրօշակատարեալ ձեւով պիտի պահէք ու փոխանցէք յաջորդներուն: Դաշտը ձերն է եւ աշխատանքը ձեզի, աշխատեցէք, ծառայեցէք, բարձրացէք եւ բարձրացուցէք»:

Հանդիսութեան եզրափակիչ խօսքը արտասանեց Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Բաբեգն Արք. Զարեան: Անբերկրանքի զգացումներով նշեց: «Ծառայութեամբ կը մեծնաք, ծառայութեամբ կը հարստանաք եւ ծառայութեամբ մեծ ներդրում կ'ունենաք մեր եկեղեցւոյ, ազգին եւ հայրենիքին»: Ապա, խօսքը «Վկայեալ» կարգի տիրացողներուն ուղղելով Սրբազնը ըսաւ. «Հաւատարիմ մնացէք ձեր ուխտին, հայրենիքին եւ մեր ազգի արժանիքներուն, սրբութիւններուն ու դատին: Շնորհաւոր հայ սկառատի օրը, շնորհաւոր իւրաքանչիւրիդ եւ շնորհաւոր Հ.Մ.Լ.Մ.ի մեծ ընտանիքին»:

Հանդիսութեան աւարտին «Վկայեալ» կարգի տիրացողներու եւ պատասխանատուներու կողմէ տեղի ունեցաւ կարկանդակի հատում: Ներկաները սրահն մեկնեցան հպարտանքով եւ սրտի գոհունակ զգացումով:



## ՊԱՐԵԹՊՈԼԻ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԵՌՈՐԵՎՅ ՄՐՑԱԾԱՐՔ՝ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ

**Հուրինա  
ԹՈՐՈՆԹՈ**

**Հ.Ս.-Լ.Մ.Ի ԹՈՐՈՆԹՈՂԻ մասնա-  
ճիւղի վարչութեան, կազ-  
մակերպութեամբ մասնաճիւղի Մար-  
զական Խորհուրդին, 17-19 Յունուար  
2025-ին տեղի ունեցաւ պատրիարքովի  
բարեկամական եռօրեայ մրցաշարք  
մը՝ մասնակցութեամբ 8-18 տարեկան  
մարզիկ-մարզիկուհիներու: Մրցա-  
շարքին մասնակցեցան Հ.Ս.-Լ.Մ. Թորոնթո տարիքային եօթը  
խումբով, Հ.Բ.Լ.Մ. Թորոնթո՝ 6 խումբով եւ յունական  
ԱՀԵՊԱ Թորոնթո՝ 5 խումբով, ընդամէնը՝ 18 խումբեր եւ 200  
մարզիկ-մարզիկուհիներ:**

**Հ.Ս.-Լ.Մ. Թորոնթո նպատակադրած էր զարկ տալ շրջա-  
նին մէջ պատրիարքովի մարզաճեւին զարգացման ու տարած-  
ման եւ նման նախաճեռնութիւն մը լաւապէս պիտի ծառայէր  
նպատակին եւ պիտի նպաստէր, որ մարզիկները յաւելեալ կեր-  
պով մարզուէին եւ անոնց մրցակցութեան ոգին թափ ստա-  
նար: Միաժամանակ, ծնողները առիթը պիտի ունենային  
վայելելու իրենց զաւակներուն խաղարկութիւնը:**

Իր տեսակին մէջ իրայատուկ այս մրցաշարքը կատար-  
ւեցաւ բժախնդրութեամբ: Հայ եւ օտար հանդիսականներու  
ներկայութիւնը, գնահատական խօսքերը եւ բարձր տրամադ-



րութիւնը աշխուժացում ստեղծեցին խաղացողներուն եւ կազ-  
մակերպիչ յանձնախումբին մօտ, որոնք մեծ խանդավառու-  
թեամբ յառաջիկային եւս պիտի ծրագրեն նմանօրինակ բա-  
րեկամական մրցաշարքներ՝ Թորոնթոյի հայ եւ օտար խում-  
բերուն միջեւ:

Մրցաշարքին իրենց մասնակցութիւնը բերին կամաւոր  
իրաւարարներ, որոնք լրջօրէն հետեւեցան իւրաքանչիւր խա-  
ղին եւ արդարօրէն վարեցին բոլոր մրցումները:

Մարզական Խորհուրդի համակիրներու օժանդակ խրմ-  
բակի մնայուն ներկայութիւնը ապահովեց մարզախաղերու  
կարգապահական կանոններուն յարգումը:

Աւարտին, առաջնութեան տիրացաւ Հ.Ս.-Լ.Մ. Թորոնթո,  
երկրորդ հանդիսացաւ Հ.Բ.Լ.Մ. Թորոնթո, երրորդ՝ ԱՀԵՊԱ  
Թորոնթո: Նուէլներով գնահատուեցան կամաւոր աշխատող-  
ները, իրաւարարները, ինչպէս նաև՝ մարզիկները, որոնք ամէն  
ջանք ի սպաս դրին կամաւոր ծառա-  
յութեամբ իրենց մարզիկներուն մէջ  
արթնցնելու համար սէրը միութեան  
եւ մարզախաղին հանդէպ:

Մարզիկներու, խաղացողներու,  
համակիրներու եւ ծնողներու քաջալե-  
րական ու գնահատական խօսքերը  
ոգեւորեցին կազակերպիչ յանձնա-  
խումբը նմանօրինակ մարզական  
մրցաշարքներ կատարելու տարեկան  
դրութեամբ:





## ՔԱՀԱՄ-Ի 39-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՓԱԿՄԱՆ ԵՒ ՆԱՒԱՍՄՐԴԵԱՆ 48-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԲԱՑՄԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Թղթակից

ԼՈՍ ԱՆՁԵԼԸ

**Ե**րկար ամիսներու մարզական գեղեցիկ մրցակցութիւններէ ետք, Կիրակի, 9 Մարտ 2025-ի յետմիջօրէի ժամը 4-ին, Birmingham Community Charter High School-ի մարզադաշտին վրայ հանդիսաւոր կերպով փակուեցան Հ.Մ.Լ.Մ.Ի ՔԱՀԱՄ-Ի 39-րդ մարզախաղերը՝ բազմաթիւ համակիրներու ներկայութեամբ:

Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի Առաջնորդ Գեղամ Արք. Խաչեր-



եան փոխանցեց իր հայրական բարեմաղդանքներն ու օրհնութիւնները: Այնու-

հետեւ, ՔԱՀԱՄ-Ի մասնակցող վարժարաններու տնօրիններուն անունով խոսք առաջ Ծող եւ Ալէք Փիլիպոս Ազգ. Վարժարանի տնօրինուհի դոկտ. Միւզի Օհանեան: Ապա, Շրջանային Վարչութեան պատգամը փոխանցեց Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Փիէր Մանուկեան:

Նոյն արարողութեան ընթացքին պաշտօնապէս բացուեցան Հ.Մ.Լ.Մ.Ի Նաւասարդեան 48-րդ մարզախաղերը եւ հանրութեան ներկայացուեցան պատւոյնախագահները՝ Հ.Մ.Լ.Մ.ական եղբ. Ճան եւ քոյր Սինթիա Անտոնեանները,





ներկայութեամբ Նաւասարդեան 47-րդ մարզախաղերու պատուոյ նախագահ տոքթ. Մայք Սարեանի: Յայտարարուեցաւ 2025-ի «Տիպար Հ.Մ.Լ.Մ.ական»ը՝ վաստակաշատ Հ.Մ.Լ.Մ.ական եղբ. Վագդէն Գալայնեան:

Հ.Մ.Լ.Մ.ը յատուկ մեծարանքով պատուեց համայնքի քաջարի հրչէներն ու ոստիկանները, որոնք անսասան կանգնեցան վայրագ հրդեհներու դէմ՝ պաշտպանելով ժողովուրդին բնակարանները, դպրոցները եւ ընտանիքները:

Ոգեւորիչ այս միջնորդտին յաջորդեց այնքան անհամբերութեամբ սպասուած աշակերտական շքերթը, գլխաւորութեամբ իրենց վարժարաններու տնօրիններուն եւ մարզիչներուն: Հ.Մ.Լ.Մ.ի շեփորախումբի խրախուսիչ քայլեղանակներով մարզադաշտ մուտք գործեցին Հ.Մ.Լ.Մ.ի «Հրաշք» բաժանմունքի մարզիկները, որոնք շուրջ 40 հրաշք մարզիկներով իրենց մասնակցութիւնը բերին ՔԱՀԱՄ-ի 39-րդ մարզախաղերու թեթեւ աթլէթի մրցումներուն: Անոնց յաջորդեցին ՔԱՀԱՄ-ի վարժարաններու մարզիկները: Վարժարանին անունը կրող ցուցատախտակներով հպարտօքէն դաշտ մուտք գործեցին «Ռոզ եւ Ալէք Փլիխպոս», «Արի Կիրակոս Մինասեան», «Հայ Քոյե-

րու», «Հ.Բ.Լ.Մ.ի Մանուկեան-Ծէմիրճեան», «Մեսրոպեան», «Շարլոթ եւ Էլիզ Մելտինեան», «Վահան եւ Անուշ Շամլեան», «Սահակ Մեսրոպ», «Սրբոց Նահատակաց Ֆերազեան եւ Մարի Գապայեան» եւ «Ալֆրէտ եւ Մարկրիթ Ցովսէփեան» վարժարաններու աշակերտները, որոնք ներկաներու երկարաշունչ ծափողջոյններուն արժանանալէ ետք, իրենց տեղերը գրաւելին մարզադաշտին վրայ, ուր տեղի ունեցաւ ՔԱՀԱՄ-ի մարզաճիւղերու ընդհանուր դասաւորման ախոյեանութեան բաժակներուն յանձնումը:

Ցատուկ երախտագիտութիւն կը յայտնենք ՔԱՀԱՄ-ի մասնակցող վարժարաններուն, տնօրիչնութիւններուն, մարզիչներուն, ծնողներուն եւ Հ.Մ.Լ.Մ.ի «Կամաւոր բանակ»ին՝ Շրջանացին Մարզական Խորհուրդին, որոնց շնորհիւ այս տարի եւս յաջողութեամբ պակուեցան ՔԱՀԱՄ-ի մարզախաղերը: Շնորհակալութիւն նաեւ հանդիսութեան կազմակերպիչ յանձնախումբին:



## ՏԻՊԱՐ ԵՒ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԵՂԲՈՐ ՄԸ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(Հ.Մ.Լ.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՆԴԱՄ  
ԵՂԲ. ԻՇԽԱՆ ԵՂԻԱՅԵԱՆԻ ԴԱՄԲԱՆԱԿԱՆԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝  
ԵՂԲ. ԶԱԻՔՆ ԳԱՍԱՊԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ)

**Ե**րկայ դարու պարտադրած  
պայմաններուն բերումով,  
իրարու հանդիպելու կարելի-  
ութիւնները նուազած են, դժբախտա-  
բար: Բոլորին փափաքը կ'ըլլայ ու կը  
մնայ, որ բարեկամներ, գաղափարակից-  
ներ, ազգականներ միայն ուրախ առիթ-  
ներով հաւաքուին, քովկովի գան: Բայց  
կեանքը անակնկալօրէն երեսն տարբեր  
պատկեր կը ներկայացնէ:

Կեանքի օրէնքն է եւ մենք մահկանա-  
ցուներս բոլորս կը գիտակցինք, որ հա-  
րազատ կորսնցնելը անխուսափելի է:  
Բայց համոզուին ու ընդունիլը դժուար  
է: Հարազատ կորսնցնելու ցաւը իր  
դրոշմը կը ձգէ մեր վրայ: Կրակը ինկած  
տեղը կ'այրէ:

Դժուար է համոզուիլ, որ այսօր լի-  
քանանահայ գաղութիւ իւրայատուկ եւ



Հպարտ սերունդէն հայորդի մը եւս կը  
մեկնի:

Այդ սերունդը, որ հայու ծանօթ զրբ-  
կանքներէ ետք, աշխատասիրութեամբ,  
զոհողութիւններով, հաւատքով  
ու կամքով զանազան նուա-  
ճումներ կատարեց Լիբանանի  
մէջ:

Այդ սերունդը հիմնեց յայտ-  
նի գործարաններ, հաստատու-  
թիւններ: Տուալ ուսուցիչներ,  
տնօրիններ, սպաններ, բժիշկներ  
եւ քաղաքական դէմքեր: Բայց  
նաեւ տուալ հաւատաւոր միու-  
թենականներ, Հ.Մ.Լ.Մ.ական

Ա. շարք, ձախէն աջ՝ Զաւէն  
Գասապեան, Յովսէփ Սարգար-  
եան, Յովհաննէս Թերմանեան  
(Արելլա), Բարսեղ Գաւճեան եւ  
Անդրանիկ Շեօրքիւնեան:

Բ. շարք, ձախէն աջ՝ Սկա-  
ռատ. Խորհուրդի ատենապետ  
Ուստոմ ..... , Յովհաննէս Զա-  
փարեան («Շաքիմ»), Սարգիս  
Սարգիսեան եւ Սարգիս Փանու-  
եան:

տիպար մարզիկներ, ժողովականներ եւ  
միութենականներ:

Եղբ. Զաւէն Գասապեան նշուած բո-  
լոր իրագործումներուն վկան էր: Ապրե-  
ցաւ այդ օրերը եւ իր հետ ապրեցուց:

Հիմնեց իր տպարանը, զոր բազմիցս  
այցելած եմ տպագրական գործերու հա-  
մար: Եղբ. Զաւէն առիթը չէր փախցներ  
խորհուրդ մը տալու, պատգամ մը փո-  
խանցելու եւ հետաքրքրուելու իր այն-  
քան սիրած Հ.Մ.Լ.Մ.ի անցուղարձերով:

Երբեմն հարցի մը գծով կը փրփէր,  
կը զղայնանար: Կը զարմանայի իր հա-  
կազդեցութեան: Հետագային եղրակա-  
ցուցի, որ անկեղծ ու տիպար Հ.Մ.-  
Լ.Մ.ականը, որեւէ թերութեան, զար-  
տողի իրողութեան կամ դէպքի հանդի-  
պելով բնականաբար պիտի պոռթկար:  
Ի վերջոյ ան եղած էր Հ.Մ.Լ.Մ.ական  
տիպար մարզիկ, Փութպոլի մասնա-  
գէտ, Պուրճ Համուտի եւ Պէյրութի  
Հ.Մ.Լ.Մ.ի Փութպոլի ներկայացուցչա-  
կան խումբերու եւ աւելի ուշ նաեւ՝ Լի-  
բանանի ազգային խումբի անդամ:

Եղբ. Զաւէն հետագային մաս կազ-  
մեց Հ.Մ.Լ.Մ.ի Լիբանանի Անժիլիասի  
մասնաճիւղի հիմնադիր սերունդին: Ան



մաս կազմեց ընտրուած առաջին վարչութեան, որ Անթիլիասի ընդարձակ շրջանին մէջ 55 տարիներէ ի վեր յատուկ առաքելութիւն մը պիտի ունենար հայապահնման եւ ազգային դաստիարակութեան ամէնէն կարեւոր ոլորտներէն ներւ:

Այդ սերունդը տարբեր հաւատք ունէր հայկականութեան, հայրենիքի եւ Արցախի, լիբանանահայ մեր գաղութին ու Հ.Մ.Լ.Մ.ին հանդէպ: Հ.Մ.Լ.Մ.ը ամէն ինչ էր, ընտանիքէ աւելին էր: Եղբ. Զաւէն այդ սերունդէն էր: Այդ սերունդն էր:

2015-ին, Հ.Մ.Լ.Մ.ի Անթիլիասի մասնաճիւղի հիմնադրութեան 45-ամեակին առիթով պատիւը ունեցայ ներկայ գտնուելու եղբ. Զաւէնին Հ.Մ.Լ.Մ.ի «Ծառայութեան» շքանշանի տուչութեան: Ուրախ էր եւ մտախոհ...

Ուրախ էին իր հարազատները եւ միութենական ընտանիքի անդամները:

«Ծառայութեան» շքանշանը կը տրըւի տիպար եւ օրինակելի Հ.Մ.Լ.Մ.ականներու, որոնք իրենց գործունէութեամբ օժանդակած են միութեան եւ օգտակար հանդիսացած են անոր ամրապնդման, զարցացման ու վերելքին: Եղբ. Զաւէնը արժանի էր այդ շքանշանին ու գնահատանքին:

Կրնամ վկայել, որ ան Հ.Մ.Լ.Մ.ական եւ ազգային շունչը փոխանցած է իր զաւակներուն եւ թոռներուն, անխտիր: Բոլորն ալ հայու տիպար դաստիարակութեան արժանացան իր եւ տիկին Վրէժուհիին հովանիին ներքոյ:

Վարձքդ կատար եղբ. Զաւէն,  
Հողը թեթեւ գայ վրադ:

## ԹԱԼՉԱՆՔ

### Եղբ. Զաւէն ԳԱՍՏՊԵԱՆ

Եղբ. Զաւէն Գասապեան ծնած է 1941-ին, Պուլթ Յամուտ, Յակոր եւ Վերոնիքա Գասապեաններու ընտանեկան յարկին տակ: Ինը զաւակներու տէր ատանացի այս բազմանդամ ընտանիքի զաւակ Զաւէնը իր նախնական ուսումը ստացած է Սեսրոպեան վարժարանի եւ ապա՝ Սէն Կրէկուար դպրոցին մէջ: Պատանի տարիքէն ան սէր ունեցած է Ֆութապոլի հանդէպ, նախ մաս կազմելով Հ.Մ.Ը.Ս.ի Պուլթ Յամուտի, ապա՝ Պէյրութի ներկայացուցչական խումբերուն, իր աւագ եղբօր՝ Արոյին հետ: Աւելի ուշ ան հրաւիրուած է Լիբանանի Ֆութապոլի ազգային խումբ: Մարզական իր նուածումներով ան վաստակած է «Երկար մարդ»ու կոչումը:

Հ.Մ.Ը.Ս.ը անոր արեան մէջ էր ո՛չ միայն իբրեւ մարզական միութիւն, այլև՝ «Բարձրացի՛ր-բարձրացուր»ի ամբողջական հասկացողութիւն: Ան անդամ էր այն վարչութեան, որ Անթիլիասի մասնաճիւղի հիմնադրութեան կազմակերպական աշխատանքները յաջողցնելով, 1970-ին ընթացք տուալ մասնաճիւղի գործունեութեան: Իր երկար տարիներու ծառայութեամբ, 2015-ին ան արժանացած է Հ.Մ.Ը.Ս.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան «Ծառայութեան» շքանշանին:

Կ'ամուսնանայ Վրէժուհի նուլֆայեանի հետ եւ կը բախտաւորուին հինգ զաւակներով եւ աւելի ուշ՝ վեց թոռներով: Երիտասարդ Զաւէն արհեստով զինկուրաֆ-տպագրիչ, կը հիմնէ իր տպագրական հաստատութիւնը եւ նախանձախնդիր կ'ըլլայ հայալեզու զանազան հրատարակութիւններու իրականացման: 1993-ին, առ ի քաջալերանք Հ.Մ.Ը.Ս.ի Ֆութապոլի խումբին արձանագրած արդիւնքներուն, անբողջ տարի մը ան սիրայօժար կը ստանձնէ միութեան «Մարզիկ» պաշտօնաթերթին տպագրութիւնը:

Աւանդապաշտ Զաւէն իբրեւ հայր եւ մեծ հայր նախանձախնդիր եղած է իր զաւակներու հայաշունչ դաստիարակութեան, միշտ նեցուկ կանգնելով եւ քաջալերելով, որ անոնք անդամակցին միութենական մեր կեանքին: Անոր ամենօրեայ մտահոգութիւններն էին Յայաստանն ու հայութիւնը յուզող հարցերը:

Նշմարիտ եւ ազատ խօսքի մարդն էր ան, ինչքան ալ այդ ճշմարտութիւնը ցաւցնող ըլլար: Եէր կրնար ընդունիլ անարդարութիւնը, եւ կողմնակից էր բացարձակ արդարութեան, անգիծող էր անոր հանդէպ եւ միշտ կ'ուզէր ծիշդը, կատարեալը եւ արդարը:



# ԵՂԲ. ՊԱՐԳԵՒ ԱՍԼԱՆԵՎՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Սգակիր մը  
ԱՌՆՅԵՍ

**Հ.Մ.Լ.Մ.Ի Առնհեմի Մեկուսի շրջանը 19 Փետրուար  
2025-ին խոր կակիծով կորսնցուց իր վաստակաշատ  
անդամներէն եղբ. Պարգեւ Արթին Ասլանեանը, որ  
տարի մը առաջ միութեան «Ծառայութեան» շքանշանին ար-  
ժանացաւ, ձեռամբ՝ Հ.Մ.Լ.Մ.Ի Կեղրոնական Վարչութեան  
ատենապետ եղբ. Յակոբ Խաչերեանի եւ ներկայութեամբ  
Հ.Մ.Լ.Մ.Ի Կեղրոնական Վարչութեան կազմի անդամներու,  
որոնք նոյն օրերուն իրենց լիազումար նիստերը կը գումա-  
րէին Ալմելօ քաղաքին մէջ:**

Եղբ. Պարգեւ Ա. Ասլանեան ծնած է 1 Յուլիս 1942-ին, Իրա-  
քի մայրաքաղաք Պաղտատի մէջ: Հնտանիքի նիւթական ծանր  
պայմաններուն պատճառով ան իր նախակրթութիւնը կը  
ստանայ թաղամասի պետական վարժարանին մէջ: Իր հօրմէ  
եւ գերդաստանէն կը ստանայ ազգային դաստիարակութիւն  
եւ հայեցի կրթութիւն՝ հայ լեզուի, հայոց պատմութեան եւ  
կրօնքի ծանօթութիւն եւ սէր:

Երկրորդական ուսումը ստանալէ ետք, 1967-1968 տարեշր-  
ջանին, երիտասարդ եղբ. Պարգեւ յաջողութեամբ կ'աւարտէ  
ֆինանսական եւ հաշուապահական գիտութիւններու հիմ-  
նարկը:

1976-ին ան կը պսակուի Հ.Մ.Լ.Մ.ական Ժանէթ Գէորգեա-  
նի հետ եւ կը բախտաւորուի 4 զաւակով՝ Արա, Նինա, Նայերի  
եւ Սարգիս:

2007-ին, Իրաքի անապահով եւ ծանր պայմաններուն պատ-  
ճառով՝ ընտանիքով կը տեղափոխուի Նետըրլինտներու Առն-  
հեմ քաղաքը, ուր իրեւ խորհրդատու եւ փորձառու  
անձնաւորութիւն հիմնական եւ կարեւոր դեր կ'ունենայ  
Հ.Մ.Լ.Մ.Ի Առնհեմի մասնաճիւղի հիմնադրութեան (2015) եւ



ձեւաւորման աշ-  
խատանքներուն  
մէջ: Մինչեւ մահը  
ան կը հանդիսա-  
նայ միութեան  
գործունեայ ան-  
դամներէն մէկը:


Հայրենասէր ու խանդակառ եղբ. Ասլանեան պատանեկու-  
թեան մասնակցած է Հ.Մ.Լ.Մ.Ի Պաղտատի մարզական եւ  
սկառատական ձեռնարկներուն: Մարզական կեանքին մէջ  
փայլած է իբրեւ Նորաշէնի շրջանի փինկ-փոնկի եւ լողի  
մարզիկ:

1970-1972 ան մաս կը կազմէ Հ.Մ.Լ.Մ.Ի Պաղտատի վարչու-  
թեան՝ եղբ. Հայկ Պոստանեանի ատենապետութեան ժամանա-  
կաշրջանին:

Քսան տարի ետք, 1994-ին ան վերստին մաս կը կազմէ  
Հ.Մ.Լ.Մ.Ի Պաղտատի վարչութեան՝ այս անդամ եղբ. Յովհան-  
նէս Եսայեանի ատենապետութեան շրջանին:

1996-ին ան կը վերընտրուի վարչական՝ եղբ. Վահագ Մես-  
րոպեանի ատենապետութեան շրջանին:

Զորբորդ անդամ, երբ ան մաս կը կազմէ Պաղտատի վար-



## ՑԱՒԱԿՑԱՎԳԻՐ

Հ.Մ.Լ.Մ.Ի Պաղտատի վարչութիւնը իր կազմին եւ  
անդամներուն անունով ցաւակցութիւններ կը յայտնէ  
Ասլանեան ընտանիքին եւ հարազատներուն՝ եղբ.  
Պարգեւ Ասլանեանի մահուան առիթով: Մահը, որ պա-  
տահեցաւ Չորեքշաբթի, 19 Փետրուար 2025-ին, Նե-  
տքրընտերու Նայմեխս քաղաքին մէջ:

Եղբ. Պարգեւ Ասլանեան ծնած է 1 Յուլիս 1942-ին,  
Պաղտատ, Իրաք: Իր պատանեկութեան ան մասնակ-  
ցած է Հ.Մ.Լ.Մ.Ի Պաղտատի մարզական եւ սկառատա-  
կան աշխատանքներուն:

Եղբ. Ասլանեան երկար տարիներ եղած է Հ.Մ.Լ.Մ.Ի  
Պաղտատի վարչութեան անդամ եւ 2003-2006 ստանձ-  
նած է վարչութեան ատենապետի պաշտօնը:

Հ.Մ.Լ.Մ.Ի ՊԱՂՏԱՏԻ  
ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

չութեան, 2003-2006, կը վարէ ատենապետի պատասխանատու պաշտօնը: Իր ատենապետութեան շրջանին կը կառուցուի մասնաճիւղի ակումբին մարզական ներքին փակ դահլիճը: Կառուցումը կ'իրագործուի միութեան բարերարներու եւ I.R.D. կազմակերպութեան նիւթական օժանդակութեան շնորհիւ:

Այսուհետեւ, եղբ. Պարզեւ առողջական պատճառներով կը դադրի վարչական գործունէութենէ, սակայն միշտ կը մնայ հաւատաւոր Հ.Մ.Լ.Մ.ական, մտահոգ՝ միութեան ներկայով ու պապայով:

28 Յունուար 2024-ին, գնահատանքի յատուկ հանդիսութեան մը ընթացքին, որուն ներկայ կը գտնուին Հ.Մ.Լ.Մ.ի կեդրոնական Վարչութեան կազմի անդամներ, Առնհեմի մասնաճիւղի վարչութեան որոշումով ան կը պարզեւատրուի Հ.Մ.Լ.Մ.ի «Ծառայութեան» շքանշանով:

Եղբ. Պարզեւ Ասլանեան իր մահկանացուն կը կնքէ 19 Փետրուար 2025-ին, հետագայ սերունդներուն ձգելով Հ.Մ.Լ.Մ.ական ծառայութեան մեծ վաստակ եւ բարի անուն:

Ցիշատակը մնայ անթառամ:

## Եղբ. Վիգէն Մարածեանի ՄԱՀՈՒՄՆ ՏԽՈՒՐ ԱՌԻԹՈՎ

Հ.Մ.Լ.Մ.ի Սուրիոյ  
Շրջ. Վարչութիւն  
ՀԱԼԵՊ



4 Փետրուար 2025-ին, ծառայաէր Հ.Մ.Լ.Մ.ական եղբ. Վիգէն Մարաչյեան անդարձ հեռացաւ այս կեանքէն, ետին ձգելով բարի անուն եւ քաղցր յիշատակներ:

Եղբ. Վիգէն Մարաչյեան ծանօթ էր իր նուիրումով եւ օրինակելի վարքով: Ան ծնած է 1954-ին: Փոքր տարիքին անդամակցած է Հ.Մ.Լ.Մ.ի, ըլլալով գայլիկ, սկառուտ, ապա փոխ խմբապետ: Ան մաս կազմած է Հ.Մ.Լ.Մ.ի Հալէպի մասնաճիւղի Սկառուտ. Խորհուրդին, իսկ աւելի ուշ դարձած է Հ.Մ.Լ.Մ.ի Սուրիոյ Շրջանային Սկառուտ. Խորհուրդի անդամ:

Իբրևե գնահատանք իր վաստակին եւ արդիւնաւէտ գործունէութեան, 2024-ին, միութեան 106-ամեակին առիթով, ան պարզեւատրուած է Հ.Մ.Լ.Մ.ի «Ծառայութեան» շքանշանով:

Եղբ. Վիգէն Մարաչյեան փոքր տարիքէն միութենական սկզբունքները անձնական կեանքէն վեր դասելով նուիրաբար ծառայեց բոլորին: Ան մօտէն հետաքրքրուեցաւ միութեան նուաճումներով եւ քաջալեր հանդիսացաւ նոր սերունդի զաւակներուն:

Ճիշդ է, որ անգութ մահը եղբ. Վիգէնը խլեց իր հարազատներէն, ընտանիքէն եւ միութենէն, որոնցմէ ան յաւէտ բաժնըցաւ, սակայն իր տիպար եւ օրինակելի վարքը հալէպահյութեան յիշողութեան մէջ պիտի մնայ յաւերժ:

## Եղբ. ԶԱԻԷՆ ԷՔՍԵՔԾԵԱՆԻ ՅԻՇԱՍԱԿԻՆ

Հ.Մ.Լ.Մ.ի Սուրիոյ  
Շրջ. Վարչութիւն  
ՀԱԼԵՊ



5 Փետրուար 2025-ին, Հ.Մ.Լ.Մ.ի Սուրիոյ շրջանը կորսնցուց իր վաստակաշատ եղբայրներէն՝ Հ.Մ.Լ.Մ.ի «Ծառայութեան» շքանշանակիր, երէց եղբայր Զաւէն էքմէքնեանը:

Եղբ. Զաւէնը բոլորին ծանօթ էր իր մաքուր նկարագիրով եւ միութեան ճամբով հայ ազգին ծառայելու նուիրումով:

Եղբ. Զաւէն էքմէքնեան ծնած է 1956-ին եւ փոքր տարիքէն Հ.Մ.Լ.Մ.ի շարքերը մուտք գործած է իբրեւ գայլիկ, ապա փոխանցուած է սկառուտական շարքերու ու եղած է Վարիչ Առաջնորդ:

Եղբայր Զաւէն նկատելի հմտութիւններով մաս կազմած է Հ.Մ.Լ.Մ.ի մարզական թեւին: Ֆութպոլի մէջ ցուցաբերած է մասնագիտական կարողութիւններ եւ յառաջանալով հասած է մինչեւ ներկայացուցչական առաջին խումբ, միշտ իր մասնակցութիւնը բերելով միջ-միութենական բանակումներու, տողանցքներու եւ մարզական մրցաշարքներու:

Եղբայրը Հ.Մ.Լ.Մ.ի մէջ ունեցած է երկարամեայ ծառայութիւն:

Վարչական գետնի վրայ ան եղած է Հ.Մ.Լ.Մ.ի Հալէպի մասնաճիւղի ֆութպոլի յանձնախումբի ատենապետ, իսկ այնուհետեւ՝ Հալէպի մասնաճիւղի վարչութեան անդամ:

Սուրիոյ Շրջանային Վարչութեան տնտեսական յանձնախումբին մէջ ունեցած է իւրայատուկ ներկայութիւն:

2014-ին, առ ի գնահատանք իր երկարամեայ վաստակին, Հ.Մ.Լ.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան կողմէ ան պարզեւատրուած է Հ.Մ.Լ.Մ.ի «Ծառայութեան» շքանշանով:

Հ.Մ.Լ.Մ.ի մէջ եղբ. Զաւէնը բոլորին ծանօթ էր իր խառապահանջութեամբ, միութեան կանոնագիրին հանդէպ բժախնդիր մօտեցումով եւ իմաստուն ղեկավարի յատկանշներով, որոնց մասին կը վկայեն Հ.Մ.Լ.Մ.ական իրերայաջորդ սերունդները:

Մինչեւ իր յառաջացած տարիքը, եղբ. Զաւէնը մօտէն հետաքրքրուեցաւ Հ.Մ.Լ.Մ.ով: Ուրախացաւ միութեան յաղթանակներով եւ տագնապեցաւ միութեան դիմագրաւած դժուարութիւններով:

Հողը թեթեւ ըլլայ վրադ, սկրեելի՛ եղբայր:

Ցիշատակդ անթառամ պիտի մնայ մեր յիշողութեան մէջ:

## ԵՂԲ. ՀՐԱՄԱ ՊԵՏՐՈՍԵԱՆ. ԽՈՆԱՐՀ ՈՒ ՀԱՒԱՏԱՒՈՐ Հ.Մ.Լ.Մ.ԱԿԱՆՔ

Վ. Աւագեան  
ՊՈՒՐԾ ՅԱՍՈՒՏ

**Կ**եանքով ու խանդով լեցուն Հ.Մ.-Լ.Մ.-ականին համար մահ կա՞յ... թէ ոչ՝ մահը պարզապէս այլ տեղ ապրելու ձեւ մըն է: Այլ տեղը մարդոց յիշատակներն են, յուշերը, հոգիներն ու միաբերը: Այլ տեղը նաեւ պատմութեան գիրքերն են, արխիւներն ու տեղեկագիրները, ուրկէ կարելի չէ ջնջել մէկու մըներկայութիւնը, գործն ու վաստակը:


Քանի՞-քանի՞ Հ.Մ.-Լ.Մ.-ականներ հրաժեշտ տուած են այս կեանքին, սակայն կ'ապրին այլ կեանքով՝ իրենց սիրելիներու յիշողութեան եւ ապրումներուն մէջ, իրենց միութեան անցեալի էջերուն եւ պատմութիւններուն մէջ:

Հ.Մ.-Լ.Մ.-ականներու այդ փաղանգին վերջերս միացաւ խորհրդ ու հաւատաւոր եղբայր մը՝ Հրանդ Պետրոսեանը, որ անակնկալորէն կեանքին հրաժեշտ տուած 28 Փետրուար 2025-ին, միութենական կէս դարու վաստակ մը ձգելով իր ետին:

Եղբ. Հրանդ ծնած էր 1941-ին, բազմանդամ ընտանիքի մը յարկին տակ, Գամիշիլի: Պատանեկութիւնը անցուցած է ծննդադարձին մէջ, ուր ստացած է նախակրթութիւնը: 1960-ական տարիներու Սուրբիոյ ծանօթ դէպքերուն բերումով, չորս եղբայրներուն եւ քրոջը հետ հաստատուած է Լիբանան: Փոքր տարիքէն եղած է միութենական, սկառուտ եւ մարզիկ: Երէց եղբայրը՝ Հանրածանօթ կրթական մշակ եւ ազգային-հասարական գործիչ Կարո Պետրոսեան 1973-1974 եղած է Հ.Մ.-Լ.Մ.-ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան անդամ:

Եղբ. Հրանդի միութենական գործունէկութիւնը առաւելաբար կապուած է Հ.Մ.-Լ.Մ.-ի Ժամանակակից մասնաճիւղին, որ հիմնված է 1974-ին: Ան մաս կազմած է միութեան երկրորդ վարչութեան (1975-1976), իսկ այնուհետեւ քսան տարի՝ վարչական գրեթէ բոլոր կազմերուն, իբրեւ պասքեթպոլի պատասխանատու (1977), հաշուապահ (1978 եւ 1979), ատենադպիր (1981), փոխ ատենապետ, գանձապահ (1982) եւ պատասխանատու այլ պաշտօններով: Մասնաճիւղին 40-ամեակին առիթով, 30 Նոյեմբեր 2014-ին, վարչութեան առաջարկով եւ Հ.Մ.-Լ.Մ.-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան որոշումով ան պարզեւարուած է Հ.Մ.-Լ.Մ.-ի «Մառայութեան» շքանշանով:

Հակառակ իր յառաջացեալ տարիքին, եղբ. Հրանդ Պետրոսեան քաջառողջ էր եւ յաճախ կը ճամբորդէր Գանատա՝ իր եղբայրներու զաւակներուն եւ քրոջը մօտ: Տակաւին նոր վերադարձած էր վերջին ճամբորդութենէն եւ կը պատրաստը էր Մայիսին դարձեալ ճամբորդել, երբ դարանակալ մահը զայն խլեց սիրելիներէն:



Եղբ. Հրանդ ընտանիք չէր կազմած, սակայն Հ.Մ.-Լ.Մ.-ական քոյրերով ու եղբայրներով ստեղծած էր ընտանեկան հարազատներու մեծ ընտանիք: Յարգուած եւ փնտուած էր բոլորէն: Իր խոնարհ, լուռ ու համեստ նկարագիրով օրինակելի միութենական էր, սերտօրէն կապուած հայ դիրքին ու մշակոյթին: Ան մնայուն ներկայութիւն էր լիբանանահայ ազգային-միութենական բոլոր ձեռնարկներուն: Որեւէ հանդիսութիւն չէր փախցներ: Կը քաջալերէր բոլորը:

Վերջին տարիներուն եղբ. Հրանդ մեծ աշխատանք տարաւ. Աղեկանդրիոյ Հ.Մ.-Լ.Մ.-«Կամք»ի նախկին անդամ՝ թորոնթյաբնակ եղբ. Գրիգոր Մալէզեանի լուսանկարներու հաւաքածոն միութեան թանգարանին ապահովելու համար: Բանակցեցաւ, համոզեց, գնացեկաւ եւ ի վերջոյ անձամբ, անձնական մեծ ճամպրուկով մը, հսկայական այդ արխիւը 2023-ին Գանատայէն Լիբանան փոխադրեց եւ Հ.Մ.-Լ.Մ.-ի Կերպոնական Վարչութեան յանձնեց՝ նուրիսական պարտականութիւն մը կատարած ըլլալու գումակութեամբ:

Պատուական մարդ էր եղբ. Հրանդ Պետրոսեան: Հանդարտաբարոյ, հեզ ու յարգալիր: Հակառակ միութենական իր բեղուն վաստակին, ան երեք չգտնեցաւ տիտղոսներու եւ պաշտօններու, դրուատիքի ու փառաբանանքի, ընդհակառակն՝ տեւաբար ան գնահատեց նորերն ու խոստմնալիցները՝ անոնց մէջ տեսնելով միութեան յուսալից ապագան:

Ծափ ու գնահատանք չփնտեց եղբ. Հրանդ Պետրոսեան: Գործեց ինքնագոհութեամբ եւ բարոյական բաւարարութեամբ, այն խոր համոզումով ու հաւատքով, որ ժամանակաւոր խանդավառութիւնները խափուսիկ են, կարեւորն ու մնայունը միութենական սկզբունքներու եւ արժէքներու գորգուրանքն է, Հ.Մ.-Լ.Մ.-ի հարազատ դիմագիծին պահպանումը եւ սերունդէ սերունդ փոխանցումը:

Պիտի փնտուենք եղբ. Հրանդը եւ նմանները, որովհետեւ անհետացող սերունդի մը լաւագոյն ներկայացուցիչներն էին անոնք:

Պիտի փնտուենք եւ իւրաքանչիւր կորուստի հետ պիտի տանք նոյն հարցումը. Հ.Մ.-Լ.Մ.-ականին համար մահ կա՞յ...

«ՄԱՐԶԻԿ»ԻՆ ԿՐ ՆՈՒԻՐԵՆ

Երուանդ եւ Լուսին Տէմիրճեաններու յիշատակին  
Տէր եւ տիկ. Վաչէ եւ Հուրի Տէմիրճեան (Սիտնի) 600 \$



## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



# ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 12-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՊԵՐԸ ԱՅՍ ԱՍԱՌ ՀԱՅԱՏԱՆԻ ՄԷՋ

**Ա**յս ամառ՝ 24 Յուլիսին 2 Օգոստոս 2025-ին, Երեւանի մէջ տեղի պիտի ունենան համա-Հ.Մ.Ը.Մ.Ական 12-րդ մարզախաղերը, որոնց պիտի մասնակցին միութեան 17 շրջաններէն եւ Թեհրանի ՀՄԱԿ-ն աւելի քան 750 մարզիկ-մարզիկուիհիներ, որոնք Հայաստան պիտի ժամանեն հետեւեալ շրջաններէն.- Արեւմտեան եւ Արեւելեան Մ. Նահանգներ, Հարաւային Ամերիկա (Արժանքին եւ Ուրուկուէյ), Գանատա, Աւստրալիա, Սթոքհոլմ, Լոնտոն, Փարիզ, Մարսել, Թիֆլիս, Երուսաղէմ, Քույթ, Գահիրէ, Պադտատ եւ Լիբանան: Երեւանի մէջ անոնց պիտի միանան Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Կ.ի, Արցախի եւ Թեհրանի Հայ Մշակութային Արարատ Կազմակերպութեան մարզիկ-մարզիկուիհիները:

Մարզախաղերը պիտի ընդգրկեն պասցեթպոլ, Ֆութպոլ, Ֆութսալ, Վոլիչապոլ, Վիճակ-վիոնկ, լող, Ճատրակ, թենիս եւ արլէթ: Չուզահեր, պիտի կատարուին յատուկ խնամքի կարօտ երեխաներու «Հրաշք»

մարզախաղերը, որոնց կրնան մասնակցիլ Սփիտոքէն եւ Հայաստանէն 12-22 տարեկան պատանիներ եւ երիտասարդներ: «Հրաշք»ի մարզախաղերը պիտի ըլլան աթլէթ, soccer shooting, basketball shooting, bocce եւ tag of war:

Մարզախաղերու մասնակիցները պիտի այցելեն Հայոց Ցեղասպանութեան ծիծենակաբերդի յուշարձան եւ Եռաբլուրի Նահատակաց պանթէն: Անոնք պիտի ունենան ընկերային երեկոներ եւ յաղթանակի ծաշկերոյթ-պարահանողներ:

Համա-Հ.Մ.Ը.Մ.Ական 12-րդ մարզախաղերու կազմակերպիչ յանձնախումբը ամխաներէ ի վեր լուսած է տեղագիտական աշխատանքի՝ յաջողութեամբ իրագործելու համար միութեան մարզիկներուն կողմէ մեծապէս սպասուած այս իրադարձութիւնը: Արդէն իսկ պատրաստուած է մարզախաղերուն լոկոն եւ յստակացած են մասնակից խումբերն ու մարզիկ-մարզիկուիհիները:

**7-NIGHT**  
European cruise  
July 13-20, 2026

FROM  
**\$2,999** PP  
ALL INCLUSIVE



HOMENETMEN  
RIVER CRUISE  
2026

Daily on-board entertainment including



Famous Singer  
**HAGOP  
MGRDICHIAN**



Comedian | Pianist  
**KEV  
ORKIAN**



**DJ RAMS**

BY AMAWATERWAYS



## ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 12-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՊԵՐԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ԱՌՅԱՆՑ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

**Հ**արավ, 15 Փետրուար 2025-ի երեկոյեան տեղի ունեցաւ Համա-Հ.Մ.Ը.Մ.Ական 12-րդ մարզախաղերու նախապատրաստութեան առաջին առցանց Հանդիպումը, որուն մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան եւ մարզախաղերու կազմակերպիչ յանձնախումբի անդամներ, ինչպէս նաև՝ շրջաններու մարզական պատուիրակութիւններու պատասխանատուներ:

Հանդիպումին ներկայացուեցան այս ամառ, 24 Յուլիսին 2 Օգոստոս 2025-ին, Երեւանի մէջ տեղի ունենալիք մարզախաղերը, մասնակից խումբերը եւ մարզախաղերու ընթացքին նախատեսուած ձեռնարկները:

# Հ.Մ.Ը.Մ.Ի ԲԵՂՈՒՆ ԱՍՎՈԼ

2025-ի ամառը բեղուն պիտի ըլլայ Հ.Մ.Ը.Մ.Ի համար: Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան կազմակերպութեամբ, 24 Յուլիսին 2 օգոստոս 2025-ին, Երեւանի մէջ տեղի պիտի ունենան համա-Հ.Մ.Ը.Ա.կան 12-րդ մարզախաղերը, որոնց պիտի մասնակցին աւելի քան 750 մարզիկ-մարզիկուիկներ (Տեսանություն Բ. կողքի հաղորդագրութիւնը):

Սկաուտական մարզին մէջ, Երոպայի ցամաքամասի սկաուտական յաջող բանակումէն ետք (13-20 Յուլիս 2024, Վեսսարո, Շուկտ), այս տարի Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան հովանաւորութեամբ եւ Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի եւ Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութիւններուն կազմակերպութեամբ տեղի պիտի ունենան Միջին Արեւելքի եւ ամերիկեան ու աւստրալական ցամաքամասի սկաուտական բանակումները:

Հ.Մ.Ը.Մ.Ի Միջին Արեւելքի ցամաքամասային բանակումը պիտի կատարուի 15-19 Յուլիս 2025-ին, Պասբինթայի մէջ, Մերն, Լիբանան: Նոյն օրերուն, 15-20 Յուլիսին, Գալիֆորնիոյ «Թեքույա» բանակավայրին մէջ տեղի պիտի ունենայ Հ.Մ.Ը.Մ.Ի ամերիկեան եւ աւստրալական ցամաքամասերու բանակումը, որուն պիտի մասնակցին Արեւմտեան եւ Արեւելեան Մ. Նահանգներու, Գանատայի, Հարաւային Ամերիկայի եւ Աւստրալիոյ սկաուտները:



## Մասնակցեցէ՛ք Հ.Մ.Ը.Մ.Ի Ցամաքամասային Բանակումին

Մասնակցող Շրջաններ՝ Արևելեան և Արևմտեան Միացեալ նահանգներ, Գանատա, Աստրալիա և Հարաւային Ամերիկա:



Թուական՝ Արի-Արենուշ՝  
15-20 Յուլիս, 2025  
Գայլիկ և Արծուիկ՝ (Արևմտեան Մ.ն.)  
17-20 Յուլիս, 2025



Մասնակցութեան սակ-Արի-Արենուշ՝ \$375 | Գայլիկ-Արծուիկ՝ \$225

 Վայր Հ.Մ.Ը.Մ.Ի Թեքույա Բանակավայր  
11707 Frontier Rd, Frazier Park, CA 93225

## Հ.Մ.Ը.Մ.Ի ՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՒ ՄԵԿՈՒՄԻ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐՈՒ ԱՌ-ՑԱՆՑ ԶՈՐՐՈՐԴ ԺՈՂՈՎԸ

Հարաբ, 22 Փետրվար 2025-ի երեկոյեան ժամը 9-ին (Պետքութիւն ժամով) տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Շրջանային եւ Մեկուսի շրջաններու ատենապետներու առցանց չորրորդ ժողովը, մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան բոլոր անդամներուն եւ միութեան 23 շրջաններու ատենապետներուն:

Եռամսեայ դրութեամբ գումարուող առցանց այս ժողովին բացումը կատարեց Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Խաչերեան: Ան շեշտեց նման ժողովներու կարեւորութիւնը՝ շրջանները իրազեկ դարձնելու համար համա-Հ.Մ.Ը.Մ.Ա.կան գլխաւոր ծրագիրներուն եւ աշխատանքներուն: Եղբ. Խաչերեան իր խօսքին մէջ անդրադարձաւ այս ամրան Հայաստանի մէջ տեղի ունենալիք համա-Հ.Մ.Ը.Ա.կան 12-րդ մարզախաղերուն եւ ամերիկեան ու միջին արեւելեան ցամաքամասերու սկաուտական բանակումներուն:



### Կայքէջը (Homenetmen.org):

Խօսք առաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ 2026-ի նաւապտոյտի ներկայացուցիչ եղբ. Միեր Դաւիթեան եւ նշեց նաւապտոյտի մասնակցութեան եւ արձանագրութեան գլխաւոր կետը:

Աւարտին, Կեդրոնական Վարչութեան ատենապետը պատասխանեց ժողովի մասնակից ատենապետներու հարցումներուն:

Ժողովը աւարտեցաւ Երեկոյեան ժամը 11.30-ին: